

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն	Էջ 3
2. Հավելվածներ	Էջ 3
3. Օգտագործվող հապավումները	Էջ 4
4. ՇՄԱԳ-ի կազմման իրավական հիմքերը	Էջ 4/8
5. Ռազմավարական Էկոլոգիական գնահատումը /ՌԷԳ/	Էջ 9
6. ՇՄԱՌԳ (ՌԷԳ) գործընթացի մասնակիցները	Էջ 10
7. Հիմնադրութային փաստաթղթի կազմման հիմքը և կատարված աշխատանքները	Էջ 11/13
8. Հիմնադրութային փաստաթղթի ՇՄԱՌԳ/ՌԷԳ/ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ	Էջ 13
9. Հիմնադրութային փաստաթղթով նախատեսված գործողությունները	Էջ 14
10. Այլընտրանքային տարբերակները	Էջ 15
11. Հիմնադրութային փաստաթղթի կարգավորման ենթակա տարածքը և շրջակա միջավայրը	Էջ 17
11.1 Անտառտնտեսության ընդհանուր տարածքի բաժանումն ըստ հիմնական նպատակային նշանակության և հողատեսքերի	Էջ 21
11.2 Անտառային հողերի փոփոխությունն ըստ հողատեսքերի	Էջ 23
11.3 Անտառի ներկա իրավիճակի վերլուծություն	Էջ 22
11.4 Կլիմա և օդային ավազան	Էջ 25
11.5 Երկրաբանական կառուցվածքը և ռելիեֆը	Էջ 29
11.6 Հողային ռեսուրսներ	Էջ 29
11.7 Ջրային ռեսուրսներ	Էջ 30
11.8 Կենսաբազմազանություն	Էջ 32
11.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ	Էջ 58
11.10 Բնության հատուկ պահպանվող տարածքներ	Էջ 62
11.11 Սոցիալական ոլորտ	Էջ 66
11.12 Տրանսպորտ և ճանապարհներ	Էջ 68
12. Անտառնկառավարման պլանով նախատեսվող գործողությունների ընդհանուր բնութագրերը, տեխնիկական և հեռանկարային լուծումները	Էջ 69
12.1 Բնափայտի մթերում	Էջ 70
12.2 Կողմնակի (ոչ բնափայտային) անտառօգտագործում	Էջ 71
12.3 Էկոհամակարգային ծառայությունները	Էջ 72
12.4 Սննդի տրամադրման ծառայություններ	Էջ 74
12.5 Անտառվերականգնման աշխատանքներ	Էջ 75
12.6 Հողային ռեսուրսներ	Էջ 82
12.7 Անտառի պահպանություն	Էջ 82
12.8 Անտառօգտագործման նախագծված ծավալներն ըստ հատման տեսակների	Էջ 84
12.9 Կենսաբազմազանություն	Էջ 84
12.10 Օդային ավազան և կլիմա	Էջ 84

12.11 Ջրային ռեսուրսներ-----	Էջ 85
12.12 Հողօգտագործություն և ճանապարհային ցանց-----	Էջ 85
12.13 Էկոլոգիա և շրջակա միջավայր-----	Էջ 86
12.14 Սոցիալական ծառայություններ և խնդիրներ-----	Էջ 86
13. Հիմնադրության փաստաթղթի դրույթների հնարավոր ազդեցությունը և նիսկերը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա-----	Էջ 87
13.1 Կենսաբազմազանություն-----	Էջ 87
13.2 Օդային ավազան և կլիմա-----	Էջ 89
13.3 Հողային ռեսուրսներ-----	Էջ 89
13.4 Ջրային ռեսուրսներ-----	Էջ 90
13.5 Սոցիալական ոլորտ-----	Էջ 90
13.6 Մարդու առողջություն և անվտանգություն-----	Էջ 90
13.7 Հիմնադրության փաստաթղթի ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա (գնահատման -, +, ++ ցուցանիշներով) ամփոփ աղյուսակ-----	Էջ 91
14. Հիմնադրության փաստաթղթի դրույթների իրականացման դեպքում վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր-----	Էջ 93
14.1 Անտառտնտեսության կառավարում-----	Էջ 93
14.2 Անտառածեցում և անտառվերականգնում-----	Էջ 94
14.3 Անտառմշակույթների հիմնում-----	Էջ 95
14.4 Անտառապաշտպանություն -----	Էջ 95
14.5 Անտառապահպանություն-----	Էջ 96
14.6 Անտառի կենսաբազմազանության պահպանություն-----	Էջ 96
14.7 Օդային ավազան և կլիմա-----	Էջ 98
14.8 Հողային ռեսուրսներ-----	Էջ 98
14.9 Ջրային ռեսուրսներ-----	Էջ 98
14.10 Էկոլոգիա և շրջակա միջավայր-----	Էջ 99
14.11 Մարդու առողջություն և անվտանգություն-----	Էջ 99
14.12 Սոցիալական-----	Էջ 99
14.13 Հողօգտագործություն և ճանապարհային ցանց-----	Էջ 100
15. Գիտական ուսումնասիրություններ և Մոնիթորինգ -----	Էջ 101
16. Բնապահպանական կառավարման պլան -----	Էջ 103
17. Մոնիթորինգի (մշտադիտարկում) և հետնախագծային վերլուծության ծրագիրը -----	Էջ 121
18. Եզրահանգում-----	Էջ 134
Օգտագործված գրականության ցանկ-----	Էջ 135

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ տեղեկատվություն

Հայտ	«Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի Սիսիանի անտառտնտեսության 2021-2030թթ. կառավարման պլանի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն(ՇՄԱՌԳ հաշվետվություն)
Ձեռնարկող	«ԳեոՄԵՎ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Ք.Երևան, Արտաշիսյան 43/36
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն`	Սիսիանի անտառտնտեսություն
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	095 51 35 25, armankandaryan@gmail.com
Պատվիրատու	Շրջակա միջավայրի նախարարություն` «Հայանտառ» ՊՈԱԿ Անտառային կոմիտե
Հիմնադրության փաստաթղթով նախատեսված վարչական տարածք	Սյունիքի մարզ, հիմնականում Գորայք ու Սիսիան խոշորացված համայնքներ:
Կառավարման պլանի մշակող	«ԳեոՄԵՎ» ՍՊԸ
Գնահատման հաշվետվության նախագծող	«Նովալ»ՍՊԸ
Հայտի նախագծող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Բրյուսովի 6 Հեռ.(012)21-10-01, (093)39-77-60 <a href="mailto:noval-llc@outlook.com">noval-llc@outlook.com</a>

## 2. Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ճ Ն Ե Ր

**Հավելված 1.** Տեխնիկական առաջադրանք

**Հավելված 2.** Ամփոփ աղյուսակ

**Հավելված 3.** Բնության և պատմամշակութային հուշարձանների տեղադիրքը

**Հավելված 4.** «Անտառկառավարման պլանների կազմման» աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր

**Չավելված 5.** Արձանագրություն, մասնակիցների ցանկ, տեսաձայնագրություն  
(ներկայացվում է Էլեկտրոնային կրիչով)

### **3. Օգտագործվող հապավումները**

**ՇՍ**Նախարարություն՝ շրջակա միջավայրի նախարարություն  
**ՇՄԱԳ՝** Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում  
**ՇՄԱՌԳ՝** Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատում  
**ԲՀՊՏ՝** Բնության հատուկ պահպանվող տարածք  
**ԲԲԱԱ՝** Բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառներ  
**ՍՊԸ՝** Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն  
**ՊՈԱԿ՝** Պետական ոչ առևտրային կազմակերպություն  
**ԱԻՆ՝** Արտակարգ իրավիճակների նախարարություն  
**ԱՆ՝** Առողջապահության նախարարություն  
**СОЛИ՝** (система обработки лесоустроительной информации)  
**ԱՏՀ՝** աշխարհագրական տեղեկատվական համակարգ

### **4. ՇՄԱԳ-ի կազմման իրավական հիմքերը**

**4.1 «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (2014) (այսուհետ Օրենք)**-կարգավորում է հիմնադրության փաստաթղթերի(ՇՄԱՌԳ) և նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների գնահատումները(ՇՄԱԳ): Կարգավորում է հիմնադրության փաստաթղթի նախնական գնահատման հայտի և շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Համաձայն օրենքի լիազոր մարմինը՝ շրջակա միջավայրի նախարարությունը իրականացում է հիմնադրության փաստաթղթի և նախատեսվող գործունեության փորձաքննություն, տրամադրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:

**4.2 ՀՀ Անտառային օրենսգիրք**-կարգավորում է Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային

հողերի հետ կապված հարաբերությունները: Հայաստանի Հանրապետությունում անտառները, անկախ սեփականության ձևից, ըստ իրենց հիմնական նպատակային նշանակության՝ դասակարգվում են՝ պաշտպանական, հատուկ և արտադրական նշանակության:

**4.3 ՀՀ Հողային օրենսգիրքը (2001 թ.)**-սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպական իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

**4.4 «ՀՀ ջրային օրենսգիրք» (2002)** - նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է: Սահմանում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակության պարտավորությունները, ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի մշակման կարգը, պետական ջրային կադաստրի և մոնիթորինգի, ջրային ռեսուրսների օգտագործման թույլտվություն տրամադրող համակարգերի ստեղծումը, անդրսահմանային ջրային ռեսուրսների օգտագործումը, ջրի որակի չափանիշները, հիդրոլոգիական կառուցվածքների շահագործման անվտանգության խնդիրները, ջրային ռեսուրսների պահպանություն և պետական վերահսկողությունը: Ապահովում է հանրության համար համապատասխան տեղեկատվության մատչելիությունը:

**4.5 «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998)**-սահմանում և կարգավորում է իրավական և քաղաքականության հիմքերը ՀՀ տարածքում պատմամշակութային անշարժ հուշարձանների, պատմական միջավայրի պահպանության և օգտագործման համար, կանոնակարգում է պահպանության և օգտագործման իրավահարաբերությունները:

**4.6 «Բուսական աշխարհի մասին» (1999) ՀՀ օրենք**-նպատակը բուսական աշխարհի, կենսաբազմազանության պահպանության ապահովումն է: Կարգավորում է ՀՀ բույսերի պահպանության պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է նաև էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:

**4.7 «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000)**–նպատակը կենդանական աշխարհի պահպանության ապահովումն է: Կարգավորում է կենդանական աշխարհի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության և կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցության քաղաքականությունը, սահմանում է էնդեմիկ և վտանգված տեսակների, մոնիթորինգի և գնահատման ընթացակարգերը:

**4.8 «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ( 1994թ.)**– կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական

հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգերը և այլն:

**4.9 «Հրդեհային անվտանգության մասին» ՀՀ օրենքը (2001թ.)** կարգավորում է հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության մշակման և իրականացման հիմնական ուղղությունների, հրդեհային անվտանգության ապահովման բնագավառում կարգավորման սկզբունքների և դրանց իրականացման մեխանիզմների սահմանումը, Հայաստանի Հանրապետության բնակչությանը որակյալ և հուսալի հրդեհային պահպանության ապահովումը:

### **ՀՀ կառավարության որոշումներ.**

**4.10 «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72-Ն ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի որոշումները** - սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, անորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:

**4.11 «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.07.2014թ. N 781-Ն որոշումը**-սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

**4.12 ՀՀ կառավարության նոյեմբերի 2017 թվականի N 1404-Ն որոշում**- «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՅՊԱՆՄԱՆՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅՊԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 1026-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:

**4.13 ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի N 1396-Ն որոշում**- «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1622-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 286-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ »:

**4.14 «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» 2008 թվականի օգոստոսի 14-ի թիվ 967-Ն ՀՀ կառավարության որոշում**-սահմանում է ՀՀ բնության հուշարձանների ցանկը՝ համաձայն որոշման հավելվածի:

**4.15 «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014թ. N1059-Ա որոշում** - հաստատում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը՝ համաձայն N1 հավելվածի, Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության և օգտագործման բնագավառի 2014-2020 թվականների պետական ծրագրի միջոցառումները՝ համաձայն N 2 հավելվածի:

**4.16 «Հայաստանի Հանրապետության կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության եվ օգտագործման բնագավառներում ռազմավարությանը եվ գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 10.12.2015թ. նիստի N54 և «Հայաստանի Հանրապետությունում անապատացման դեմ պայքարի ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» կառավարության 27.05.2015 նիստի N23 արձանագրային որոշումները, ներառյալ ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները:**

**4.17 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 21 հուլիսի 2005 թվականի N 1232-Ն ՀՀ կառավարության որոշում**-սահմանում է Հայաստանի Հանրապետության անտառի ազգային ծրագրի հիմնական նպատակը՝ անտառային Էկոհամակարգերի պահպանությունը, դեգրադացված անտառային Էկոհամակարգերի վերականգնումը, անտառային պաշարների շարունակական և արդյունավետ օգտագործումը և անտառների կայուն կառավարման ռազմավարության ապահովումը:

**4.18 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏԱՌԻ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԲԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀՀ կառավարության 2004 թվականի սեպտեմբերի 30-ի N 38 նիստի արձանագրային որոշում:**

**4.19 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և անտառային ոլորտի կարգավորման միջազգային համաձայնագրերը**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ			
հհ	Անվանում, վայր, վավերացման ամսաթիվ	Հաստատման ամսաթիվ	Վավեր է սկսած՝
1	Սանկտ Պետերբուրգի հռչակագիրը Եվրոպայում և Հյուսիսային Ասիայում անտառային օրենքների կիրարկման և կառավարման վերաբերյալ (Սանկտ Պետերբուրգ, 2005)	Նոյեմբերի 25 2005  (միացյալ)	–

2	Բույսերի պահպանման մասին միջազգային կոնվենցիա, (ՅՈՒՆԵՍԿՕ, 1952)	Հունիսի 9, 2006թ.	Ապրիլի 3, 1952թ.
3	Կենսաբազմազանության մասին ՄԱԿ-ի կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992)	Մարտի 31, 1993	Ապրիլի 14, 1993
4	Կենսաբանական անվտանգության մասին կարթագենյան արձանագրություն	Մարտի 16, 2004	Սեպտեմբերի 11, 2003
5	ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիա կլիմայի փոփոխության մասին (Նյու Յորք, 1992)	Մարտի 29, 1993	Մարտի 21, 1994
6	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997) Փարիզի համաձայնագիր (Նյու Յորք, 2016)	Դեկտեմբերի 26, 2002 Սեպտեմբերի 20, 2016	Փետրվարի 16, 2005 Ապրիլի 22, 2018
7	Մեծ տարածությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին կոնվենցիա (Ժնև, 1979)	Մայիսի 14, 1996	Փետրվարի 21, 1997
8	«Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման դիտարկան և գնահատման համատեղ ծրագրի (EMEP) երկարաժամկետ ֆինանսավորման մասին» արձանագրություն	Վավերացման գործընթացում է	
9	Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին կոնվենցիա (Էսպո, 1991)	Մայիսի 14, 1996	Սեպտեմբերի 10, 1997
10	ՄԱԿ-ի անապատացման դեմ պայքարի կոնվենցիա (Փարիզ, 1994)	Հունիսի 23, 1997	Սեպտեմբերի 30, 1997
11	Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության	Մայիսի 14, 2001	Օգոստոսի 1, 2001



	մասնակցության և արդարադատության մատչելիության մասին (Օրիուս, 1998)		
12	«Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն, 1979)	Փետրվարի 26, 2008	Օգոստոսի 1, 2008
13	ՄԱԿ-ի «Միջազգային առևտրում առանձին վտանգավոր քիմիական նյութերի և պեստիցիդների վերաբերյալ՝ Նախնական հիմնավորված համաձայնության ընթացակարգի մասին» Ռոտերդամի կոնվենցիա	Սեպտեմբերի 10. 1998թ.	

## 5. Ռազմավարական Էկոլոգիական գնահատումը (ՌԷԳ)

Ռազմավարական Էկոլոգիական գնահատումը (ՌԷԳ)-ը համակարգված ու պլանավորված գործընթաց է, որի նպատակն է վերլուծել առաջարկվող նախագծերի, ծրագրերի ու ռազմավարական այլ նախաձեռնությունների բնապահպանական հետևանքները և հետազոտության արդյունքները դարձնել որոշումների կայացման հիմք: Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) կոնվենցիայի ՄԱԿ-ի ԵՏՅՌԷԳ արձանագրությունը անդրսահմանային համատեքստում ընդունվել է Կիևում 2003թ.-ին: Այն ուժի մեջ է մտել 2010թ.-ին, իսկ 2015թ.-ի ապրիլի վերջին 26 անդամ ուներ, այդ թվում՝ Եվրոպական Միությունը որպես տարածաշրջանային կազմակերպություն: Արձանագրությունը անդամ երկրներից պահանջում է ՌԷԳ-ն ինտեգրել իրենց զարգացման պլաններում՝ այսպիսով հիմք դնել տնտեսության կայուն զարգացմանը:

ՌԷԳ զեկույցի թիրախում է հնարավոր բնապահպանական, այդ թվում առողջապահական հետևանքների գնահատումը, ինչը որոշում է բնապահպանական զեկույցի և դրա նախապատրաստման, հանրային քննարկումների և խորհրդակցությունների շրջանակը, ինչպես նաև բնապահպանական զեկույցի ու հանրային քննարկումների և խորհրդակցությունների արդյունքների ներառումը պլանում կամ ծրագրում (հոդված 2, պարբերություն 6): ՌԷԳ-ի հիմնական նպատակն է երաշխավորել, որ բնապահպանական նկատառումները ռազմավարական որոշումների կայացման մաս են՝ հանուն շրջակա միջավայրի շահերից բխող ու տնտեսության կայուն զարգացման: Մասնավորապես ՌԷԳ-ը թույլ է տալիս պլանների/ծրագրերի համար պատասխանատուներին, ինչպես նաև որոշումներ կայացնողներին հաշվի առնել:

- Հիմնական բնապահպանական միտումները, ներուժը և սահմանափակումները, որոնք կարող են ազդել կամ որոնց վրա կարող է ազդել պլանը կամ ծրագիրը:
- Պլանի/ ծրագրի համար վճռորոշ բնապահպանական խնդիրներն ու ցուցանիշները:

- Առաջարկվող տարբերակների հնարավոր բնապահպանական հետևանքներն ու պլանի / ծրագրի իրականացումը:
- Բացասական ազդեցությունը կանխելուն, նվազեցնելուն կամ մեղմելուն, ինչպես նաև դրական ազդեցությունը մեծացնելուն ուղղված միջոցառումները:
- Համապատասխան պատասխանատուների, հանրության և, նպատակահարմարության դեպքում՝ հավանական ազդեցություն կրող պետությունների տեսակետները և ստացված տեղեկատվությունը:

Համաձայն Օրենքի հանրությունը ծանուցվում է, և հանրային քննարկումներ են իրականացվում գնահատման ու փորձաքննության բոլոր փուլերում՝ ամենավաղ փուլից մինչև որոշումների կայացման փուլ: Օրենսդրության համաձայն, մարզային կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինները՝ Փորձաքննության կենտրոնի ու ձեռնարկողի օժանդակությամբ պատասխանատու են հանրային ծանուցման և քննարկումների իրականացման համար: Հիմնադրության փաստաթղթի ընդունումը արգելվում է առանց շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության դրական եզրակացության: Սա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունում ՌԷԳ-ի իրականացումը պարտադիր է:

Միսիանի անտառտնտեսության 2021-2030 թթ. կառավարման պլանի ՌԷԳ գործընթացը իրականացվել է համաձայն ՀՀ օրենսդրության:

## 6. ՇՄԱՌԳ (ՌԷԳ) գործընթացի մասնակիցներ

**1. Ձեռնարկող-** Հիմնադրության փաստաթուղթը մշակվել է «Գեոմեփ» ՍՊԸ-ի կողմից: Նախագծման համար հիմք է հանդիսացել ՀՀ ՇՄՆ Անտառային կոմիտեի և «Գեոմեփ» սահմանափակ պատասխանատվության ընկերության միջև 14. 04. 2020 թ. կնքված N ՇՄՆԱԿ-ԲՄԱՇՁԲ-20/1-1 պայմանագիրը՝ «Հայաստան» ՊՈԱԿ-ի «Միսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառների և անտառային հողերի անտառաշինական նախագծերի (անտառակառավարման պլանների) նախագծահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով:

«Գեոմեփ» սահմանափակ պատասխանատվության ընկերության իրավաբանական հասցեն՝ ք.Երևան, Արտաշիսյան 43/36:

**2. ՀՀ ՇՄՆ նախարարություն-** պատասխանատու է բնական ռեսուրսների պահպանության, կայուն օգտագործման և վերարտադրության, ինչպես նաև շրջակա միջավայրի բարելավման համար:

**3. ՀՀ Առողջապահության նախարարություն-** պատասխանատու է մարդու առողջության և անվտանգության ապահովման համար:

**4. ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարություն (ՀՀ ԱԻՆ)-** արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության պաշտպանություն, ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականության մշակում և իրագործում:

## 7. Հիմնադրութային փաստաթղթի կազմման հիմքը և կատարված աշխատանքները

Հիմնադրութային փաստաթղթի մշակման համար հիմք է հանդիսացել ՀՀ ՇՄՆ Անտառային կոմիտեի և «ԳեոմԷփ» սահմանափակ պատասխանատվության ընկերության միջև 14. 04. 2020թ. կնքված N ՇՄՆԱԿ-ԲՄԱՇՁԲ-20/1-1 պայմանագիրը՝ «Հայաստան» ՊՈԱԿ-ի «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի անտառների և անտառային հողերի անտառաշինական նախագծերի (անտառակառավարման պլանների) նախագծահետազոտական աշխատանքների իրականացման նպատակով:

Համաձայն ծրագրի իրականացման պայմանագրի և տեխնիկական բնութագրի իրականացվել է.

- Սիսիանի գործող անտառակառավարման պլանների գույքագրման և քարտեզագրական նյութերի ուսումնասիրություններ,

- կլիմայի, լանդշաֆտի, ռելիեֆի և անտառային հողերի տիպերի բնութագրում,

- անտառտնտեսության տարածքում գետերի քանակի և ձգվածության, ջրահավաք ավազանի, լճերի և գրունտային ջրերի մակարդակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,

- ծրագրի տարածքում բնակչության զբաղվածության, անտառանյութի տեղական սպառման շուկաների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,

- ոչ բնափայտային անտառային պաշարների օգտագործման ուսումնասիրություն,

- նախորդ անտառաշինության պլանշետների, անտառծառուտային պլանների և քարտեզ սխեմաների ձեռք բերում և ուսումնասիրություն,

- անտառտնտեսության և հարակից հողօգտագործողների սահմանների վերաբերյալ քարտեզների ուսումնասիրություն,

- անտառներմային տեղամասերի, պլանտացիաների և տնկարանային տնտեսության առկայության և վիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում,

Անտառագույքագրման մեթոդների և դաշտային գործողությունների ուսուցման նպատակով ծրագրի հիմնական և օժանդակ (տեխնիկական) անձնակազմի համար կազմակերպվել է գործնական ուսուցում:

Իրականացվել են նաև կենսաբազմազանության գույքագրման և գնահատման, բարձրարժեք բնապահպանական անտառների որոշման և քարտեզագրման, ինչպես նաև Էկոհամակարգային ծառայությունների գնահատման աշխատանքներ:

Դաշտային գույքագրման արդյունքները մշակվել են СОЛИ (система обработки лесоустроительной информации) համակարգչային ծրագրի հենքի վրա՝ արդիականացված СОЛИ-3 ծրագրային ապահովմամբ:

Քարտեզագրական նյութերը մշակվել են օգտագործելով ArcGIS ծրագիրն, որը հնարավորություն է ընձեռնել դաշտային գույքագրման նյութերի վրա ստեղծել բազմանպատակային ԱՏՀ տվյալների բազա, ինչի շնորհիվ էլ պատրաստվել են անտառծառուտային, միջոցառումների պլաններն ու թեմատիկ քարտեզները: Ստեղծված

թվայնացված հատվածային քարտեզագրական բազան լրացվում է ինֆորմացիայով՝ թեմատիկ քարտեզների համար հատվածների բնութագրերի հետ EXCEL-ի աղյուսակների կցման ճանապարհով: Ընդ որում, թեմատիկ քարտեզներ հնարավոր է կազմել ցանկացած ցուցանիշի համար, որն առկա է СОЛН անտառային հատվածային բնութագրերի բազայում: Տվյալների քարտեզագրական բազան ունի հատվածային բնութագրեր, որոնք օգտագործվել են թեմատիկ քարտեզների կազմման համար:

Գույքագրման և անտառտնտեսության հարակից համայնքների վարչական սահմաններում անտառային հողերի կադաստրային քարտեզագրական նյութերի համադրությունն ի հայտ է բերել անտառային հողերի սահմանների և մակերեսների անհամապատասխանություններ, դրանք ճշտվել ու քարտեզները համաձայնեցվել են համայնքների և անտառտնտեսության հետ:

Համաձայն Հայաստանի անտառներում անտառշինության և անտառկառավարման պլանների պատրաստման հրահանգի (2005թ), սահմանված կարգով իրականացվել են տեխնիկական և անտառշինական խորհրդակցություններ:

1-ին տեխնիկական խորհրդակցությունը կազմակերպվել է Սիսիանի անտառտնտեսության կողմից 04.05.2020թ. անտառտնտեսության գրասենյակում, քննարկվել են նախապատրաստական փուլի աշխատանքները, որի արդյունքում կայացվել է համապատասխան որոշումներ:

Անտառշինական առաջին խորհրդակցությունը ևս կազմակերպվել է Սիսիանի անտառտնտեսության գրասենյակում 03.06.2020թ: Քննարկվել են անտառկառավարման պլանի պատրաստման դաշտային փուլում իրականացվող գործողությունները, խնդիրները, անտառտնտեսության և անտառշինական աշխատանքները իրականացնող կազմակերպության միջև համագործակցությունը ու այլ հարցեր:

10.07.2020թ. անց է կացվել երկրորդ տեխնիկական խորհրդակցությունը, որի ընթացքում քննարկվել են անտառշինական դաշտային աշխատանքների կատարման արդյունքները, անտառների վիճակի և անտառտնտեսության վարման նախնական վերլուծությունը, տեղամասերի ցանկը, հիմնական անտառտնտեսական միջոցառումները և այլ խնդիրներ:

Երկրորդ անտառշինական խորհրդակցությունը իրականացվել է անտառկառավարման ծրագրի հիմնական բաժինների մշակման ավարտից հետո 01.12.2020թ., որի ընթացքում քննարկվել են՝

- Անտառային ֆոնդի գնահատման հիմնական ցուցանիշները, առկա փոփոխությունների բնույթը և պատճառները նախորդ ժամանակաշրջանի համար,
- անտառային տնտեսության վարման վերլուծության արդյունքները,
- անտառօգտագործման ծավալները, վայրը, իրականացման եղանակները և մեթոդները, հատումների տնտեսական և անտառագիտական և բնապահպանական հիմնավորումները,
- անտառօգտագործման և անտառվերականգնման միջոցառումների ծավալները,
- անտառսերմնային տնկարանային տնտեսության կազմակերպումը,
- անտառների հակահրդեհային և անտառպաշտպանական միջոցառումների ծրագիրը,
- կողմնարդյունքի (ոչ բնափայտային հումքի պաշարների) գնահատումը:

## **Սիսիանի անտառտնտեսության անտառների քարտեզագրման համար հիմք են հանդիսացել.**

- Սիսիանի անտառտնտեսության երկու անտառպետությունների նախորդ անտառաշինության քարտեզագրական կյուրերը,
- 1:25000 մասշտաբի տեղագրական քարտեզները,
- ծրագրի տարածքի արբանյակային պատկերները,
- համայնքների հողային ֆոնդի, սեփականության սուբյեկտների կադաստրային քարտեզները:

Վերը նշված կյուրերը տեղափոխվել են աշխարհագրական տեղեկատվական համակարգ: Կատարվել է դրանց կապակցում աշխարհագրական ցանցին՝ WGS 84 կորդինատային համակարգում և իրականացվել է թվայնացում՝ անհրաժեշտ տվյալների բազայի ստեղծմամբ: Հավելված 3:

Համայնքների կադաստրային քարտեզներից և 2008թ անտառաշինական պլան-քարտեզներից վերցվել են անտառային տարածքների ուրվագծերը: Տեղագրական քարտեզներից վերցվել են գետային և ճանապարհային ցանցերը, բնակավայրերը, ծովի մակերևույթից ունեցած բարձրության իզոգծերը (հորիզոնականներ) և այլ տվյալներ, որոնց միջոցով ճշտվել է անտառային տարածքների որոշ սահմաններ, օրինակ՝ քառակուսիների միջև սահմանները, որոնք անցնում են գետերով կամ ջրաբաժաններով:

Արբանյակային նկարների օգնությամբ կատարվել է անտառային տարածքի նախնական բաժանում՝ ըստ հատվածների: Ճշտվել են նաև ճանապարհային և գետային ցանցի որոշ տվյալներ, ինչպես նաև անտառային տարածքի արտաքին և ներքին սահմանները:

Համայնքների վարչական տարածքներում անտառային հողերի գույքագրման և գնահատման արդյունքներով բացահայտվել են համայնքների կադաստրային քարտեզներում անտառային հողատեսքերի անճշտությունները, որոնք կազմակերպության կողմից քարտեզագրվել և ներկայացվել են շահագրգիռ կողմերին՝ անտառտնտեսությանը և համայնքներին:

Աշխատանքների իրականացման համար ձեռք են բերվել բարձր լուծաչափի արբանյակային նկարներ, իսկ թիրախային, վիճելի տարածքներում իրականացվել են օդալուսանկարահանումներ՝ անօդաչու թռչող սարքի (դրոն) միջոցով: Օգտագործվել են նաև ArcGIS Basemap WorldImagery առցանց բաց աղբյուրի արբանյակային նկարները:

## **8. Հիմնադրուբային փաստաթղթի ՇՄԱՌԳ (ՌԷԳ) և փորձաքննական գործընթացների վերաբերյալ**

Հայաստանում շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատումն իրականացվում է՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի օրենքի (այսուհետ Օրենք) համաձայն:

Համաձայն Օրենքի՝ նախնական գնահատման և ռազմավարական գնահատման ենթակա է հիմնադրութային փաստաթուղթը: Հիմնադրութային փաստաթուղթը՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունն ունեցող փաստաթղթի (քաղաքականություն, ռազմավարություն, հայեցակարգ, ուրվագիծ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) նախագիծ է:

Ռազմավարական գնահատման և փորձաքննության ենթակա են սոցիալ-տնտեսական, էներգետիկայի, քաղաքաշինության, տրանսպորտի, կապի, գյուղատնտեսության, ընդերքօգտագործման, արդյունաբերական ճյուղերի, առողջապահության, բնապահպանության, ռեկրեացիայի, սպասարկման, **անտառտնտեսության**, թափոնների օգտագործման, ջրային տնտեսության բնագավառներին վերաբերող հիմնադրութային փաստաթղթերը: Համաձայն օրենքի շրջակա միջավայրի նախարարությունը նախ իրականացնում է հիմնադրութային փաստաթղթի նախնական գնահատման հայտի փորձաքննություն, որի հիման վրա տրամադրում է տեխնիկական առաջադրանք, այնուհետև նախարարության կողմից փորձաքննվում է տեխնիկական առաջադրանքի համապատասխան կազմված ՇՄԱՌԳ հաշվետվությունը և կից ներկայացված ծրագրային փաստաթղթերը և տրամադրվում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվությունը (ՇՄԱՌԳ հաշվետվություն) կազմվել է Օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի և տեխնիկական առաջադրանքին համապատասխան: Հավելված 1:

Օրենքի և 2014թ.նոյեմբերի 19-ի ՀՀ կառավարության հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը հաստատելու մասին N1325 որոշման 3-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Սիսիան քաղաքում կայացվել է հիմնադրութային փաստաթղթի վերաբերյալ հանրային քննարկումներ, որի վերաբերյալ ազդակիր համայնքը և հանրությունը դրական է արձագանքել:

## **9. Հիմնադրութային փաստաթղթով նախատեսված գործողությունները**

Համաձայն անտառային օրենսգրքի՝ անտառաշինական նախագիծը (անտառակառավարման պլան) անտառաշինության արդյունքում մշակված և անտառային տնտեսության վարման նպատակով հաստատված տեխնիկական փաստաթուղթ է: Անտառակառավարման պլանների նպատակն է անտառաշինության ընթացքում անտառային տնտեսության վարումը: Անտառակառավարման պլաններում ներկայացվում է անցած ժամանակաշրջանի համար անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման ամբողջական գնահատականը, ինչպես նաև անտառային տնտեսության վարման առաջիկա 10 տարիներին իրականացվելիք միջոցառումները:

Անտառաշինական նախագծերը պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատվելուց հետո համարվում են անտառային տնտեսության վարման ընթացիկ և հեռանկարային պլանավորման պարտադիր տեխնիկական փաստաթղթեր:

«Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2021-2030թթ. կառավարման պլանի նպատակն է «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի կազմում ընդգրկված երկու՝ Շաղատի 2817,0 հա և Սիսիանի՝ 3129,0 հա մակերեսով, ընդամենը՝ 5946,0 հա անտառապետությունների համար նախատեսել կայուն անտառտնտեսության վարում և կառավարում՝ առաջիկա 10 տարիների համար:

Անտառային հողերի արտադրողականության բարձրացման նպատակով անտառաշինությամբ նախատեսվում են հետևյալ միջոցառումները:

- Անտառաշինության բազաների հիմնում սելեկցիոն հիմքի վրա:
- Անտառային մշակույթների հիմնում:
- Ցածր լրիվության ծառուտների արտադրողականության բարձրացում:
- Բնական վերածին օժանդակող համալիր միջոցառումներ:
- Խնամքի հատումների իրականացում:
- Անտառապահպանական և անտառապաշտպանական աշխատանքների բարելավում, ընտրովի սանիտարական հատումներ:

Սելեկցիոն հիմքի վրա անտառաշինության բազաների հիմնումը նախատեսվում է բարձր ցանքսային հատկություններով և արժեքավոր ժառանգական հատկանիշներով օժտված սերմերի ստացման համար:

Բարձրարժեք և բարձր արտադրողական անտառային տեսակների հիմնման միջոցով ընդլայնվում է անտառածածկ մակերեսը, վերականգնվում են քայքայված անտառները, ծառուտները ձևավորվում են ցանկալի ուղղությամբ, նպաստելով կենսաբազմազանության հաստատմանը:

Խնամքի հատումները օժանդակում են ծառուտների նպատակային ձևավորմանը, մասնավորապես տեսակային կազմի բարելավմանը, որակական և տարածքային տեղաբաշխմանը, անտառի հողապաշտպան, ջրապաշտպան, սանիտարա-հիգիենիկ, էսթետիկական հատկությունների բարելավմանը և անտառների արդյունավետության բարձրացմանը:

Ընտրողական սանիտարական հատումները հնարավորություն են ընձեռում բարելավելու անտառի սանիտարական վիճակը, պահպանելու անտառածածկ մակերեսը ստուգիչ շրջանում, բարելավելու անտառային բուսականության տեսակային կազմը և ապահովելու ծառուտների լրացուցիչ աճ:

## **10. Այլընտրանքային տարբերակների նկարագիրը, ներառյալ՝ նախատեսվող գործունեությունից հրաժարման (զրոյական) տարբերակը, տարբերակների վերլուծության արդյունքում ընտրված տարբերակի հիմնավորումը:**

ՇՄԱՌԳ-ի շրջանակներում դիտարկվել է հիմնադրության փաստաթղթի իրականացման այլընտրանքային տարբերակները, ինչպես նաև ընտրված տարբերակի հիմնավորումը:

**Չրոյական տարբերակ-** նշանակում է հիմնադրության փաստաթղթի դրույթների չիրականացում, ինչը ենթադրում է հետևյալ բացասական ազդեցությունները.

- Սելեկցիոն հիմքի վրա անտառսերմնային բազաները չհիմնելու դեպքում բարձր ցանքսային հատկություններով և արժեքավոր ժառանգական հատկանիշներով օժտված սերմեր չեն ստացվի, և կշարունակեն գոյատևել առավել ցածրարժեք մշակաբույսերը:

- Բարձրարժեք և բարձր արտադրողական անտառային տեսակների չհիմնելու դեպքում անտառածածկ մակերեսը չի ընդլայնվի, քայքայված անտառները չեն վերականգնվի, ծառուտները ճիշտ ուղղությամբ չեն ձևավորվի՝ նպաստելով կենսաբազմազանության հաստատմանը:

- Խնամքի հատումներ չեն իրականացվի, ինչը օժանդակում է ծառուտների նպատակային ձևավորմանը, մասնավորապես տեսակային կազմի բարելավմանը, որակական և տարածքային տեղաբաշխմանը, անտառի հողապաշտպան, ջրապաշտպան, սանիտարա-հիգիենիկ, էսթետիկական հատկությունների բարելավմանը և անտառների արդյունավետության բարձրացմանը:

- Ընտրողական սանիտարական հատումներ չեն կատարվի, ինչը հնարավորություն կընձեռի բարելավելու անտառի սանիտարական վիճակը, պահպանելու անտառածածկ մակերեսը ստուգիչ շրջանում, բարելավելու անտառային բուսականության տեսակային կազմը և ապահովելու ծառուտների լրացուցիչ աճ:

Չրոյական տարբերակի իրականացումը կհակասի նաև անտառային Օրենսգրքին՝ համաձայն որի անտառաշինական նախագիծը (անտառակառավարման պլան) անտառաշինության արդյունքում մշակված և անտառային տնտեսության վարման նպատակով հաստատված տեխնիկական փաստաթուղթ է: Անտառակառավարման պլանների նպատակն է անտառաշինության ընթացքում անտառային տնտեսության վարումը: Անտառակառավարման պլաններում ներկայացվում է անցած ժամանակաշրջանի համար անտառային տնտեսության վարման և անտառօգտագործման ամբողջական գնահատականը, ինչպես նաև անտառային տնտեսության վարման առաջիկա 10 տարիներին իրականացվելիք միջոցառումները:



**Անտառկառավարման ընտրված տարբերակը** համապատասխանում է Անտառային օրենսգրքի պահանջներին, ուստի այլ այլընտրանքներ չեն դիտարկվում: Անտառաշինական նախագծերը պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատվելուց հետո համարվում են անտառային տնտեսության վարման ընթացիկ և հեռանկարային պլանավորման պարտադիր տեխնիկական փաստաթղթեր:


«Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2021-2030թթ. կառավարման պլանի նպատակն է «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի կազմում ընդգրկված երկու՝ Շաղատի 2817,0 հա և Սիսիանի՝ 3129,0 հա մակերեսով, ընդամենը՝ 5946,0 հա անտառապետությունների համար նախատեսել կայուն անտառտնտեսության վարում և կառավարում՝ առաջիկա 10 տարիների համար:

## **11. Հիմնադրութային փաստաթղթի կարգավորման ենթակա տարածքը և շրջակա միջավայրը**

ՀՀ Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավում, մարզկենտրոնը Կապան քաղաքն է: Մարզը հյուսիսից սահմանակից է ՀՀ Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Ադրբեջանին: Գտնվում է ծովի մակերևույթից միջինը 2200մ բարձրության վրա՝ զբաղեցնելով 4,506 կմ<sup>2</sup> տարածք:

Սիսիան քաղաքը գտնվում է Սյունիքի մարզի հյուսիս-արևմտյան մասում, Որոտան գետի հովտում, Երևան-Արարատ-Սիսիան-Գորիս-Կապան միջպետական նշանակության ճանապարհի վրա՝ Սիսիանի գոգհովտի տեղամասում: Սիսիանի գոգհովտը (1550-1650) զբաղեցնում է Որոտանի հովիտը՝ Շաքիի ձորից (հյուսիս-արևմուտքում) մինչև Ույծ գետը:


Միսիանի անտառտնտեսության տեղադրությունը



**Պ ա յ մ ա ն ա կ ա ն ն շ ա ն ն ե ր**

○	Բնակավայր	■	Միսիանի անտառտնտեսություն
—	Ավտոճանապարհ	■	Այունիքի անտառտնտեսություն
~	Գետ	■	«Չանգեզուր» պետական արգելավայր
~	Վտակ		
■	Զբոսաբար, ճակ		

Սիսիանի անտառտնտեսության անտառպետությունները



«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղը գտնվում է Սյունիքի մարզում, հիմնականում Գորայք ու Սիսիան խոշորացված համայնքների վարչական սահմաններում և մի փոքր հատված Տաթև խոշորացված համայնքի վարչական սահմաններում, Որոտան գետի ջրհավաք ավազանում: Անտառտնտեսության տարածքն ընկած է 39°22'-39°40' հյուսիսային լայնությունների և 45°50'-46°11' արևելյան երկայնությունների միջև: Անտառտնտեսության ամենաերկար ձգվածությունը հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք է, կազմելով 39 կմ: Հարավ-արևելքում սահմանակցում է «Սյունիքի անտառտնտեսություն» մասնաճյուղին:

Սիսիանի անտառտնտեսությունը կազմավորվել է 1971թ. համաձայն Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 03.06.1970թ. N421 որոշման Գորիսի անտառտնտեսությունից առանձնացված Սիսիանի անտառապետության հենքի վրա՝ 3520 հա ընդհանուր մակերեսով: Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 31.05.1989թ. N 149 որոշմամբ անտառտնտեսությունը կազմալուծվել և միացվել է Գորիսի անտառտնտեսությանը, իսկ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 12.12.1989թ. N 149 որոշման համաձայն՝ առանձնացվել և կազմավորվել է Սիսիանի անտառտնտեսությունը՝ 4737 հա ընդհանուր մակերեսով:

Ուսումնասիրվող տարածքում առկա է 2 բնության հուշարձան՝ «Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր և «Շամբի» բրածո ֆլորա և ֆաունա, որոնք ընկնում են տարածքում: Անտառային հողերից դուրս հարակից տարածքում ամենամոտ 250 մ «Հերթ» որմնաքանդակն է և «Շաքի» ջրվեժը 300-400 մետր հեռավորության վրա:

Պատմամշակույթային հուշարձաններից ուսումնասիրվող տարածքում առկա է 2 մատուռ և մեկ հուշարձան ( Կոմիտասի անվան): Մատուռներից մեկը նոր է, մյուսը հին, իսկ հուշարձանը ծառապատ տարածքում է Բռնակոթ գյուղի մոտ:

«Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի կազմում ընդգրկված են երկու՝ Շաղատի՝ 2817,0հա և Սիսիանի՝ 3129,0հա մակերեսներով անտառապետությունները: «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի ընդհանուր տարածքը կազմում է 5946,0 հա:

Անտառտնտեսության սահմանները որոշվել են ռելիեֆային առանձնահատկություններով (ջրաբաժաններ, ձորակներ, գետակներ, լեռնալանջեր և այլն), որոնք բնության մեջ արտահայտիչ են և հանդիսանում են համեմատաբար կայուն սահման: Օգտագործվել են նաև խոշորամասշտաբ տեղագրական քարտեզների և արբանյակային պատկերների վերծանման արդյունքները՝ հաշվի առնելով «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի ներկայիս սահմանները:

Սիսիանի անտառտնտեսության անտառները գտնվում են Փոքր Կովկասյան լեռնաշղթայի հարավ-արևելյան անտառաճման գոտում, Չանգեզուրի լեռների հյուսիս-արևելյան լանջերում, Սյունիքի բարձրավանդակի հարավ-արևմտյան հատվածում և Բարգուշատի լեռներից դեպի Որոտանի կիրճ ձգվող Կապրուսարի ու Կարմրակողի լեռնաբազուկների վրա:

Ամենաբարձր զագաթներն են՝ Շահապոնք՝ 3204 մ (Չանգեզուրի լեռնաշղթա) և Արամազդը՝ 3399 մ (Բարգուշատի լեռնաշղթա):

Վերջին մոտ 20 տարիներին անտառտնտեսությունում կառուցվածքային և մակերեսային փոփոխություններն են կատարվել, 2009թ-ի՝ 1989թ. համեմատությամբ անտառտնտեսության մակերեսի ավելացումը 683 հեկտարով բացատրվում է տարածաշրջանի նախկին կոլխոզ-սովխոզային անտառային հողերի միացմամբ: 2020թ.-ի՝ 2009թ. համեմատությամբ, 526 հա տարբերությունը բացատրվում է շրջակա

բնակավայրերի հողային ֆոնդի կադաստրային քարտեզների և անտառտնտեսության ընթացիկ գույքագրմամբ անտառային հողատեսքերի ու սահմանների ճշտման, հիմնականում անտառային բացատների և պարապուտ տարածքների ավելացման հանգամանքով (Աղյուսակ 1):

**Աղյուսակ 1.**

**Անտառտնտեսության կառուցվածքը**

ԶԶ	Անտառայտեսության անվանումը	1989 թ.		2009 թ.		2020 թ.	
		Մակերեսը, հա	%	Մակերեսը, հա	%	Մակերեսը, հա	%
1	Շաղատի	2435,0	51,4	2627,0	48,4	2817,0	47,4
2	Սիսիանի	2302,0	48,6	2793,0	51,6	3129,0	52,6
<b>Ընդամենը</b>		<b>4737,0</b>	<b>100</b>	<b>5420,0</b>	<b>100</b>	<b>5946,0</b>	<b>100</b>

**11. 1 Անտառտնտեսության ընդհանուր տարածքի բաժանումն ըստ հիմնական նպատակային նշանակության և հողատեսքերի:**

Անտառտնտեսության պաշտպանական նշանակության հողատեսքերի ընդհանուր մակերեսը զբաղեցնում է ամբողջ տարածքի 86,7 %-ը (5156 հա), այդ թվում անտառային հողերը՝ 3157 հա, որից անտառածածկը՝ 2000,3 հա է, նույն թվում անտառմշակույթները՝ 163,6 հա: Հրդեհված անտառային տարածքները և մահացած տնկարկները զբաղեցնում են՝ 86,8 հա, անտառային բացատները և բաց (պարապուտ) տարածքները՝ 731,8 հա, նոսրուտները՝ 338,3 հա:

Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 1998,0 հա (ընդհանուր ոչ անտառային հողերի 86,2 %-ը):

Հատուկ նշանակության հողատեսքերը զբաղեցնում են 790,0 հա (13,3 %), այդ թվում անտառային հողերը՝ 468,7 հա, որից անտառածածկ մակերեսը՝ 87,8 հա, անտառմշակույթները՝ 85,6 հա: Հրդեհված անտառային տարածքները և մահացած տնկարկները զբաղեցնում են 25,6 հա, անտառային բացատները և բաց տարածքները՝ 353,5 հա, նոսրուտները՝ 1,8 հա: Ոչ անտառային հողերը զբաղեցնում են 13,8 %-ը, 32 1 հա: (Աղյուսակ 2):

Բաց՝ պարապուտ տարածքները դրանք գործածությունից դուրս մնացած հողեր են, որոնցում համաձայն գույքագրման արդյունքների կարող են նախատեսվել անտառապատման կամ անտառվերականգնման միջոցառումներ:

**Սիսիանի անտառտնտեսության հողատեսքերի բաշխվածությունն ըստ հիմնական նպատակային նշանակության և անտառպետությունների**

ՀՀ	Հողատեսք	Կատեգորիա	Անտառպետություն		
			Սիսիանի	Շաղատի	Ընդամեն ը
1	Ընդհանուր մակերեսը	Պաշտպանական	2960,0	2196,0	5156,0
		Հատուկ նշանակության	169,0	621,0	790,0
		Ընդամենը	3129,0	2817,0	5946,0
2	Անտառային հողեր	Պաշտպանական	1997,9	1159,6	3157,5
		Հատուկ նշանակության	69,3	399,4	468,7
		Ընդամենը	2067,2	1559,0	3626,2
2	Անտառածածկ մակերեսը	Պաշտպանական	1235,8	764,5	2000,3
		Հատուկ նշանակության	8,6	79,2	87,8
		Ընդամենը	1244,4	843,7	2088,1
2.1	Այդ թվում անտառնշակույթներ	Պաշտպանական	88,0	75,6	163,6
		Հատուկ նշանակության	8,6	77,0	85,6
		Ընդամենը	96,6	152,6	249,2
3	Անտառային տնկարան	Պաշտպանական	-	0,3	0,3
4	Ոչ անտառածածկ	Պաշտպանական	762,1	394,8	1156,9
		Հատուկ նշանակության	60,7	320,2	380,9
		Ընդամենը	822,8	715,0	1537,8
4.1	Հրդեհված և մահացած անտառտնկարկներ	Պաշտպանական	82,9	3,9	86,8
		Հատուկ նշանակության	0,1	25,5	25,6
		Ընդամենը	83,0	29,4	112,4
4.2	Բացատներ և պարապուտ տարածքներ	Պաշտպանական	417,9	313,9	731,8
		Հատուկ նշանակության	60,6	292,9	353,5
		Ընդամենը	478,5	606,8	1085,3
4.3	Նոսրուտներ	Պաշտպանական	261,3	77,0	338,3
		Հատուկ նշանակության	-	1,8	1,8
		Ընդամենը	261,3	78,8	340,1
5	Ոչ անտառային հողեր	Պաշտպանական	962,1	1036,7	1998,8
		Հատուկ նշանակության	99,7	221,3	321,0
		Ընդամենը	1061,8	1258,0	2319,8

## 11. 2. Անտառային հողերի փոփոխությունն ըստ հողատեսքերի

Անտառտնտեսության ընդհանուր մակերեսը՝ 2009-ի համեմատությամբ 2020թ. ավելացումը 526,0 հեկտարով, իսկ անտառածածկի մակերեսը 24,7 հեկտարով բացատրվում է անտառտնտեսության շրջակա համայնքների հետ սահմանների և անտառաշինական ու համայնքների կադաստրային քարտեզագրական նյութերում առկա անհամապատասխանությունների ճշտման հանգամանքով: Իսկ անտառմշակույթների մակերեսի նվազումը 212,6 հեկտարով բացատրվում է ինչպես կլիմայի փոփոխության հետևանքով անտառածման պայմանների վատացման, առանձին տարածքներում հիվանդությունների ու վնասատուների վարակվածության հետևանքով չորացման, այնպես էլ անտառմշակույթներում բավարար ինսամբ չկատարելու հանգամանքներով (Աղյուսակ 3):

### Աղյուսակ 3.

#### Անտառտնտեսության անտառային հողերի հողատեսքերի փոփոխությունը

ՀՀ	Հողատեսքը	2009		2020		Տարբերություն ը
		Հա	%	Հա	%	
1	Ընդհանուր	5420,0	100	5946,0	100	+526,0
2	Անտառային հողեր, ընդամենը	3569,4		3626,2		+56,8
2.1	Անտառածածկ, ընդամենը	2063,4		2088,1		+24,7
2.1.1	Այդ թվում անտառմշակույթներ	461,8		249,2		-212,6
2.2	Չմիակցված սաղարթով անտառմշակույթներ	12,2		-		-12,2
2.3	Անտառային տնկարան			0,3		+0,3
2.4	Ոչ անտառածածկ, ընդամենը, այդ թվում	1493,8		1537,8		+44,0
2.4.1	Նոսրուտներ	272,4		340,1		+67,7
2.4.2	Հրդեհված, մահացած անտառտնկարկներ	-		112,4		+112,4
2.4.3	Բացատներ և պարապուտ տարածքներ	1221,4		1085,3		-136,1
3	Ոչ անտառային հողեր	1850,6		2319,8		+469,2

## 11.3 Անտառի ներկա իրավիճակի վերլուծություն

Անտառտնտեսությունում անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 1200-2400 մ բարձրությունների վրա, ընդ որում 1200-1600 մ բարձրությունների վրա՝ 141,8 հա, 5780 մ<sup>3</sup> ընդհանուր պաշարով (6,8% և 6,2%), 1601-1800 մ՝ 482,9 հա, 22120 մ<sup>3</sup> ընդհանուր պաշարով (23,1% և 23,8%), 1801-2000 մ՝ 808,2 հա, 39710 մ<sup>3</sup>, համապատասխանաբար 38,7% և 42,6% և 2000 մ-ից բարձր՝ անտառածածկի 31,4%-ը, ընդհանուր պաշարի 27,4%-ը:

Անտառի ներկա վիճակը գնահատելու համար կատարվել են հետևյալ աշխատանքները:

- Անտառի վիճակի պատկերման նպատակով նախորդ անտառշինությունից հետո դիտարկվել է անտառաձածկ մակերեսի և պաշարի փոփոխությունը գերակշռող ծառատեսակների և հասակային դասերի սահմաններում, անտառզնահատման ցուցանիշների փոփոխությունները, ինչպես նաև անտառզնահատման և անտառռնտեսության կառավարման վերաբերյալ առկա համապատասխան նյութերը:
- Անտառռնտեսության 2009թ. կառավարման պլանի անտառի գույքագրման և գնահատման տվյալներով անտառի միջին տարիքը եղել է 54, իսկ 2020թ. 60, 1 հեկտարի միջին պաշարը 2009թ.՝ 35մ<sup>3</sup>, 2020թ.՝ 45մ<sup>3</sup>, միջին լրիվությունը համապատասխանաբար՝ 0,46 և 0,54, ինչը վկայում է, որ անտառռնտեսության անտառներում ընդգծված չհամակարգված հատումներ չեն իրականացվել:
- Անտառռնտեսության ընդհանուր մակերեսը 2009 թվականի համեմատությամբ 2020թ. ավելացումը 526 հեկտարով բացատրվում է շրջակա բնակավայրերի հողային ֆոնդի կադաստրային քարտեզների և անտառռնտեսության ընթացիկ գույքագրմամբ անտառային հողատեսքերի ու սահմանների ճշտման՝ հիմնականում անտառային բացատների և պարապուտ տարածքների ավելացման հանգամանքով:
- Նշված ժամանակաշրջանում անտառաձածկ մակերեսը ավելացել է ընդամենը 24,7 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը՝ 21520մ<sup>3</sup>-ով, ընդ որում սոճուտների մակերեսի նվազման հետ ընդհանուր պաշարը ևս նվազել է մոտ 670 մ<sup>3</sup>-ով, իսկ խոշորամեջ կաղնու և կովկասյան բոխու գերակշռության ծառուտների ընդհանուր պաշարները, համապատասխանաբար՝ 19240 մ<sup>3</sup> և 3840 մ<sup>3</sup>-ով:
- Անտառային մշակույթների մակերեսի նվազումը 212,6 հեկտարով բացատրվում է ինչպես կլիմայի փոփոխության նկատմամբ դիմադրողականության և հարմարողականության իջեցման, այնպես էլ առանձին տարածքներում հիմնված անտառմշակույթների անբավարար պահպանության և խնամքի աշխատանքների հետևանքով ոչնչացման հանգամանքներով: Նշվածը առավելապես վերագրվում է սոճու մաքուր մշակույթներին՝ նախորդի համեմատությամբ նվազել է 109,2 հեկտարով: Այս տեսանկյունից կարևորվում է նոր անտառների հիմնման ծավալում նախատեսել բացառապես սոճու հետ լայնատերևավոր տեսակներով խառը կազմով մշակույթների հիմնում, ինչը կբարձրացնի կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարողականությունը, միաժամանակ կնպաստի հնարավոր հրդեհների մարման աշխատանքներին:
- Վերը նշված ժամանակաշրջանում ծառուտի միջին կազմը (մասերով) էական փոփոխությունների չի ենթարկվել՝ 2009թ. 6,8 կաղնի, 1,1 սոճի, 0,7 գիհի, 0,3 թեղի, 0,3 բոխի 0,2 հացի 0,3 ուռենի 0,1 թխկի 0,1 ակացիա սպիտակ 0,1 խնձորենի: 2020թ. այդ ցուցանիշն է՝ 7,7 կաղնի, 0,6 գիհի, 0,5 սոճի, 0,5 բոխի, 0,2 հացի 0,2 ուռի, 0,1,թխկի, 0,1 թեղի, 0,1 խնձորենի:
- Անտառռնտեսությունում անտառաձածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ տարիքային խմբերի ունի հետևյալ պատկերը՝ անտառաձածկ մակերեսի 8,3%-ը



(173,6հա) երիտասարդ տարիքային խմբի (1-ին և 2-րդ հասակային դաս) ծառուտներ են, որոնցում ընդհանուր պաշարը կազմում է 6,4% (6000մ<sup>3</sup>), 2009թ. այն կազմել է 26,3% (542,9հա) և 17,7% (12690մ<sup>3</sup>): Գերակշռում են միջին տարիքի ծառուտները, որոնք զբաղեցնում են 1878,8հա, 86490մ<sup>3</sup> պաշարով (համապատասխանաբար 90,0% և 92,9%): Հասունացող և հասուն ծառուտները միասին զբաղեցնում են ընդամենը 35,7հա (1,7%), 620մ<sup>3</sup> պաշարով (0,7%):

#### 11.4 Կլիմա և օդային ավազան.

Սյունիքի մարզում, ըստ բարձունքային գոտիականության, հերթափոխվում են հանրապետության տարածքին բնորոշ կլիմայի գրեթե բոլոր տեսակները՝ չոր մերձարևադարձային, չափավոր տաք, բարեխառն, ցուրտ լեռնային և ձյունամերձ: Սյունիքում է գտնվում հանրապետության ամենատաք վայրը՝ Մեղրու ցածրադիր գոտին: Արևափայլքի տարեկան տևողությունը տատանվում է 2120 ժամից (Գորիս) մինչև 2700 ժամի (Մեղրի) սահմաններում:

Կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Շողակաթի (Շորժա) օդերևութաբանական կայանի դիտարկումները և համապատասխան կլիմայական ցուցանիշները:

#### Օդի ջերմաստիճանը/ °C /

#### Աղյուսակ 4.

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակար-դակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Սիսիան	1580	-4,5	-3,0	0,9	6,8	11,4	15,0	18,0	17,8	14,0	8,6	2,7	-2,2	7,1	-34	36
Սիսիանի Լ-ցք	2380	-8.2	-7.5	-4.3	1.3	6.3	9.9	12.7	12.8	9.9	4.7	-1,0	-5.9	2.6	-26	31

**Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը**

**Աղյուսակ 5.**

Քննարկվող տարածք	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների												տարեկան	Առավելագույն տասնօրյակային զանգված	Տարվա մեջ ձնածածկույթի օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Միսիան	18	22	36	57	73	57	27	16	23	37	30	18	414	36	67	90
	26	20	22	37	38	47	54	39	29	35	32	22	54			
Միսիանի է-ժք	53	64	77	101	102	71	43	26	36	64	56	64	757	214	157	720
	23	37	27	91	50	41	48	34	31	47	41	45	91			

**Օդի հարաբերական խոնավությունը Աղյուսակ 6.**

Քննարկվող տարածքի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենա ցուրտ ամսվա, %	ամենա շոգ ամսվա, %
Միսիան	71	71	71	70	71	69	65	65	70	71	73	72	70	59	45
Միսիանի է-ժք	81	83	83	77	76	77	76	72	71	71	76	81	77	81	53

**Քամի Աղյուսակ 7.**

Բնակավայրի, օրերը և օրվա թիվը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշումը, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ ուղղությունների Միջին արագությունը, մ/վ									Անհողությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում		
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրև)	Արևելյան (Ար)	Հարավարևել Ցան (ՀվԱր)	Հարավային (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմ Տյան (ՀսԱրմ)	25					50	100	
Սիսիան	841,5	հունվար	8	1	14	2	2	2	26	45	56	1,9	2,2	2	20	21	22	
			3,5	2,6	3,6	2,5	2,5	3,5	3,6	3,9								
		ապրիլ	4	2	36	6	2	6	25	19	55	2,0						
			3,4	3,2	4,1	3,7	3,4	4,0	3,6	3,9								
		հուլիս	1	1	79	16	0	1	1	1	45	3,1						
			3,1	4,4	5,0	4,5	3,6	3,7	3,3	3,0								
		հոկտեմբեր	2	2	53	7	2	6	20	8	65	1,6						
2,7	2,8		4,2	3,2	2,9	3,9	3,7	3,8										

Սիսիանի անտառնտեսության տարածքը ընդգրկված է լեռնատափաստանային գոտու չափավոր չոր լեռնատափաստանային շրջանի մեջ և ունի բարեխառն չափավոր ցամաքային կլիմա: Տարեկան միջին ջերմաստիճանը 6,6<sup>0</sup>C է, հունվարինը՝ ցածրադիր վայրերում -4<sup>0</sup>C, բարձրադիր վայրերում՝ -12<sup>0</sup>C(նվազագույնը -38<sup>0</sup>C): Տարեկան տեղումների քանակը մոտ 400մմ է: Գարնանը գերիշխում են արևելյան, հարավարևելյան, իսկ ձմռանը արևմտյան և հյուսիսարևմտյան քամիները: Միջին և բարձր լեռնային գոտիներում ամեն տարի առաջանում է կայուն ձյունածածկույթ, որի հաստությունը 20-40սմ է: Ձյունածածկույթի առաջացման միջին ժամկետը նոյեմբերի 15-ն է, ձնհալիսը՝ ապրիլի 10-ը: Առաջին աշնանային ցրտահարությունները սկսվում են հոկտոմբերի 20-ից, իսկ վերջին

գարնանային ցրտահարությունները ավարտվում են ապրիլի 25-ին: Գարնան 3 ամիսների միջին ջերմաստիճանը 5<sup>0</sup>C է: Գարնան ամիսներին տեղումների քանակն ամենաշատն է՝ 172մմ, որը կազմում է տարեկան տեղումների 37,4%-ը: Այդ տեղումների մեծ մասը դիտվում են մայիս ամսին, հիմնականում հորդառատ անձրևների տեսքով: Աշունը համեմատաբար տաք է ու երկար: Աշնան 3 ամիսների միջին ջերմաստիճանը 7,7<sup>0</sup>C է: Վեգետացիոն շրջանի տևողությունը 180 օր է: Անտառտնտեսության տարածքը շրջափակված է Սյունիքի բարձրավանդակով, Չանգեզուրի և Բարգուշատի լեռնաշղթաներով, որոնք խոչընդոտում են Կասպից ծովից և Արաքսի ավազանից խոնավ հոսանքների ներթափանցմանը, որն էլ հատկապես ամռան ամիսներին բացասաբար է անդրադառնում անտառմշակույթների աճի վրա (Աղյուսակ 4):

**Աղյուսակ 8.**

**Կլիմայական բնութագրերն ըստ Սիսիանի օդերևութաբանական կայանի տվյալների**

Օդի դիտված առավելագույն ջերմաստիճանը (°C)													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	առավելագույն
2018	9	12	22	20	22	31	33	28	31	24	13	12	33
2019	10	9	13	18	26	28	35	30	28	24	18	13	35
Օդի դիտված նվազագույն ջերմաստիճանը (°C)													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	նվազագույն
2018	-19	-11	-5	-3	-1	7	10	7	5	-5	-6	-8	-19
2019	-13	-13	-7	-4	2	4	5	5	3	-3	-12	-10	-13
Օդի միջին ամսական և տարեկան ջերմաստիճան (°C)													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
2018	0.2	0.8	6.9	7.0	12.1	15.9	20.6	17.6	15.1	9.5	3.4	1.5	9,2
2019	-1.6	-0.7	1.6	5.7	13.0	17.5	19.2	18.2	13.2	10.9	1.2	0.5	8,2
Ամսական և տարեկան տեղումների քանակը (մմ)													
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	տարի
2018	16.7	15.7	64.4	38.4	112	73.4	18.4	13	39.8	32.4	19.6	49.2	493,0
2019	16.4	25.9	60.6	30.5	49.8	47.6	7.7	5	47.4	1.4	5	13.1	310,4

Սիսիան քաղաքի աշխարհագրական տեղադիրքի համաձայն՝ Որոտան գետի միջին հոսանքի լեռնաշղթաներով շրջափակված զոգավորությունում գտնվելը, բարձր հարաբերական խոնավությունը (միջին տարեկան 71%), անհողմությունների կրկնելիությունը (աշնանը՝ 53 %, ձմռանը՝ 48 %, գարնանը՝ 45 %, ամռանը՝ 38 %), քամու գերակշռող ուղղությունները (արևելյան, հյուսիս-արևմտյան), քամու փոքր արագությունը (միջին տարեկանը՝ 2.4 մ/վրկ) պայմանավորել և ձևավորել են մթնոլորտի աղտոտվածության միջին պոտենցիալը (ամռանը՝ 3-րդ կարգի, ձմռանը՝ 4-րդ կարգի), ինչը

սահմանափակում է մթնոլորտային օդն աղտոտող արդյունաբերական օբյեկտների տեղադրումը:

Ըստ գործող նորմատիվային փաստաթղթերի, Սիսիան քաղաքի գոյություն ունեցող բնակչության քանակով հաշվարկված է օդն աղտոտող տարրերի միջինացված քանակները՝ Աղյուսակ 6<sup>1</sup>:

**Աղյուսակ 9.**

Բնակչության քանակը (հազ. մարդ)	Կոնցենտրացիան օդում մգ/մ <sup>3</sup>			
	ծծմբական գազ	ազոտի երկօքսիդ	ածխածնի օքսիդ	փոշի
15-50.0	0.1	0.04	3.0	0.4

**11.5 Երկրաբանական կառուցվածքը և ռելիեֆը.** Սիսիանի անտառտնտեսության անտառները գտնվում են Փոքր Կովկասյան լեռնաշղթայի հարավ-արևելյան անտառածման գոտում՝ Չանգեզուրի լեռների հյուսիս-արևելյան լանջերում, Սյունիքի բարձրավանդակի հարավ-արևմտյան հատվածում և Բարգուշատի լեռներից դեպի Որոտանի կիրճ ձգվող Կապրուսարի ու Կարմրակողի լեռնաբազուկների վրա:

Ամենաբարձր գագաթներն են՝ Շահապոնք՝ 3204 մ (Չանգեզուրի լեռնաշղթա) և Արամազդը՝ 3399 մ (Բարգուշատի լեռնաշղթա): Չանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերը չափավոր թեքությամբ աստիճանաբար իջնում են դեպի Որոտանի կիրճը և կտրտված են նրա աջափնյա վտակների (Արագլիջուր, Շաղատ, Սիսիան, Շենաթաղ) կարճ հովիտներով: Բարգուշատի լեռնաբազուկները Որոտան գետի մոտ ավարտվում են զառիթափ լանջերով: Տարածքը հարուստ է օգտակար հանածոներով (մոլիբդեն, պղինձ, դիատոմիտ), շինանյութերով (կրաքար, մարմար, բազալտ և այլն), միներալներով (գալենիտ, մալախիտ և այլն): Անտառտնտեսության անտառները տեղաբաշխված են ծովի մակերևույթից 1200-2400 մետր բարձրությունների վրա: Անտառտնտեսության տարածքում ռելիեֆը լեռնային է և բնութագրվում է խիստ կտրտվածությամբ: Կառուցվածքային տեսանկյունից այն վերագրվում է Հյուսիս–Չանգեզուրյան հրաբխային գոտուն, որն առանձնանում է բարձրադիր կամարածալքային կառուցվածքով՝ բարդված նորագույն տեկտոնական խզումների ներժայթուկներով:

Սիսիան քաղաքի տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները բարդ են:

Տարածքը հիմնականում ներկայացված է դիատոմիտային կավերով, լճային ավազներով, բազալտներով, տրավերտիններով, խճային և այլուվիալ նստվածքներով: Ժամանակակից այլուվիալ նստվածքները տեղադրված են Որոտանի ողողահունում, գետի ափամերձ շերտում (1.5 մ հզորությամբ խիճ, գլաքար և ավազ):

**11.6 Հողային ռեսուրսներ.** համաձայն հանրապետության հողային քարտեզագրական նյութերի՝ անտառտնտեսության տարածքում հանդիպում են հիմնականում մուգ և բաց շագանակագույն և լեռնային սևահողերի տիպերը:

Սիսիանի անտառտնտեսության տարածքի, և ընդհանրապես լեռնային ծագման հողերի կազմավորման պրոցեսում կարևոր դեր են խաղում տեղագրական պայմանները, որին համապատասխան հաճախակի փոփոխվում է հողերի ջրագրական ռեժիմը: Վերջինս իր ազդեցությունն է թողնում բուսականության տեսակային կազմի, էռոզիոն պրոցեսների

<sup>1</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=39096>

ինտենսիվության և դրանից կախված՝ հողակազմավորման ընթացքի տարբերության, հողերի բազմազանության բնութագրի, նրանց զարգացման և քիմիական ու մեխանիկական կազմերի վրա: Անտառտնտեսության տարածքների մեծ մասում նկատվում է երոզիոն պրոցեսներ:

Ծովի մակերևույթից մինչև 1600 մ բարձրությունների վրա, Որոտանի միջին հոսանքի գոտում, տարածված են մուգ շագանակագույն հողերը: Վերջիններս աչքի են ընկնում ծագումնաբանական հորիզոնների պարզ տարանջատմամբ և լավ արտահայտված էլուվիալ-կարբոնատային հորիզոնի առկայությամբ: Նման հողերին հատկանշանական է թույլ հիմնային ռեակցիան և իրենց կառուցվածքով դասվում են թույլ հզորությամբ կմախքային հողերի շարքին, որոնք հատուկ են Որոտանի ավազանի խիստ կտրտված ռելիեֆին:

Ծովի մակերևույթից 1600-ից-1800 մետր բարձրությունների վրա գերակշռող բաց շագանակագույն հողերը նախորդից տարբերվում են վերին հորիզոնում հումուսի պարունակությամբ, իսկ ավելի բարձր տարածված են լեռնային սևահողերը, դրանք առանձնանում են ծագումնաբանական հորիզոնների լավ արտահայտված տարրորջմամբ, կնձիկահատիկային կառուցվածքով, հզոր պրոֆիլով և վերին շերտում հումուսացվածությամբ (4-11%): Այս հողերն ունեն միջին կլանելու ունակություն, ծանր մեխանիկական կազմ և աչքի են ընկնում բարձր ծակոտկենությամբ ու խոնավունակությամբ: Անտառտնտեսության անտառածածկի մակերեսի 35%-ը տեղաբաշխված է հյուսիսային կողմնադրության, 10%-ը՝ հարավային կողմնադրության, 36%-ը՝ արևելյան կողմնադրության, իսկ 19%-ը՝ արևմտյան կողմնադրության լանջերին:

Լանջերի մինչև 10° թեքությունների վրա գտնվում է անտառածածկի ընդամենը 2,8%-ը (59,4հա), 11-20°՝ 10,0%-ը (207,6հա), 21-30°՝ 55,2%-ը (1152,2հա), իսկ 32%-ը (666,7հա) գտնվում է 30°-ից բարձր թեքությունների վրա:

Անտառտնտեսությունների սահմաններում անտառածման պայմանների տիպը բնութագրվում է երկու էդաֆիկ գործոններով՝ հողերի բերրիությամբ և խոնավացման պայմաններով և այդ գործոնները դիտվում են իրարից անկախ:

Հողերի բերրիությունը առաջացնում է հետևյալ տիպերի հաջորդականությունը.

- A- բնութագրում է աղքատ աճման տարածքով,
- B- համեմատաբար աղքատ աճման տարածքով,
- C- համեմատաբար բերրի աճման տարածքով,
- D- բերրի աճման տարածքով:

Խոնավապահովվածությունից ելնելով անտառի տիպերը բաժանվում են

0-չափազանց չոր,

1- չոր,

2- թարմ (չափավոր խոնավ),

3- խոնավ,

4- թաց,

5- ճահիճ:

**11.7 Ջրային ռեսուրսներ.** Ուսումնասիրվող տարածքի ջրագրական ցանցը պատկանում է Որոտան գետի ավազանին, զբաղեցնելով 5650կմ<sup>2</sup> տարածք: Որոտան գետը սկիզբ է առնում Սյունիքի բարձրավանդակի արևմուտքից, Արաքսի ձախ վտակն է: Ունի խառը սևում (50%-ը՝ ստորգետնյա ջրերից):

Որոտանի երկարությունը 178 կմ է , ՀՀ սահմաններում՝ 119 կմ, ավազանը 5650 կմ<sup>2</sup>, ՀՀ սահմաններում 2300 կմ<sup>2</sup>: Գետի վրա կառուցված են Սպանդարյանի, Անգեղակոթի, Տոլորսի և Շամբիի ջրամբարները: Գործում են նաև Սպանդարյանի, Շամբիի և Տաթևի ՋրԷԿ-երը: Որոտանի ջուրը օգտագործվում է նաև ոռոգման նպատակով (Սիսիանի ջրանցք), իսկ Որոտան-Արփա-Սևան թունելով Սևան է տեղափոխվում գետի ջրի մի մասը: Կան բազմաթիվ մանր լճեր՝ Որոտանի և Սիսիանի լեռնանցքների միջև, սառնորակ աղբյուրներ՝ Շաքիի, Չորգոր, Անգեղակոթ, ինչպես նաև հանքային ջրեր՝ Սիսիան, Բալաք, Որոտան և այլն: Անտառատնտեսության տարածքում ճահիճներ չկան:

Որոտանի վտակներն են՝ Արագիջուրը, Սիսիանը, Շաղաթը, Այրին, Շաքին, Լորածորը: Նրանք բոլորն էլ ունեն լեռնային բնույթ, V-աձև հովիտներ, արագահոս են, սահանքավոր, և առաջացնում են ջրվեժներ(նշանավոր է Շաքիի ջրվեժը): Որոտանի երկարությունը 178կմ է, ավազանը՝5650կմ<sup>2</sup>: Ռեժիմն անկանոն է, հորդանում է գարնանն ու ամռան սկզբին(հոսքի ավելի քան 60%-ը): Ձմռանը վերին հոսանքում նկատվում են սառցային երևույթներ, որոշ հատվածներում՝ սառցակալում: Որոտանի վրա կառուցվել են Անգեղակոթի, Տոլորսի, Շամբի ու Սպանդարյանի ջրամբարները, գործում են Տաթևի, Շամբի և Սպանդարյանի ՀԷԿ-երը: Որոտանի ջուրն օգտագործվում է նաև ոռոգման նպատակով (Սպանդարյանի ջրանցք): Որոտանի վերին հոսանքներից դեպի Արփա, ապա Սևան է տեղափոխվում գետի ջրերի մի մասը: Կան բազմաթիվ մանր լճեր (Որոտանի և Սիսիանի լեռնանցքների միջև), սառնորակ աղբյուրներ՝ Շաքի, Չորգոր, Անգեղակոթ, Սառնակունք, Չուլգաղբյուր և այլն, հանքային ջրեր՝ Սիսիան, Որոտան, Բալաք և այլն: (Աղյուսակ 7 և 8)

**Աղյուսակ 10.**

Գետերի բնութագիրը

Գետի անվանումը	Ուր է թափվում	Երկարությունը, կմ	Ավազանը, քառ. կմ	Տարեկան միջին ծախսը խմ/վրկ	Տարեկան հոսքը մլն խմ	Հոսքի մոդուլը լ/վրկ. քառ. կմ	Հոսքի շերտի բարձր., մմ	Հոսքի գործակիցը	Ջրային տրանսպորտի համար պիտանելիությունը
Որոտան	Արաքս	178	5650	21,5	679	10,6	334	0,45	Պիտանի չէ

**Աղյուսակ 11.**

Ջրամբարների բնութագիրը

ՀՀ	Ջրամբարի անվանումը	Ծավալը, մլն խմ	Հայելու մակերեսը, հա
1.	Սպանդարյանի	257	1025
2.	Տոլորսի	96	480
3.	Շամբի	13,6	112
4.	Անգեղակոթի	3,4	54

Սիսիանի տարածաշրջանը հարուստ է նաև հանքային ջրերով (Սիսիան-անտառտնկարան, Սիսիան-օդանավակայան, Անգեղակոթ, Ուռուտ, Աղիտու, Լեռնաշեն, Ույծ, Լոր, Շաղաթ և այլն):

Ջրերը հիմնականում միջին ածխաջրածնային (CO<sub>2</sub>-2.1 գ/լ), քլորիդահիդրոկարբոնատային, կալցիում-մագնեզիում-նատրիումական, քիչ հանքայնացված (M 4-4.5 գ/լ), թերմալ (to-24-37), բորատար, սիլիցիումական, պարունակում են երկաթ, ֆտոր, բրոմ, մանգան, պղինձ: Ըմպեյի բուժական ջրերի որակով մոտ են Բջնիի և Հանքավանի հանքային ջրերին: Իսկ իրենց բաղադրությամբ համարվում են «Ջերմուկ»-ի և Կիսլովոդսկի «Նարզանի» մոտ անալոգը՝ տարբերվում են միայն ջերմաստիճանով: Հանքային ջրերը կարելի է օգտագործել բալնեոլոգիական նպատակներով և շապրման համար:

Տարածքում կան նաև աղբյուրներ՝ Շաքի, Սևաղբյուր, Բլբլթան: Սևաղբյուրի և Բլբլթանի աղբյուրները դուրս են գալիս Սիսիան քաղաքի տարածքում և օգտագործվում են ջրամատակարարման նպատակով:<sup>2</sup>

Որոտան գետի աջափնյա և ձախափնյա հատվածները հիմնականում իրենցից ներկայացնում են դարավանդներ (տերրասաներ)՝ ներկայացված գլաքարային ապարներով և ավազակավերով:

Գրունտային ջրերը գետի աջափնյա մասում տեղադրված են 5 մետրից խորը: Գետի որոշ հատվածներում առկա են ճահճացումներ, որը պայմանավորված է ոռոգման համակարգերից ջրերի արտահոսքով<sup>3</sup>:

**11.8 Կենսաբազմազանություն.** Հայաստանը գտնվում է Կովկասի Եկոտարածաշրջանում: Այն բարձր լեռնային երկիր է, որտեղ առանձնացվում են 5 հիմնական լանդշաֆտային տիպեր՝ կիսաանապատային, տափաստանային, անտառային, ենթալպյան և ալպյան մարգագետնային:

Հանդիսանալով մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ Եկոլոգիական միջավայր, Հայաստանի կենսաբազմազանությունն ունի բնապահպանական կարևոր նշանակություն: Այդ տեսակետից Հայաստանի հարուստ կենսաբազմազանությունը, ունենալով Եկոհամակարգերի կայունությունն ապահովող բարձր հատկանիշներ, միաժամանակ հանդիսանում է երկրի տնտեսական զարգացման կարևոր նախապայմաններից մեկը:

Սիսիանի անտառտնտեսության տարածքն աչքի է ընկնում խիստ արտահայտված ուղղաձիգ գոտիականությամբ, ռելիեֆի խայտաբղետությամբ և դրան համապատասխան բուսական հարուստ կենսաբազմազանությամբ, որը հիմնականում պայմանավորված է աշխարհագրական դիրքով և ծովի մակերևույթից ունեցած բարձրությամբ:

**Բուսական աշխարհ.** Սյունիքի մարզում բուսականության տիպերին բնորոշ են հիմնականում տափաստանային (հացահատիկային և տարբեր խոտածածկ-հացահատիկային՝ տրագականտային բույսերով և մարգագետնային տափաստաններով), ալպիական (ցածր ալպիական մարգագետիններով տրագականտային գազ համալիրով,

<sup>2</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=39096>

<sup>3</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության որոշում 9 օգոստոսի 2007 թվականի N980-Ն, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի սիսիանի քաղաքային համայնքի (քնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին (1-ին մաս)



ալպիական մարգագետիններով, գորգերով և հաստ տորֆի ձևավորման համալիրով), վրացական և արևելյան կաղնու ու բոխու անտառներից և նոսր անտառներից (ասեղնատերև և սաղարթախիտ, որոշ տեղերում Արաքսի կաղնով):

Սիսիանի տարածաշրջանը հիմնականում ծածկված է հացահատիկային և տարբեր խոտածածկ-հացահատիկային տափաստաններով, տրագականտային բույսերով և մարգագետնային տափաստաններով:

Անտառտնտեսությունը հարուստ է բազմաթիվ ծառատեսակներով, որոնց աճին նպաստում են հողերի բերրիությունը և խոնավացման պայմանները:

Սիսիանի անտառտնտեսությունում C-համեմատաբար բերրի աճման պայմաններով տարածքները զբաղեցնում են ընդհանուր 1046,3հա (50,1%), իսկ B - համեմատաբար աղքատ աճման պայմաններով տարածքները ընդհանուր 749,9հա (40,7%):

Նշված հարաբերակցվածությունը հաշվի է առնվել անտառվերականգնման համալիր միջոցառումների նախատեսման ժամանակ:

**Աղյուսակ 12.**

**Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ անտառաճման պայմանների տիպերի**

Անտառային տիպ Անտառաճման տիպ դաս	Գերակշռող ծառատեսակների մակերեսը, հա							
	Սոճի	Կաղնի	Գիհի	Բոխի	Թխկի	Հացենի	Այլ տեսակներ	Ընդամենը, հա
A2		195,2	88,5				8,2	291,9
B1	10,2	146,4	30,5			1,8	13,6	202,5
B2	10,3	318,6		11,5		8,6	9,4	358,4
B3		189,0						189,0
C1	75,4	390,5		25,5		5,4	64,4	561,2
C2	19,9	396,7		15,0	1,5	10,4	41,6	485,1
<b>Ընդամենը</b>	<b>115,8</b>	<b>1636,4</b>	<b>119,0</b>	<b>52,0</b>	<b>1,5</b>	<b>26,2</b>	<b>137,2</b>	<b>2088,1</b>

Սիսիանի անտառտնտեսության անտառներում բացարձակ գերակշռում են տարախոտային տիպի անտառները՝ 94,2% (1966,5հա) (աղյուսակ 10):

**Աղյուսակ 13.**

**Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ անտառի տիպերի**

ՀՀ	Անտառի տիպերի խմբեր	Գերակշռող ծառատեսակները, հեկտար							
		Սոճի	Կաղնի	Գիհի	Բոխի	Հացենի	Թխկի	Այլ տեսակներ	Ընդամենը

1	Մեռյալ ծածկույթ	6,4							6,4
2	Շուղախոտային		7,6						7,6
3	Տարախոտային	109,4	1628,8	16,4	52,0	26,2	1,5	132,2	1966,5
4	Ենթալայան							3,4	3,4
5	Բոշխային			102,6				1,6	104,2
<b>Ընդամենը</b>		<b>115,8</b>	<b>1636,4</b>	<b>119,0</b>	<b>52,0</b>	<b>26,2</b>	<b>1,5</b>	<b>137,2</b>	<b>2088,1</b>

Անտառտնտեսությունում անտառների միջին տարիքը 60 է, միջին բուսիտետային դասը՝ 5,3 է, ծառուտների միջին լրիվությունը 0,54, 1 հեկտարի միջին պաշարը՝ 45մ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 0,74մ<sup>3</sup>: Անտառապետություններում գնահատման միջին ցուցանիշները 2020թ.և 2009թ. հետևյալն է՝ Շաղատի անտառապետությունում միջին տարիքը 57, միջին բուսիտետային դասը՝ 4,2, միջին լրիվությունը՝ 0,55, 1 հեկտարի միջին պաշարը՝ 47մ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 0,81մ<sup>3</sup>: Միջին կազմը՝ 5,2կաղնի, 1,5 գիհի 1,3 բոխի 0,7 սոճի 0,4 հացենի, 0,4 ուռի 0,2 թխկի, 0,1 բարդի, 0,1 խնձորենի 0,1 թեղի: 2009թ՝ միջին տարիքը 49, միջին բուսիտետային դասը՝ 4,9, միջին լրիվությունը՝ 0,44, 1 հեկտարի միջին պաշարը՝ 35մ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 0,71մ<sup>3</sup>: Միջին կազմը՝ 4 կաղնի 1,6 սոճի 1,2 գիհի 0,7 թեղի 0,7 բոխի 0,6 հացենի 0,6 ուռի 0,3 ակացիա սպիտակ, 0,2 թխկի, 0,1 բարդի:

Սիսիանի անտառապետությունում միջին տարիքը 61, միջին բուսիտետային դասը՝ 5,5, միջին լրիվությունը 0,54, 1 հեկտարի միջին պաշարը՝ 43մ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 0,68մ<sup>3</sup>, միջին կազմը՝ 9,4 կաղնի, 0,4 սոճի 0,1 թխկի 0,1 թեղի: 2009թ՝ միջին տարիքը 57, միջին բուսիտետային դասը 5,3, միջին լրիվությունը 0,46, 1 հեկտարի միջին պաշարը՝ 34մ<sup>3</sup>, միջին տարեկան աճը՝ 0,65մ<sup>3</sup>: Միջին կազմը՝ 8,4 կաղնի 0,8 սոճի 0,5 գիհի 0,1 ուռի 0,1 խնձորենի 0,1 տանձենի:

Անտառների միջին բուսիտետային դասը 5,3 է, հիմնական անտառկազմող տեսակներից համեմատաբար բարձր բուսիտետային դասով առանձնանում են բոխուտները, որոնց միջին բուսիտետային դասը 4,1 է, սոճին 4,6: Բարձր բուսիտետային դասի են հացենի և բարդի ծառատեսակների ծառուտները, համապատասխանաբար՝ 2,4 և 2,8:

#### Աղյուսակ 14.

##### Անտառածածկ մակերեսի բաշխվածությունն ըստ բուսիտետային դասերի

ՀՀ	Գերակշռող ծառատեսակը	Բուսիտետային դասեր							Միջին բուսիտետ
		1	2	3	4	5	5ա	Ընդ. հա	
1	Սոճի	9,4	14,3	8,2	29,0	53,6	1,3	115,8	4,6
2	Գիհի						119,0	119,0	5,5
3	Կաղնի			25,4	142,9	510,0	958,1	1636,4	5,3
4	Բոխի			9,2	28,2	14,6		52,0	4,1

5	Հացենի	1,1	5,1	2,3	4,8	9,7	3,2	26,2	2,4
6	Թխկի	0,1	0,4	0,2	0,4	0,4		1,5	4,2
7	Թեղի		3,2	1,2	2,4	6,3	13,2	26,3	4,8
8	Կեչի				3,4			3,4	4,0
9	Սպիտակ ակացիա			0,9		1,7	0,1	2,7	4,4
10	Կեռասենի				0,6			0,6	4,0
11	Սալորենի					0,9		0,9	5,0
12	Բարդի		1,7	3,0	0,5			5,2	2,8
13	Տանձենի		0,4			2,3		2,7	4,0
14	Խնձորենի				1,0	20,2		21,2	5,0
15	Լշենի						1,6	1,6	5,5
16	Ուռի		6,0	6,3	5,2	17,0	0,5	35,0	4,3
17	Փշատենի			0,1	2,1	1,9		4,1	4,6
18	Թփեր						33,5	33,5	5,5
<b>19</b>	<b>Ամբողջը</b>	<b>10,6</b>	<b>31,1</b>	<b>56,8</b>	<b>220,5</b>	<b>638,6</b>	<b>1130,5</b>	<b>2088,1</b>	<b>5,3</b>

**Տեղեկագիր անտառգնահատման միջին ցուցանիշների՝ ըստ գերակշռող ծառատեսակների**

ՀՀ	Գերակշռող ծառատեսակը	Տարիներ	Գնահատման միջին ցուցանիշներ					Ծառուտի միջին կազմը
			Տարիքը	Բունիտետի դասը	Լրիվությունը	1 հա անտառածածկ մակերեսի միջին պաշարը, մ <sup>3</sup>	1 հա անտառածածկի միջին անձր, մ <sup>3</sup>	
1	Սոճի	2020	43	4,6	0,52	67	1,52	9,3 սոճի, 0,1խնձորենի 0,1կաղնի, 0,1հացենի, 0,1թեղի, 0,1փշատենի, 0,1կակացիա դեղին
		2009	33	4,2	0,52	38	1,15	9,5սոճի, 0,2հացենի, 0,2կաղնի, 0,1նշենի
2	Կաղնի	2020	62	5,3	0,57	46	0,73	9,3կաղնի, 0,5բոխի, 0,1թխկի, 0,1հացենի
		2009	62	5,3	0,47	39	0,63	7,5կաղնի, 0,7բոխի, 0,6թխկի, 0,5սոճի, 0,4ուռնի, 0,1խնձորենի, 0,1չիչխան, 0,1հացենի
3	Գիհի	2020	80	5,5	0,36	8	0,1	10գիհի
		2009	56	5,5	0,36	10	0,18	10գիհի
4	Բոխի	2020	48	4,1	0,69	80	1,57	6,7բոխի, 2,9 կաղնի, 0,3թխկի, 0,1հացենի
		2009	70	4,0	0,45	88	1,25	6,8բոխի, 2,0կաղնի, 1,2 հացենի
5	Հացենի	2020	40	2,4	0,50	46	1,15	5,7 հացենի, 1,3 խնձորի, 0,8 թխկի, 0,7 կաղնի, 0,5 ակացիա դեղին, 0,3 թեղի, 0,2 սոճի, 0,2ուռնի, 0,2 տանձենի, 0,1 փշատենի
		2009	34	4,9	0,37	16	0,47	7,7հացենի, 1,3 ակացիա սպիտակ, 0,4խնձորենի 0,4 ծիրանենի, 0,1սոճի, 0,1տանձենի

6	Թխկի	2020	36	4,2	0,45	40	1,11	5,6թխկի, 2,2 հացենի,1,1 ուռի,1,1 սալորենի
7	Թեղի	2020	39	4,8	0,43	28	0,68	7,4 թեղի 0,7 իսնձորենի 0,5 ակացիադեղին 0,3փշատենի, 0,2հացենի, 0,2բարդի 0,2ակացիա սպիտակ, 0.1կաղնի, 0,1սոճի, 0,1սալորենի, 0,1տանձենի,0,1կեռասենի
		2009	31	4,6	0,42	28	0,90	9,6 թեղի0,1թխկի 0,1ակացիա սպիտակ,0,1հացենի,0,1կշենի
8	Սպիտակ ակացիա	2020	44	4,4	0,59	74	1,64	5,4ակացիա, 1,2թխկի, 1,1հացենի1,1ընկուզենի,0,8թեղի,0,4սոճի
		2009	35	5,3	0,38	35	1,0	8,3սպիտակ ակացիա,0,6թխկի, 0,6իսնձորենի,0,3հացենի,0,2թեղի
10	Կեչի	2020	20	4,0	0,30	6	0,30	7,1կեչի, 2,9ուռի
		2009	50	5,0	0,50	43	0,86	10կեչի
11	Բարդի	2020	49	2,8	0,49	106	2,16	6.3բարդի, 2,5ուռի, 0,2 սոճի 0,2թխկի, 0,2 հացենի,0,2թեղի, 0,2ակացիա դեղին,0,2փշատ
		2009	52	2,4	0,43	102	1,96	8,4 բարդի,0,8ուռի,0,4սոճի,0,2ակացիա սպիտակ,0,2թեղի
12	Ուռի	2020	39	4,3	0,48	59	1,51	7,0ուռի, 0,8թխկի, 0,7կաղնի, 0,5տանձի, 0,3իսնձորի, 0,3կեչի, 0,3կաղամախի, 0,1բարդի
		2009	33	4,7	0,34	28	0,85	10ուռի
13	Տանձենի	2020	36	4,0	0,60	33	0,92	10 տանձենի
		2009	30	3,0	0,62	47	1,56	10 տանձենի
14	Իսնձորենի	2020	36	5,0	0,48	10	0,26	10իսնձորենի
		2009	32	5,4	0,39	15	0,47	10իսնձորենի
Անտառտնտեսություն		2020	60	5,3	0,54	45	0,74	7,7կաղնի, 0,6գիհի, 0,5սոճի,0,5բոխի,0,2հացենի, 0,2ուռի,0,1թխկի,0,1թեղի,0,1իսնձորենի
		2009	54	5,1	0,46	35	0,65	6,8 կաղնի,1,1սոճի,0,7գիհի, 0,3թեղի,0,3բոխի,0,2հացենի,0,3ուռի,0,1թխկի,0,1ակացիա

							սպիտակ, 0,1խնձորենի
Անտառապետություններ							
Շաղատի	2020	57	4,2	0,55	47	0,81	5,2կաղնի, 1,5գիհի,1,3բոխի,0,7սոճի,0,4հացենի, 0,4ուռի,0,2թխկի, 0,1բարդի, 0,1խնձորենի,0,1թեղի
	2009	49	4,9	0,44	35	0,71	4 կաղնի1,6 սոճի,1,2գիհի , 0,7թեղի 0,7բոխի, 0,6հացենի,0,6ուռի, 0,3ակացիա սպիտակ,0,2թխկի,0,1բարդի
Սիսիանի	2020	61	5,5	0,54	43	0,68	9,4կաղնի, 0,4սոճի0,1թխկի0,1թեղի
	2009	57	5,3	0,46	34	0,60	8,4կաղնի,0,8սոճի,0,5գիհի,0,1ուռի, 0,1խնձորենի,0,1տանձենի

Անտառտնտեսությունում հիմնական անտառկազմող տեսակներն են խոշորառեչ կաղնին, որի գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 1636,4 հա՝ 74740,0մ<sup>3</sup> ընդհանուր պաշարով, կամ անտառածածկ մակերեսի 78,4%-ը և ընդհանուր պաշարի 80,3%-ը, ընդ որում 2009թ. համեմատությամբ մակերեսը ավելացել է 226,4 հեկտարով, իսկ ընդհանուր պաշարը՝ 19240 մ<sup>3</sup>-ով: Սոճու գերակշռությամբ ծառուտները զբաղեցնում են 115,8 հա, ընդհանուր պաշարը կազմում է 7810 մ<sup>3</sup> (անտառածածկի 5,6%-ը և պաշարի 8,4%-ը): 2009թ. համեմատությամբ զբաղեցրած մակերեսը նվազել է 109,2 հեկտարով, ընդհանուր պաշարը 670 խմ-ով, գիհուտները՝ 119,0հա, 9800 խմ (անտառածածկ տարածքի 5,7%-ը և պաշարի 1,0%-ը) և մնացած տեսակները միասին կազմում են անտառածածկի 10,3%-ը և ընդհանուր պաշարի 1,3%-ը (աղյուսակ 16):

Աղյուսակ 16.

**Անտառածածկ մակերեսի և պաշարի բաշխվածությունն ըստ անտառկազմող ծառատեսակների**

NN	Գերակշռող	2009թ.		2020թ.	
		մակերեսը, հա	պաշարը, մ <sup>3</sup>	մակերեսը, հա	պաշար, մ <sup>3</sup>
1	Սոճի	225,0	8480,0	115,8	7810,0
2	Գիհի	137,8	1300,0	119,0	980,0
3	Կաղնի	1410,0	55500,0	1636,4	74740,0
4	Բոխի	3,4	300,0	52,0	4140,0
5	Հացենի	38,6	600,0	26,2	1210,0
6	Թխկի			1,5	60,0
7	Թեղի	49,9	1420,0	26,3	730,0
8	Կեչի	1,4	60,0	3,4	20,0
9	Սպիտակ ակացիա	18,3	210,0	2,7	200,0
10	Կեռասենի	7,9	130,0	0,6	20,0
11	Սալորենի	0,1		0,9	20,0
12	Բարդի	4,9	500,0	5,2	550,0
13	Տանձենի	1,9	90,0	2,7	50,0
14	Խնձորենի	49,7	760,0	21,2	210,0
15	Նշենի	21,2	110,0	1,6	10,0
16	Ուռի	50,4	1690,0	35,0	1990,0
17	Փշատենի	7,4	130,0	4,1	160,0
18	Թփեր	35,5	310,0	33,5	210,0
	Ընդամենը	2063,4	71590,0	2088,1	93110,0

«Սիսիանի» անտառտնտեսության տարածքը հարուստ է բազմաթիվ օգտակար բուսատեսակներով, որոնցից շատերը լայնորեն և վաղուց կիրառվում են մարդու կողմից: Ըստ նախնական տվյալների տարածքում լայն տարածում ունեն ուտելի և համեմունքային (67 տեսակ), մեղրատու (110), դեղատու (124), կերային (100) նշանակության տեսակները (աղյուսակներ 13 և 14):

Դեռևս անբավարար են ուսումնասիրված օգտակար տեսակների պաշարները, որոնց մասին առայժմ գրառումները կարելի է սահմանափակել «առատ» կամ «հաճախ հանդիպող» գնահատականներով:

## Աղյուսակ 17.

### Սիսիանի անտառտնտեսությունում հանդիպող ամենատարածված ուտելի և համեմունքային բուսատեսակներ

ԶԶ	Հայերեն անվանումը	Լատիներեն անվանումը
1	Բող տափակապտուղ	Caucalis platycarpos
2	Շուշան-բանջար ոսկեգօծ	Chaerophyllum aureum
3	Գազրուկ, գազար վայրի	Daucus carota
4	Մոշխոտ քարեբեկ, անխոն	Pimpinella saxifrage
5	Կոտեմ լայնատերև, նվարդակ	Lepidium latifolium
6	Մնդրիկ հոտավետ	Polygonatum odoratum
7	Ս. հարթ	P. glaberrimum
8	Բողկուկ վայրի, սուտ բողկ	Raphanus raphanistrum
9	Մանդակ արևելյան	Astrodaucus orientalis
10	Ավելյուկ գանգուր	Rumex crispus
11	Թրթնջուկ փոքր	Rumex acetosella
12	Ծնեբեկ օղակաձև	Asparagus verticillatus
13	Անանուխ երկարատերև	Mentha longifolia
14	Փիփերթ սովորական	Malva silvestris
15	Քիմոն կովկասյան	Carum caucasicum
16	Շուշան-բանջար խոշորասերմ	Chaerophyllum macrospermum
17	Սիբեխ սովորական	Falcaria vulgaris
18	Բոխի մանրապտուղ	Hippomarathrum microcarpum
19	Ստեպդին հայկական	Pastinaca armena



20	Ծնեպակ դեղատու	<i>Asparagus officinalis</i>
21	Սինձ հացազգատերև	<i>Tragopogon graminifolius</i>
22	Ծորենի սովորական	<i>Berberis vulgaris</i>
23	Ուրց Կոչիի	<i>Thymus kotschyanus</i>
24	Հլածուկ սովորական	<i>Barbarea vulgaris</i>
25	Շաղգամախոտ կնճռոտ	<i>Rapistrum rugosum</i>
26	Աստղիկ սովորական	<i>Stellaria media</i>
27	Տիլենի սովորական	<i>Corylus avellana</i>
28	Փշատենի նեղատերև	<i>Elaeagnus angustifolia</i>
29	Աստղաշուշոն լեռնային	<i>Ornithogalum montanum</i>
30	Կորթին պարտեզային	<i>Satureja hortensis</i>
31	Սզնի արևելյան	<i>Crataegus orientalis</i>
32	Սալոր	<i>Prunus divaricate</i>
33	Արոսի	<i>Sorbus aucuparia</i>



Ծնեպակ դեղատու



Շուշան-բանջար ոսկեգոծ



**Սիսիանի անտառնտեսության ամենատարածված դեղաբույսեր**

ՀՀ	Հայերեն անվանումը	Լատիներեն անվանումը
1	Եղեսպակ դեղատու	Salvia sclarea
2	Թելուկ հոտավետ	Chenopodium botrys
3	Դժնիկ լուծողական	Rhamnus cathartica
4	Տատրակ-խոճկորիկ սովորական	Tussilago farfara
5	Հազարատերևուկ սովորական	Achillea millefolium
6	Եղինջ երկտուն	Urtica dioica
7	Խատուտիկ դեղատու	Taraxacum officinale
8	Ձիաձետ դաշտային	Eguisetum arvense
9	Կատվալեզու երեքնուկ	Bidens tripartite
10	Խնկածաղիկ դեղատու	Origanum vulgare
11	Թրնջախոտ դեղատնային	Melissa officinalis
12	Խնդակոթ բժավոր	Conium maculatum
13	Օշինդր սովորական	Artemisia vulgaris
14	Կտուկենի խոտանման	Sambucus ebulus
15	Կատվախոտ դեղատու	Valeriana officinalis
16	Վիկ ցանկապատի	Vicia sepium
17	Չանգակ լայնատերև	Campanula latifolia
18	Ճարճատուկ սովորական	Cichorium intybus
19	Անթառամ ծալքավոր	Helichrysum plicatum
20	Կաքավկրկուտ դեղատու	Lithospermum officinale
21	Շնալոզու դեղատու	Cynoglossum officinale
22	Քարխոտ կոշտ	Symphytum asperum
23	Ծոապաշար	Capsella bursa-pastoris
24	Կանեփ մոլային	Cannabis ruderalis
25	Լոշտակ սպիտակ	Bryonia alba
26	Չիվան հսկայական	Cephalaria gigantea

27	Սրոհունդ հոցված	Hypericum perforatum
28	Սպանդ սովորական	Peganum harmala
29	Սզնի արևելյան	Crataegus orientalis
30	Արյունաքամ դեղատու	Sanguisorba officinalis
31	Ծնեպակ դեղատու	Asparagus officinalis

**Անոթավոր բույսեր:** Սիսիանի անտառտնտեսության տարածքում հանդիպում են անոթավոր բույսերի 64 ընտանիքին և 150 ցեղին պատկանող 477 տեսակ:

«Սիսիանի» անտառտնտեսության տարածքում աճող բույսերից 8 տեսակն ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում (աղյուսակ 15): Այս տվյալները անհրաժեշտ են Սիսիանի անտառտնտեսության տարածքում բնապահպանական բարձրաժեք անտառների առանձնացման համար:

#### Աղյուսակ 19.

#### Սիսիանի անտառտնտեսության տարածքում աճող ՀՀ Բույսերի Կարմիր գրքում գրանցված հազվագյուտ բուսատեսակները

ՀՀ	Տեսակի լատիներեն անվանումը	Տեսակի հայերեն անվանումը	Կատեգորիան ըստ ՀՀ Կարմիր գրքի
1	<b>Centaurea leuzeoides</b>	<b>Տերեփուկ լւզեանման</b>	<b>CR</b>
2	<b>Peltariopsis planisiliqua</b>	<b>Վահանակերպ տափակապատիճակ</b>	<b>EN</b>
3	<b>Astragalus himilis</b>	<b>Գազ ցածր</b>	<b>CR</b>
4	<b>Astragalus refractus</b>	<b>Գազ բեկված</b>	<b>CR</b>
5	<b>Onobrychis meschetica</b>	<b>Կորնգան մեսխեթական</b>	<b>CR</b>
6	<b>Iris lineolata</b>	<b>Հիրիկ նեղածային</b>	<b>EN</b>
7	<b>Tulipa sosnovskiyi</b>	<b>Վարդակակաչ Սոսնովսկու</b>	<b>EN</b>
8	<b>Pyrus grossheimii</b>	<b>Տանձենի Գրոսսեյմի</b>	<b>EN</b>

**Centaurea rhizocalathium (K.Koch) Tchich**

Տերեփուկ արմատագամբյուղ  
EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
Վտանգված տեսակ



**Astragalus agasii Manden.**

Գազ Աղասու  
**Астрагал Агаси**  
CR B 1 ab(i,ii,iii) + 2ab(i,ii,iii)  
Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ



**Astragalus humilis M. Bieb.**

Գազ ցածր  
Астрагал низкий  
CR B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ



**Astragalus xiphidium Bunge**

Գազ թրածև  
Астрагал мечевидный  
EN B 1 ab(i,ii,iii,iv) + 2 ab(i,ii,iii,iv)  
Վտանգված տեսակ: Անդրկովկասի Էնդեմիկ Է:



**Iris lineolata** (Trautv.) Grossh.

Յիրիկ նեղծային

Касатик узколинейчатый

EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ:



**Sclerochloa woronowii** (Hack.) Tzvelev ex Bor

Կրածրախոտ Վորոնովի

Жесткоколосница Воронова

EN B 1 ab(iii) + 2 ab(iii)

Վտանգված տեսակ:



**Կենդանական աշխարհ.** Սիսիանի տարածաշրջանը հարուստ է կենդանատեսակներով: Բնաաշխարհին բնորոշ կաթնասուն կենդանիներից են արջը, գայլը, աղվեսը (հանդիպում է միայն դեղնամոխրագույն ցեղը) և նապաստակը, որը հանդիպում է համարյա բոլոր գոտիներում: Լծենի և Արևիսի անտառներում հանդիպում են վայրի այծեր, խոզեր, լուսաններ և կզաքիսներ: Տարածաշրջանի գետերն ու լճերը հարուստ են ձկներով: Որոտան գետում և այլ մաքուր ու սառնորակ ջրերում բազմանում է կարմրախայտ արժեքավոր ձկնատեսակը, որն անխնա որսի և ոչնչացման պատճառով հիմա խիստ հազվադեպ է հանդիպում: Տարածաշրջանը հարուստ է գիշատիչ թռչուններով, մասնավորապես տարածված են մեծ ճանկեր ու խոշոր կտուց ունեցող անգղներ, ինչպես նաև արծիվներ, որոնք հիմնականում ոչնչացնում են տարածաշրջանի վնասակար կրծողներին: Բոլոր գոտիներում հավազգիների ընտանիքից հանդիպում է կաքավը:

**Անողնաշարավոր կենդանիներ.** Հայաստանի անողնաշարավոր կենդանիների ֆաունան բավական հարուստ է՝ շուրջ 17000 գրանցված տեսակ, որոնցից 316 տեսակը համարվում է էնդեմիկ, իսկ մոտ 300-ը՝ հազվագյուտ և անհետացող տեսակներ են:

Սյունիքի մարզի (ինչպես նաև ամբողջ Հայաստանի) անողնաշարավոր կենդանիներն ուսումնասիրված են խիստ անհավասարաչափ: Սիսիանի անտառտնտեսության տարածքում հանդիպող անողնաշարավոր կենդանիների որևէ խմբի վերաբերյալ գիտական աշխատությունները բացակայում են: Համաձայն անտառտնտեսության կառավարման պլանի՝ Սիսիանի անտառտնտեսության տարածքում հանդիպող անողնաշարավորների տեսակային կազմը բացահայտելու և ճշտելու համար հիմք են ծառայել ընկերության կողմից օգտագործված տարբեր գրական աղբյուրների, այլ մասնագետների ու բնասերների հետ վարած հարցազրույցների և հարցումների, սեփական դիտարկումների արդյունքները: Համաձայն այդ տվյալների՝ Սյունիքի մարզում հայտնի են 70 կարգի անողնաշարավոր կենդանիների ներկայացուցիչներ, որոնք պատկանում են փափկամարմինների և հողվածոտանիների տիպերին: Դրանցից բազմաթիվ միջատներ ընդգրկված են 29 կարգում:



Փափկամարմինները, սարդակերպերը և բազմոտանիները ներկայացված են 7-ական, խեցգետնակերպերը՝ 5-ական կարգով:

Ընդհանուր առմամբ, Սյունիքի մարզում ներկայումս հայտնի է շուրջ 1770 տեսակ անողնաշարավոր կենդանիներ, որոնք պատկանում են փափկամարմինների (Mollusca) և հողվածոտանիների տիպերին (Arthropoda): Այսպես, ցամաքային փափկամարմիններից այստեղ են հանդիպում շուրջ 70 տեսակ, իսկ հողվածոտանիներից առավել ուսումնասիրված են միջատները: Մանավորապես ուղղաթևավորների կարգից (Orthoptera) հանդիպում է շուրջ 90 տեսակ, հավասարաթևավորների կարգից (Homoptera)՝ շուրջ 100, կիսակարծրաթևավորների կարգից (Hemiptera)՝ մոտ 10, կարծրաթևավորների կարգից (Coleoptera)՝ շուրջ 840, թեփուկաթևավորների կարգից (Lepidoptera)՝ շուրջ 500, երկթևավորների կարգից (Diptera)՝ շուրջ 30, թաղանթաթևավորների կարգից (Hymenoptera)՝ շուրջ 110, ճպուռների կարգից (Odonata)՝ 21 տեսակներ, որոնցից 10 տեսակը պատկանում է հավասարաթևավոր ճպուռների ենթակարգին, իսկ 11 տեսակն՝ անհավասարաթևավոր ճպուռների ենթակարգին: Վերջիններս հանդիպում են Որոտան գետի հովտում՝ ջրամբարների ափամերձ տարածքներում, ճահճուտներում, գետի վտակներում, փոքր լճակներում շրջապատված ջրածահճային բուսականությամբ: Բացի միջատներից, տեսակային մեծ բազմազանություն ունեն նաև խելիցերավորների ենթատիպին (Chelicerata) պատկանող սարդերը, խոտհարները, տզերը, կարիճները, որոնց տեսակային պատկանելության մասին դեռևս բացակայում են համապատասխան գիտական տվյալները: Հայաստանի հանրապետության կենդանիների Կարմիր գրքում (Աղասյան, Քալաշյան (խմբ.), 2010) գրանցված հազվադեպ և անհետացող 153 անողնաշարավոր կենդանատեսակներից Սյունիքի մարզում ներկայացված են 55-ը (5 փափկամարմին և 50 միջատ): Դրանցից Սիսիանի անտառտնտեսության տարածքներից հայտնի տեսակները ներկայացված են աղյուսակ 16-ում:

## Աղյուսակ 20.

### Սիսիանի անտառտնտեսության տարածքից հայտնի՝ ՀՀ Կարմիր գրքում և Միջազգային կարմիր ցուցակում գրանցված անողնաշարավորների տեսակները

ՀՀ	Գիտական անվանում	Հայերեն անվանում	ՀՀ Կարմիր գիրք (2010)	Միջազգային Կարմիր ցուցակ (IUCN)
1	<i>Coenagrion vanbrinkae</i>	Վան Բրինկի Նետիկ	VU B 1a+B 2a	DD
2	<i>Coenagrion scitulum</i>	Նետիկ նրբագեղ	EN B2a	LC
3	<i>Onychogomphus assimilis</i>	Մզավուն բիթակիր	VU B 1a+B 2a	VU
4	<i>Phytodrymadusa armeniaca</i>	Ֆիտոդրիմադուզա հայկական	EN B 1a+B 2a	
5	<i>Carabus (Procerus) scabrosus fallettianus</i>	Ֆալետիի կողնջակեր ցայտազնայուկ	VU B1 ab (iii)+ 2 ab(iii)	

6	<i>Cerambyx cerdo acuminatus</i>	Կաղնու մեծ երկարաբերդիկ	VU B 1a+B 2a	VU
7	<i>Dorcadion bistriatum</i>	Երկգիծ երկարաբերդիկ	EN B 1a+B 2a	
8	<i>Dorcadion gorbunovi</i>	Գորբունովի երկարաբերդիկ	EN B 1a	
9	<i>Proserpinus proserpina</i>	Պրոզերպինա իլիկաթիթեռ	VU B 1a+B 2a	DD
10	<i>Scotopteryx kuznetzovi</i>	Կուզնեցովի երկրաչափ թիթեռ	EN B 1a+B 2a	-
11	<i>Haliaeetus albicilla</i> Linnaeus	Սպիտակապոչ արծիվ	EN B1a	D



© M.Snimov

Երկգիծ երկարաբերդիկ- *Dorcadion bistriatum*



© A.Danchenko

Պրոզերպինա իլիկաթիթեռ- *Proserpinus proserpina*



© K.Aghababyan/AUA

Կուզնեցովի երկրաչափ թիթեռ- *Scotopteryx kuznetzovi*



Սպիտակապոչ արծիվ, *Haliaeetus albicilla* Linnaeus



©Jean-Michel Faton

Նետիկ նրբագեղ  
Coenagrion scitulum (Rambur, 1842)



©Antoine van der Heljden

Վան Բրինկի նետիկ  
Coenagrion vanbrinkae Lohmann, 1993

**Ողնաշարավոր կենդանիներ.** Միսիանի անտառտնտեսության տարածքում հայտնի է ողնաշարավոր կենդանիների 206 տեսակ, որոնցից ձկների 11, երկկենցաղների՝ 4, սողունների՝ շուրջ 16, թռչունների՝ 125, կաթնասունների՝ 50 տեսակներ:





**Ձկներ. նկարագրություն:** Միսիան անտառտնտեսության տարածքում կամ դրան հարակից մասերում գտնվում կամ հոսում են հետևյալ հիմնական գետերն ու ջրամբարները՝ Որոտան, Միսիան, Այրի, Շաղատ, Լոռաձոր գետերը, Սպանդարյանի, Անգեղակոթի, Տոլորսի և Շամբի ջրամբարները: Համաձայն 2015-2020թթ. ընթացքում կատարված ուսումնասիրությունների արդյունքների՝ վերոնշյալ գետերում և ջրամբարներում հանդիպում է 11 ձկնատեսակ, որոնցից որևէ մեկը գրանցված չէ ՀՀ կենդանիների Կարմիր գրքում և դրանցից ոչ մեկն էլ չի հանդիսանում էնդեմիկ տեսակ Հայաստանի համար: Այդ ձկնատեսակներն են՝

Կարմրախայտ (*Salmo trutta fario* L.)՝ տեղաբնակ տեսակ է, որը հանդիպում է գետերում, որտեղ նրանց գլխաքանակը վերջին տարիներին կտրուկ նվազել է: Հանդիսանում է սիրողական ձկնորսության օբյեկտ:





<p>Ծիածանախայտ (<i>Oncorhynchus mykiss</i> Walbaum)՝ գետերի ու ջրամբարների հարակից տարածքներում բուծվող ծագումով հյուսիսամերիկյան ձկնատեսակ է, որը պարբերաբար պատահականորեն ներթափանցում է բնական ջրակալներ: Հանդիպում է ինչպես գետերում, այնպես էլ ջրամբարներում: Բնության մեջ առայժմ գրանցված չեն բազմացման դեպքեր:</p>	
<p>Արևելյան տառեխիկ (<i>Alburnoides eichwaldii</i> Filippi), տեղաբնակ բազմաքանակ ձկնատեսակ է, որը հանդիպում է ինչպես գետերում, այնպես էլ ջրամբարներում: Իր մանր չափերի պատճառով ձկնորսական նշանակություն չունի:</p>	
<p>Կովկասյան թեփուղ (<i>Squalius orientalis</i> Nordmann)՝ տեղաբնակ, ոչ հաճախ հանդիպող տեսակ է: Հանդիսանում է սիրողական ձկնորսության օբյեկտ:</p>	
<p>Արծաթափայլ կարաս (<i>Carassius auratus gibelio</i> (Bloch), կլիմայավարժված, հիմնականում ջրամբարներում հանդիպող տեսակ է: Տեղի բնակչության և սիրող ձկնորսների կողմից որսվող հիմնական ձկնատեսակներից է:</p>	
<p>Կուրի սպիտակածուկ (<i>Alburnus filippii</i> Kessler)՝ տեղաբնակ, ոչ շատ հաճախ հանդիպող ձկնատեսակ է: Իր մանր չափերի պատճառով ձկնորսական նշանակություն չունի:</p>	

<p>Կուրի բեղաձուկ (<i>Barbuslacerta cyri</i> Filippi), տեղաբնակ, գետերում լայնորեն տարածված տեսակ է: Հանդիսանում է սիրողական ձկնորսության օբյեկտ:</p>	
<p>Մուրծի (<i>Luciobarbus mursa</i> Guldenstadt), տեղաբնակ, Որոտանի ստորին հոսանքում հազվադեպ հանդիպող տեսակ է: Հանդիսանում է սիրողական ձկնորսության օբյեկտ:</p>	
<p>Կողակ (<i>Capoeta capoeta</i> Gueldenstaedt), տեղաբնակ, գետերում և ջրամբարներում տարածված ձկնատեսակ է: Ջրամբարներում տեղի բնակչության և սիրող ձկնորսների կողմից որսվող հիմնական ձկնատեսակներից է:</p>	
<p>Ամուրյան նրբաձուկ (<i>Pseudorasbora parva</i> (Temminck &amp; Schlegel)) կլիմայավարժված ինվազիվ ձկնատեսակ է, որը բնակեցնում է ինչպես ջրամբարները, այնպես էլ գետերը: Իր մանր չափերի պատճառով ձկնորսական նշանակություն չունի: Կարող է վնաս հասցնել այլ ձկնատեսակներին՝ սնվելով նրանց ձկնկիթով և մատղաշներով, ինչպես նաև տարածելով զանազան ինվազիվ հիվանդություններ:</p>	
<p>Կուրի լերկաձուկ (<i>Oxynoemachelius brandli</i> (Kessler)) տեղաբնակ, գետերում բնակվող ձկնատեսակ է: Իր մանր չափերի պատճառով ձկնորսական նշանակություն չունի:</p>	

**Երկկենցաղներ. Նկարագրություն:** Ուսումնասիրվող տարածքներում հանդիպում են Հայաստանում տարածված երկկենցաղների 7 տեսակներից 4-ը: Դրանք են՝

- Լճագորտ *Pelophylax ridibundus* (Pallas), լայնորեն տարածված է գետերի և ջրամբարների ափերին: Ջրից հեռու երբեք չի հանդիպում: Համեմատաբար բազմաքանակ տեսակ է:

- Փոքրասիական գորտ *Rana macrocnemis* Boulenger: Սովորաբար հանդիպում է գետերի ափերին: Կարող է հանդիպել ջրից բավական հեռու, եթե ցամաքի տվյալ տարածքը խոնավ է: Համեմատաբար սակավաթիվ տեսակ է:

- Կանաչ փոփոխական դոդոշ *Bufo variabilis* (Pallas): Չորադիմացկուն է, տարածված տեսակ է և հանդիպում է ջրից բավական հեռու: Ջրային տարածք գալիս է հիմնականում բազմացման նպատակով: Վարում է մթնշաղային և գիշերային կենսաձև: Համեմատաբար բազմաքանակ է:

- Սիրիական սխտորագորտ *Pelobates syriacus* Boettger՝ հազվադեպ հանդիպող և գիշերային կենսաձև վարող երկկենցաղ է, որը ցերեկն անցկացնում է հողաշերտի տակ:

- ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված երկկենցաղները բերված են աղյուսակ 24-ում:

- Տարածքի բատրախոֆաունային սպառնացող հիմնական վտանգներից է փոքրիկ լճակների չորացումը՝ ինչը հանդիսանում է երկկենցաղների, հատկապես սիրիական սխտորագորտի և կանաչ փոփոխական դոդոշի բազմանալու վայր: Պահպանության հատուկ կարիք ունի սիրիական սխտորագորտը, որի տարածվածությունը, կենսաբանական և էկոլոգիական առանձնահատկությունները նշված տարածքներում բացարձակ ուսումնասիրված չէ: Բազմանալու վայրը հայտնաբերելու դեպքում այդտեղ հարկավոր է ձևավորել միկրոարգելոցային կարգավիճակի համապատասխանող հատուկ պահպանվող տարածք:



Սիրիական սխտորագորտ, *Pelobates syriacus* Boettger, 1889,

Հազվադեպ, նեղ արեալային, քանակապես կրճատվող տեսակ: Գրանցված

է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքերում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր

ցուցակում (ver. 3.1) 'Least Concern' կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային

միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես 'խոցելի'՝ VU B2ab (ii, iii)

Սիսիանի անտառտնտեսության տարածքից հայտնի՝ ՀՀ Կարմիր գիրքում և Միջազգային կարմիր ցուցակում գրանցված երկկենցաղների տեսակները

ՀՀ	Գիտական անվանումը	Հայերեն անվանումը	ՀՀ Կարմիր գիրք (2010)	Միջազգային Կարմիր ցուցակ (IUCN)
1	<i>Pelobates syriacus</i>	Սիրիական սխտորագորտ	VU Bab (ii, iii)	LC
2	<i>Pelophylax ridibundus</i>	Լճագորտ	-	LC
3	<i>Rana macrocnemis</i>	Փոքրասիական գորտ	-	LC
4	<i>Bufo variabilis</i>	Կանաչ փոփոխական դողդոջ	-	LC

**Սողուններ.** ուսումնասիրվող տարածքների հերպետոֆաունան դեռևս լիարժեք ուսումնասիրված չէ: Ելնելով գրական աղբյուրների տվյալներից այստեղ բնակվում են հետևյալ սողունները՝

- Կովկասյան ագամա *Laudakia caucasica* (Eichwald): Խոշոր, մինչև 35սմ երկարությամբ մողես է, որը հիմնականում բնակվում է ժայռաբեկորների մեջ, որոնց ճեղքերում թաքնվում է վտանգի դեպքում:

- Կոտրատվող իլիկամողես *Anguis colchica* Nordmann: Անտառային գոտում բնակվող անոտ, մինչև 40սմ երկարությամբ սողուն է:

- Դեղնափորիկ *Pseudopus apodus* (Pallas): Մարգագետիններում, քարքարոտ վայրերում բնակվող խոշոր, մինչև 1.2մ երկարությամբ անոտ մողես է:

- Ռադդեի ժայռային մողես *Darevskia raddei* (Boettger): Ժայռերի, քարքարոտ վայրերում բնակվող մանր, մինչև 15սմ ընդհանուր երկարությամբ երկսեռ մողես է:

- Միջին մողես *Lacerta media* Lantz et Cyren: Բաց տարածքներում և նոսր անտառներում բնակվող բավական խոշոր մողես է, որի ընդհանուր երկարությունը կարող է հասնել մինչև 30սմ-ի:

- Շերտավոր մողես *Lacerta strigata* Eichwald: Կանաչապատ բաց տարածքներում բնակվող սողուն է, որի երկարությունը կարող է հասնել մինչև 25սմ:

- Շերտավոր մերկաչք *Ablepharus bivittatus* (Menetries): Փոքրիկ, մինչև 12սմ երկարությամբ, սերտաճած կոպերով փոքրիկ մողես է, որը, սովորաբար, բնակվում է փշոտ բույսերի ու խոշոր քարերի հարևանությամբ, որոնց տակ թաքնվում է վտանգի դեպքում:

- Սովորական պղնձօձ *Coronella austriaca* Laurenti: Համեմատաբար խոշոր, մինչև 1.2մ երկարությամբ օձատեսակ է, որը բնակվում է բաց տարածքներում, լեռնային անտառների բացատներում:



• Բազմազույն սահնօձ *Hemorrhois ravergieri* (Menetries): Համեմատաբար խոշոր, մինչև 1.3մ երկարությամբ օձատեսակ է, որը բնակվում է քարքարոտ վայրերում, քսերոֆիտ բուսականությամբ ծածկված լեռների լանջերին, հաճախ կարող է հանդիպել այգիներում, դաշտերում: Անվնաս տեսակ է, որի հիմնական սնունդը կրծողներն են ու մանր թռչունները:

• Ջրային լորտու *Natrix tessellata* (Laurenti): Սովորաբար մինչև 1մ երկարություն ունեցող օձատեսակ է, որը, սովորաբար, բնակվում է գետերի ու ջրամբարների ափերին, որտեղ սնվում է ձկներով և երկկենցաղներով:

Բացի վերոգրյալ սողուններից, ուսումնասիրվող տարածքներում հնարավոր է հանդիպել նաև՝ բարեկազմ օձագլուխը *Ophisops elegans* Menetries, կապարագույն սահնօձը *Hemorrhois nummifer* (Reuss), սովորական լորտուն *Natrix natrix* (L.), ձիթապտղագույն սահնօձը *Platyceps najadum* (Eichwald), անդրկովկասյան սահնօձը *Zamenis hohenackeri* (Strauch), գյուրզան *Macrovipera lebetina* (Linnaeus, 1758): Դրանք բոլորն էլ բնակվում են չոր տարածքներում և ժայռային հատվածներում ու սովորաբար չեն հանդիպում անտառային գոտում:

Վերոնշյալ սողուններից միայն անդրկովկասյան սահնօձն է գրանցված ՀՀ կենդանիների Կարմիր գրքում:



Անդրկովկասյան սահնօձ (*Zamenis hohenackeri*): Դասվում է *Elaphe* կամ *Zamenis* ցեղերին: *VU B1 ab(iii)*, *LC*

**Թռչուններ.** տարածքի թռչունները ներկայացված են սաղարթավոր անտառների, գիհու նոսրանտառների, լեռնատափաստանների, լեռնային մարգագետինների, ինչպես նաև ժայռային և քարացրոնային կենսամիջավայրերին բնորոշ տեսակներով: Տարածքին հարակից գյուղատնտեսական հանդակներում և Որոտանի կիրճի ջրային կենսամիջավայրերում հանդիպում են դրանց բնորոշ տեսակները:

Հայաստանում գրանցված թռչունների մոտ 350 տեսակից, Սիսիանի անտառտնտեսությունում կարելի է հանդիպել ավելի քան 140 տեսակ, որոնցից 66-ը այստեղ նստակյաց են, 57-ը՝ բնադրող-չվող են, իսկ մնացածը հանդիպում են միայն չուի ժամանակ և ձմռան շրջանում:

Նշված թռչունները պատկանում են հետևյալ կարգերին՝ սագանմաններ (1 տեսակ), հավազգիներ (5 տեսակ), հավալունանմաններ (2 տեսակ), արագիլանմաններ (1 տեսակ), ճուռականմաններ (21 տեսակ), բազեանմաններ (5 տեսակ), քարադրանմաններ (3 տեսակ), աղավանանմաններ (4 տեսակ), կկվանմաններ (1 տեսակ), բվանմաններ (4 տեսակ), այծկիթանմաններ (1 տեսակ), մանգաղաթևանմաններ (2 տեսակ), ներկարարանմաններ (3 տեսակ), ռնգեղջյուրաթռչանմաններ (1 տեսակ), փայտփորանմաններ (6 տեսակ) և ճնճողկանմաններ (82 տեսակ):

Սաղարթավոր անտառների տեսակներից հատկապես հետաքրքիր են անտառաբուն (*Strix aluco*) և ցերեկային գիշատիչների մի քանի տեսակներ, այդ թվում՝ կրետակերը (*Pernis apivorus*), ցախաքլորարոսը (*Accipiter gentilis*), փոքր ենթաարծիվը (*Aquila pomarina*) և գաճաճ արծիվը (*Hieraetus pennatus*): Այստեղ է բնադրում նաև կիսասպիտակավիզ ճանճորսը (*Ficedula semitorquata*): Բարձր լեռնային գոտում անտառի վերին սահմանի մոտ գտնվում է կովկասյան մայրեհավի (*Tetrao mlokosiewiczzi*) ապրելավայրը: Գիհու նոսրանտառների համար բնորոշ են օձակեր արծիվը (*Circaetus gallicus*), սովորական տատրակը (*Streptopelia turtur*) և այծկիթը (*Caprimulgus europaeus*): Լեռնատափաստաններում, լեռնային մարգագետիններում հանդիպում են մոխրագույն կաքավը (*Perdix perdix*), տափաստանային հողմավար բազեն (*Falco naumanni*), ոսկեգույն մեղվակերը (*Merops apiaster*) և մարգագետնային չքչանը (*Saxicola rubetra*): Այս կենսամիջավայրը առավել կարևոր է տարբեր գիշատիչ թռչունների համար, որոնք այստեղ կեր են հայթայթում բնադրման շրջանում և չուի ընթացքում: Բարձր լեռնային գոտու մարգագետինները, որտեղ հանդիպում են ժայռային տարածքներ, ապրելավայր են հանդիսանում վայրի հնդկահավի (*Tetraogallus caspius*), եղջերավոր արտույտի (*Eremophila alpestris*) և խայտաբղետ նրբագեղիկի (*Prunella ocularis*) համար: Առավել հարուստ են տարածքի ժայռոտ հատվածները, որոնք բնադրատեղ են հանդիսանում այնպիսի գիշերային և ցերեկային գիշատիչ թռչունների, ինչպես նաև բազմաթիվ ճնճողկազգիների համար, ինչպիսիք են բվեճը (*Bubo bubo*), գառնանգը (*Gypaetus barbatus*), գիշանգը (*Neophron percnopterus*), սպիտակագլուխ անգը (*Gyps fulvus*), քարարծիվը (*Aquila chrysaetos*), սապասը (*Falco peregrinus*), սպիտակափոր մանգաղաթևը (*Apus melba*), խայտաբղետ (*Monticola saxatilis*) և կապույտ քարակեռնեխները (*Monticola solitarius*), ժայռային փոքր սիտեղը (*Sitta neumayer*) և կարմրաթև մագցողը (*Tichodroma muraria*): Որոտանի կիրճի ցածրադիր մասերում քարացրոնների և ժայռերի մոտ հանդիպում է քարակաքավը (*Alectoris chukar*): Մշակվող հողային տարածքները նույնպես գրավում են տարբեր թռչունների: Այս վայրերի համար բնորոշ են հոպոպը (*Upupa epops*), ներկարարը (*Coracias garrulus*) և կորեկնուկը (*Emberiza calandra*): Այս տարածքների մանր կրծողները կարևոր նշանակություն ունեն տարածքի բնադրող և չվող գիշատիչ թռչունների համար: Որոտանի կիրճի և անտառտնտեսության ձորակների ջրային տարածքներում հանդիպում են սպիտակավիզ կոցարը (*Actitis hypoleucos*), ջրաճնճողկը (*Cinclus cinclus*) և լեռնային խաղտոնիկը (*Motacilla cinerea*):

Միսիանի անտառտնտեսությունում հանդիպող թռչուններից 25-ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում (2010), որոնցից 8-ը ընդգրկված են նաև Միջազգային կարմիր ցուցակում (IUCN) (Աղյուսակ 18):

**Աղյուսակ 22.**

**Միսիանի անտառտնտեսության տարածքից հայտնի ՀՀ Կարմիր գրքում և Միջազգային կարմիր ցուցակում գրանցված թռչնատեսակները**

ՀՀ	Գիտական անվանում	Հայերեն անվանում	ՀՀ Կարմիր գիրք (2010)	Միջազգային Կարմիր ցուցակ (IUCN)
1	<i>Tetrao mlokosiewiczi</i>	Կովկասյան մայրեհավ	VU D1	NT
2	<i>Tetraogallus caspius</i>	Վայրի հնդկահավ	VU B1a+2a; C2a(i); D1	LC
3	<i>Ciconia nigra</i>	Սև արագիլ	VU D1	LC
4	<i>Gypaetus barbatus</i>	Գառնանգղ	VU D1	LC
5	<i>Neophron percnopterus</i>	Գիշանգղ	EN A2bcde+3bcde+4bcde	EN
6	<i>Gyps fulvous</i>	Սպիտակագլուխ անգղ	VU D1	LC
7	<i>Circaetus gallicus</i>	Օձակեր արծիվ	VU D1	LC
8	<i>Accipiter gentilis</i>	Ցախաքլորաորս	VU B1ab(iii)+2ab(iii); D1	LC
9	<i>Aquila pomarina</i>	Փոքր ենթաարծիվ	VU D1	LC
10	<i>Aquila chrysaetos</i>	Զարարծիվ	VU D1	LC
11	<i>Hieraaetus pennatus</i>	Գաճաճ արծիվ	VU D1	LC
12	<i>Falco naumanni</i>	Տափաստանային հողմավար բազե	VU A2bce+3bce+4bce	LC
13	<i>Falco peregrinus</i>	Սապսան	VU D1	LC
14	<i>Bubo bubo</i>	Բվեճ	VU B1a; C2a(i); D1	LC
15	<i>Coracias garrulus</i>	Ներկարար	VU B1ab(iii)	NT
16	<i>Ficedula semitorquata</i>	Կիսասպիտակավիզ ճանճորս	DD	NT

17	<i>Tichodroma muraria</i>	Կարմրաթև մագլցող	DD	LC
18	<i>Lanius senator</i>	Կարմրակատար շամփրուկ	VU B1ab(iii)+2ab(iii)	LC
19	<i>Aegyptus monachus</i>	Սև անգղ	EN D	NT
20	<i>Circus macrouras</i>	Տափաստանային մկնաճուռակ	EN B1ab(iii)+2ab(iii); D	NT
21	<i>Circus pygargus</i>	Մարգագետնային մկնաճուռակ	VU D1	LC
22	<i>Accipiter brevipes</i>	Եվրոպական ճնճղաճուռակ	VU B1ab(iii)+2ab(iii)	LC
23	<i>Aquila clanga</i>	Մեծ եկթարծիկ	VU C2a(ii)	VU
24	<i>Aquila nipalensis</i>	Տափաստանային արծիկ	VU C2a(i); D1	LC
25	<i>Aquila heliaca</i>	Գերեզմանաարծիկ	VU C2a(ii)	VU



Կարմրաթև մագլցող, *Tichodroma muraria* (Linnaeus, 1766)

**Կաթնասուններ.** Սիսիանի անտառտնտեսության և հարակից տարածքներում հայտնի է Չայաստանում գրանցված 100 տեսակից կաթնասունների 50 տեսակ՝ 50%-ը: Տարածքի կաթնասունները ներկայացված են սաղարթավոր անտառներին, գիհու լոսրանտառներին, լեռնատափաստաններին, լեռնային մարգագետիններին, ինչպես նաև ժայռային և քարացրոնային կենսամիջավայրերին բնորոշ տեսակներով: Տարածքին հարակից գյուղատնտեսական հանդակներում և Որոտանի կիրճի ջրային կենսամիջավայրերում ևս հանդիպում են կաթնասունների տեսակներ: Կաթնասունները պատկանում են հետևյալ կարգերին՝ միջատակերներ (6 տեսակ), ձեռնաթևավորներ (14 տեսակ), կրծողներ (15 տեսակ), նապաստակամաններ (1 տեսակ), գիշատիչներ (10 տեսակ) և զույգամբակավորներ (4 տեսակ):



Կաթնասունները առավել լայն տարածում ունեն սաղարթավոր անտառներում: Այստեղ են հանդիպում Սատունիի (*Sorex satunini*) և Վոլնուխի (*Sorex volnuchini*) գորշատամ սրնչակները, անտառային քսամող (*Dryomys nitedula*), քարակգաքիսը (*Martes foina*), եվրոպական անտառակատուն (*Felis silvestris*), վայրի խոզը (*Sus scrofa*) և այծյամը (*Capreolus capreolus*):

Գիիու նոսրանտառներում հանդիպում են գորշուկը (*Meles meles*), լուսանը (*Lynx lynx*), նապաստակը (*Lepus europaeus*), հնդկական վայրենակերպը (*Hystrix indica*): Լեռնատափաստաններում և լեռնային մարգագետիններում տարածված են սովորական դաշտամուկը (*Microtus arvalis*), փոքրասիական համստերը (*Mesocricetus brandti*), անդրկովկասյան կուրամկիկը (*Ellobius lutescens*), հազվադեպ հանդիպում է Հայկական մուֆլոնը (*Ovis orientalis*): Անտառտնտեսության ժայռոտ տարածքների համար բնորոշ են բեզոարյան այծը (*Capra aegagrus*) ու քարանձավներում բնակվող չղջիկները, իսկ բարձր լեռնային գոտում քարացրոններում հանդիպում է ձյան դաշտամուկը (*Chionomys nivalis*):

Անտառտնտեսության տարածքում լայն տարածված են տարբեր տեսակի չղջիկներ, մանր կրծողներ, գորշ արջը (*Ursus arctos*), գորշ գայլը (*Canis lupus*), շնագայլը (*Canis aureus*) և սովորական աղվեսը (*Vulpes vulpes*):

Բնական կենսամիջավայրերի և մշակվող հանդակների սահմանամերձ գոտում հաճախ են հանդիպում սպիտակակուրծք ոզնին (*Erinaceus concolor*), աքիսը (*Mustella nivalis*) և մոխրագույն համստերիկը (*Cricetulus migratorius*):

Որոտանի կիրճի ջրային տարածքներում հանդիպող կաթնասուններից ջրային սրնչակը (*Neomys teres*), ջրասամուկը (*Lutra lutra*) և եվրոպական ջրառնետը (*Arvicola terrestris*):

Միսիանի անտառտնտեսությունում հանդիպող կաթնասուններից 7-ը գրանցված են ՀՀ Կարմիր գրքում (2010), որոնցից 6-ը ընդգրկված են նաև Միջազգային կարմիր ցուցակում (IUCN) (Աղյուսակ 19):

**Աղյուսակ 23.**

**Միսիանի անտառտնտեսության տարածքից հայտնի՝ ՀՀ և Միջազգային կարմիր գրքերում գրանցված կաթնասունների տեսակները**

ՀՀ	Գիտական անվանում	Հայերեն անվանում	ՀՀ Կարմիր գիրք (2010)	Միջազգային Կարմիր ցուցակ (IUCN)
1	<i>Neomys teres</i> (= <i>Neomys schelkovnikovi</i> )	Ջրային սրնչակ	EN B1a+2a	LC
2	<i>Hystrix indica</i>	Հնդկական վայրենակերպ	VU B2a	LC

3	<i>Lutra lutra</i>	Ջրասամույր	EN D	NT
4	<i>Ursus arctos</i>	Գորշ արջ	VU B2ab (iii, iv)	LC
5	<i>Felis silvestris</i>	Եվրոպական անտառակատու	VU B1ab (iii, iv)	LC
6	<i>Capra aegagrus</i>	Բեզուարյան այծ	VU B2ab (iii), C2a(i)	VU
7	<i>Ovis orientalis</i>	Հայկական մուֆլոն	EN D	VU

### 11.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.


Սյունիքի մարզը, ինչպես նաև Սիսիանի տարածաշրջանը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որոնք տարբեր են ըստ կառուցման ժամանակահատվածի (Ք.Ա. 5-1 հազարամյակներից մինչև 21-րդ դար), պահպանվածության աստիճանի (ավերակներից մինչև լավ պահպանվածները), նշանակության աստիճանի (ավերակներից մինչև լավ պահպանվածները): Ըստ նշանակության հուշարձանները բաժանվում են հանրապետական և տեղական նշանակության: ՀՀ կառավարության 2007 թվականի 9 օգոստոսի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը հաստատելու մասին» N980-Ն որոշմամբ հաստատված՝ 1-3.2.2.1. Պատմամշակութային և բնական հուշարձաններ ցանկում ընդգրկված են (Աղյուսակ 20):

Աղյուսակ 24.

### Պատմամշակութային հուշարձաններ

ՀՀ	Անվանում	Հիմնադրում	Գտնվելու վայրը
1	«Վարդան Չորավար» սրբավայր		գյուղ Անգեղակոթ
2	Սբ.Ստեփանոս եկեղեցի	XVIII դար	գյուղ Անգեղակոթ
3	Սբ.Գևորգ եկեղեցի	XIX դար	գյուղ Շաղատ
4	«Չորաց քարեր» բնակատեղի»	մ.թ.ա. XV-XIV դարեր	Քարահունջ, “Չորաց քարեր”, հնավայրը գտնվում է Սիսիան քաղաքից 3 կմ հյուսիս-արևելք, Երևան-Մեղրի մայրուղու աջ մասում:

	<p>պատմամշակութային արգելոց</p> 		
5	Մատուռ "Ստեփանուհատ"		Սիսիանից քաղաքից 1,5 կմ հյուսիս-արևելք
6	Սիսավանի Սբ. Զովհաննես եկեղեցի (Սյունի վանք)	VII դարի երկրորդ կես	քաղաք Սիսիան
7	Զուշարձան Կոմիտասի		գյուղ Բռնակոթ
8	Սբ. Գրիգոր եկեղեցի	XVIII դար	գյուղ Բռնակոթ
9	Աղիտուկ մահարձան	VII դար	7-րդ դարի հայկական միջնադարյան ճարտարապետական հուշարձան: Գտնվում է Սիսիան քաղաքից 4 կմ արևելք, գյուղ Աղիտուկ
10	Սբ. Կարապետ եկեղեցի	XVI դար	գյուղ Տոլորս
11	Որոտնավանք (Վաղաղնի վանք) վանական համալիր	X-XI դարեր	Վաղատին գյուղից 1 կմ հարավ, Որոտան գետի կիրճի եզրին
12	Ամրոց Որոտնաբերդ (Դավիթ Բեկի բերդ)	V դար	Բերդ Մեծ Զայքի Սյունիք նահանգի Ծղուկ գավառում, Որոտան գետի աջափնյա լեռնաբազուկի վրա: Գտնվում է Սիսիան քաղաքից 20 կմ արևելք:
			

13	Թանահատի վանական համալիր	V-VI դարեր	Արևիս գյուղից 3 կմ հյուսիս
14	Սբ.Ստեփանոս եկեղեցի	XXI դար	գյուղ Դարբաս
15	Սբ.Ստեփանոս եկեղեցի		գյուղ Լծեն
16	Մատուռ		Լծեն գյուղից 1 կմ հարավ-արևմուտք
17	Սբ. Աստվածածին եկեղեցի	XVII դար	գյուղ Գետաթաղ
18	Սբ.Գևորգ եկեղեցի	XVII դար	գյուղ Լոր
19	Ճառու Սբ. Զովհաննես եկեղեցի	XVII դար	գյուղ Լոր
20	Սբ. Մարտիրոս եկեղեցի	XVII դար	գյուղ Շենաթաղ
21	Ուխտասարի հնավայր ժայռապատկերներ		Սիսիան քաղաքից 25 կմ հյուսիս
22	Սիսիանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի 	IV դար	Հայկական վաղ միջնադարյան ճարտարապետության հուշարձան: Գտնվում է Սիսիան քաղաքի արևելյան բլրալանջին:

Անտառտնտեսության և հարակից համայնքների լեռնային ռելիեֆն ու կլիմայական առանձնահատկությունները, ուղղաձիգ գոտիականությունը պայմանավորել են տարածքի լեռնագրական և լանդշաֆտային բազմազանությունը, որոնք տարբեր ինտենսիվության բնական և մարդածին երևույթների ազդեցությամբ ձևավորել են բնական միջավայրի ինքնատիպ տարրեր՝ բնության կենդանի և անկենդան հուշարձաններ: ՀՀ կառավարության 2008 թվականի 14 օգոստոսի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N967-Ն որոշմամբ հաստատված բնության հուշարձանների ցանկում ընդգրկված են (Աղյուսակ 21):

**Բնության հուշարձաններ**

ՀՀ	Տեսակը	Անվանում	Գտնվելու վայրը
1	Կենսաբանական հուշարձան	«Սֆագնու մային մամուռներ»	Գորայք գյուղից 5-6 կմ հս., Որոտանի լեռնանցքի մոտ
2	Ջրագրական հուշարձան	«Բերդալիճ» լիճ	Սյունիքի մարզ, Ծղուկ գյուղից 13 կմ հս-արլ., ծ.մ-ից 3005, 7 մ բարձրության վրա
3		«Շաքի» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախակողմյան Շաքի վտակի վրա
4		«Անտակ» լիճ	Սյունիքի մարզ, Բռնակոթ գյուղի Չարդոլ ջրամբարից 1 կմ հս-արմ.
5	Բնապատմական հուշարձան	Ս. Վարդան եկեղեցու քարայր կացարանի և աղբյուրի համալիր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 0.5 կմ արմ., Անգեղակոթ-Շաղաթ ճանապարհից աջ
6		«Որոտան» բնապատմական համալիր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ. եզրին աջ ու ձախ ափերին
7	Երկրաբանական հուշարձան	«Անանուն» ապարների մերկացումներ	Երևան-Սիսիան խճուղու 180-181 կմ-ի ձախ և աջ կողմերում
8		«Յերթ» որմնաքանդակ	Սիսիան քաղաքից 3 կմ հս-արմ., «Շաքի» ջրվեժի մոտ
9		«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սիսիան քաղաքի հս-արլ. եզրին
10		«Անանուն» սյունաձև բազալտներ	Որոտան գյուղի հվ-արմ. եզրին
11		«Շամբի» բրածո ֆլորա և ֆաունա	Շամբ գյուղից 500 մ հս-արմ, Որոտան գետի ձախ ափին, 1300 մ բարձրության վրա
12	Ջրաերկրաբանական հուշարձան	«Վարդանաձորի» աղբյուրներ	Անգեղակոթ գյուղից 10 կմ հվ-արմ., Սիսիան-Նախիջևան ավտոճանապարհից 160մ ներքև
13		«Ջրաղացի» աղբյուր	Մուցք (Բարձրավան) գյուղից 0.5 կմ հս-արմ., ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա
14		«Ջրաղացի» աղբյուրներ	Անգեղակոթ գյուղի հվ-արմ. մասում, ծ.մ-ից 1770 մ բարձրության վրա
15		«Անապատի» աղբյուր	Անգեղակոթ գյուղի հարավային ծայրամասում, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա
16		«Սմուկի» աղբյուր	Անգեղակոթ գյուղից հվ-արլ. մասում, ծ.մ-ից 1740 մ բարձրության վրա
17		«Ծործոր» աղբյուրներ	Անգեղակոթ գյուղից 4 կմ հեռավորության վրա, Ծործոր գետի աջ ափին, ծ.մ-ից 1650 մ բարձրության վրա

18		«Անանուն» աղբյուր	Շաքի գյուղի արլ. ծայրամասում, ծ.մ-ից 1685 մ բարձրության վրա
19		«Որոտան» աղբյուր	Որոտան գյուղի հս. ծայրամասում

Անտառկառավարման պլանով նախատեսված տարածքից դուրս, անտառային հողերի վրա, ամենամոտ բնության հուշարձաններն են «Ջերթ» որմնաքանդակը՝ 250մ և «Շաքի» ջրվեժը՝ 300-400 մետր:

Պատմամշակույթային հուշարձաններից առկա են 2 մատուռ և մեկ հուշարձան(Կոմիտասի անվան), որոնք անտառային հողերում են: Մատուռներից մեկը նոր է, մյուսը հին, իսկ հուշարձանը ծառապատ տարածքում է Բռնակոթ գյուղի մոտ:

Բնության և պատմամշակութային հուշարձանների տեղադիրքը ներկայացված է Չավելված 4-ում:

### **11.10 Բնության հատուկ պահպանվող տարածքներ.**

«Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014 թ. N- 1059-Ա որոշման համաձայն Սյունիքի մարզում առկա են հետևյալ ԲՀՊՏ-ները.

#### **«Շիկահող» պետական արգելոց**

«Շիկահող» պետական արգելոց» տեղամասը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում Խուստուփ լեռան հարավ արևելյան և Մեղրու լեռնաշղթայի հյուսիս-արևելյան լանջերին Ծավ և Շիկահող գետերի վերին ավազաններում, 700-2800մ բարձրություններում: Այն հիմնվել է 1958 թվականին: Տարածքը կազմում է մոտ 12137հա: Կազմավորվել է կաղնու, բոխու, հաճարենու, սովորական կենու, սոսու անտառների և կենդանիների պահպանության նպատակով: Բուսական աշխարհը ներկայացված է բարձրակարգ բույսերի 432 ցեղի և 92 ընտանիքի 1100 տեսակներով, որոնցից 70-ը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում: Շիկահող արգելոցի տարածքում սողուններից հայտնի են գյուրզան, ջրային և սովորական լորտուները, դեղնափորիկը, հայկական լեռնատափաստանային վահանագլուխ իժը: Թռչուններից տարածված են վայրի հնդկահավը, քարարծիվը, սպիտակագլուխ անգղը, կաթնասուններից՝ գորշ արջը, գորշուկը, վարազը, այծյամը, գայլը, աղվեսը, գորշ նապաստակը, լայնականջ ոզնին, երբեմն բեզուարյան այծը, հովազը: Գտնվում է անտառտնտեսության տարածքից ուղիղ զծով 41կմ հեռավորության վրա:

#### **«Չանգեզուր» արգելավայր**



«Չանգեզուր» արգելավայրը ստեղծվել է 2009թ. հոկտեմբերի 15-ին (ՀՀ կառավարության N1187-Ն որոշում) և հանդիսանում է նոր պահպանվող տարածքներից մեկն է, որի նպատակն է ապահովել Սյունիքի մարզի Բարգուշատի լեռնաշղթայի հարավային և Չանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի մերձալպյան մարգագետնային և

մարգագետնատափաստանային բնական Էկոհամակարգերի լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության եզակի հուշարձանների, բնական պաշարների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումը, վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումն: Արգելավայրի տարածքը կազմում է 17369 հա: Ունի ընդհանուր սահմաններ անտառտնտեսության տարածքի հետ:

### **«Արևիք ազգային պարկ»**

«Արևիք» ազգային պարկը ստեղծվել է 2010թ: Ազգային պարկի տարածքում ներկայացված են լանդշաֆտային գոտիների գրեթե ողջ համակարգը՝ սկսած ցածր և միջին լեռնային կիսաանապատներից մինչև բարձր լեռնային տափաստաններն ու Մեղրի գետի վերին հոսանքների մերձավայրի տիպի լանդշաֆտը: Տարածքը կազմում է շուրջ 30353.8հա: Հատուկ ուշադրության առարկա են վայրի բնության հազվագյուտ և ոչնչացող տեսակները: Գտնվում է անտառտնտեսության տարածքից ուղիղ գծով 37կմ հեռավորության վրա:

### **«Սոսու պուրակ» արգելավայր**



«Սոսու պուրակ» արգելավայրը իր մեջ ներառում է արևելյան սոսու Կովկասում ամենախոշոր բնական պուրակը: Այն ստեղծվել է 1958 թ. և այժմ զբաղեցնում է 64.2 հա տարածք: Շնորհիվ ցածր ռելիեֆի, արգելավայրի կլիման մեղմ է ու բավականին տաք: Ձնածածկը ձևավորվում է ոչ ամեն տարի, արագ հալվում է և հասնում ոչ ավել, քան 10 սմ: Պուրակի հիմքում ընկած են 200-250-ամյա հազարից ավել ծառեր, որոնք հասնում են 30-35մ բարձրությանը և պահպանվել են մինչ այժմ: Բացի սոսուց, այստեղ աճում են նաև այլ արժեքավոր և հազվագյուտ տեսակներ՝ հունական ընկուզենին, արաքսյան կաղնին, հունական շրջահյուսը, թավշային իլենին և այլն: Գտնվում է անտառտնտեսության տարածքից ուղիղ գծով 48կմ հեռավորության վրա:

### **«Խուստուռլի» պետական արգելավայր»**



«Խոլստուլի» պետական արգելավայրը զբաղեցնում է 6946.74հա և ընդգրկում է Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խոլստուլի լեռնազանգվածի բարձր լեռնային հատվածը: «Խոլստուլի» պետական արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակը ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խոլստուլի լեռնազանգվածի անտառային գոտու վերին հատվածի, մարգագետնատափաստանային և մարգագետնային բնական Էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության հուշարձանների, բնության ժառանգության պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, ինչպես նաև բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումն է: Գտնվում է անտառտնտեսության տարածքից ուղիղ գծով 24կմ հեռավորության վրա:

**«Բողաքար»պետականարգելավայր»**





Կազմավորվել է 1989թ-ին, ունի 4048հա տարածք: Գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Չանգեգուրի լեռնաշղթայի հարավային լանջերին՝ 1400-2100մ բարձրություններում: Ստեղծվել է՝ բուսական աշխարհի ու կենդանական աշխարհի Էնդեմիկ (Սոսնովսկու վարդկակաչ, Թախտաջանի իլաճաղիկ և այլն) և հազվագյուտ (խոլորձներ, արաքսյան կաղնի, սագասոխուկ) տեսակների պահպանության նպատակով: Գտնվում է անտառտնտեսության տարածքից ուղիղ գծով 40կմ հեռավորության վրա:

### «Սև լիճ» արգելավայր



Սև լիճը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ Իշխանասար լեռնաստորոտի խառնարանային մասում՝ 2658 մ բարձր. վրա: Անհոսք քաղցրահամ լիճ է, որը կազմավորվել է ձնհալից և բնական աղբյուրներից, որոնք լցվել են լեռան խառնարանը: Լիճը շրջապատող տարածքը ծածկված է բուսականությամբ, որը բնորոշ է ալպյան մարգագետիններին: Առանձնացվում են 102 տեսակի բույսեր: Արգելավայրի նպատակն է պահպանել բարձր լեռնային հրաբխային ծագման եզակի ջրավազանը և նրա հարակից բնատարածքները, 102 տիպի անոթավոր բույսերն ու ալպյան գոտու բուսական և կենդանական համակեցություններ: Գտնվում է անտառտնտեսության տարածքից ուղիղ գծով 14կմ հեռավորության վրա:

## «Գորիսի արգելավայր»



Կազմավորվել է 1972-ին, ունի 1850 հա տարածք: Գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում՝ Որոտան գետի ավազանում՝ ծովի մակարդակից 1400-2800 մ բարձրություններում: Ստեղծվել է անտառային լանդշաֆտների և կենդանական աշխարհի (այծյամ, բծավոր եղջերու, գորշ արջ, կովկասյան մայրեհավ) պահպանության նպատակով: Գտնվում է անտառտնտեսության տարածքից ուղիղ գծով 8կմ հեռավորության վրա:

**11.11 Սոցիալական ոլորտ.** Անտառտնտեսության հարակից բնակավայրերը հիմնականում գտնվում են 1400-2150 մ բացարձակ բարձրությունների վրա, որը նպաստավոր է դաշտավարության համար, զարգացած է անասնապահությունը:

Անտառտնտեսության հարակից համայնքներն են՝ Սյունիքի մարզի Սիսիան խոշորացված համայնքը (ք. Սիսիան, ք. Դաստակերտ, գ. Ախլաթյան, գ. Աղիտու, գ. Անգեղակոթ, գ. Աշոտավան, գ. Արևիս, գ. Բալաք, գ. Բնունիս, գ. Բռնակոթ, գ. Գետաթաղ, գ. Դարբաս, գ. Թանահատ, գ. Թասիկ, գ. Իշխանասար, գ. Լծեն, գ. Լոր, գ. Հացավան, գ. Մուլք, գ. Նժդեհ, գ. Նորավան, գ. Շաղատ, գ. Շամբ, գ. Շաքի, գ. Շենաթաղ, գ. Որոտնավան, գ. Սալվարդ, գ. Վաղատին, գ. Տոլորս, գ. Տորունիք, գ. Ցղունի, գ. Ույծ), և Գորայք խոշորացված համայնքը (գ. Գորայք, գ. Ծղուկ, գ. Սառնակունք և գ. Սպանդարյան):

Գյուղական բնակավայրերը հիմնականում գտնվում են զարգացվածության գրեթե նույն մակարդակի վրա և բնութագրվում են բնակչության ցածր կենսամակարդակով, աշխատատեղերի բացակայությամբ, գյուղատնտեսական ենթակառուցվածքների ոչ

բավարար վիճակով: Անտառամերձ բնակավայրերի բնակչության մեծ մասի կախվածությունն անտառից չի նվազում և շարունակվում է բնափայտային ռեսուրսների չկարգավորված օգտագործումը:

Համայնքների տեղական ընթացիկ ծախսերի ֆինանսավորման հիմնական աղբյուրը համայնքների բյուջեներն են, ընդ որում համայնքները կարողանում են ինքնուրույն հոգալ իրենց ընթացիկ ծախսերի միայն փոքր մասը և այս հարցում մեծապես կախված են պետական աջակցությունից:

Անտառտնտեսության շրջակա համայնքները հիմնականում տեղաբաշխված են անտառտնտեսության անտառներին անմիջական 10 կմ-ոց գոտում, ընդհանուր հաշվով 36 բնակավայրերում՝ ծխերի թիվը մոտ 9151, մշտական բնակչության թիվը 29753, որից միայն Սիսիան քաղաքը՝ 4274 ծուխ, 14790 բնակիչ: Դեռևս 20 բնակավայրեր գազաֆիկացված չեն, իսկ որոշ գյուղեր ոչ ամբողջությամբ են գազաֆիկացված: Բնակչության ջեռուցման հիմնական աղբյուրը դեռևս փայտն է և կենսավառելիքը, ընդ որում ջեռուցման անտառտնտեսության հաշվարկային հատատեղային ծավալները կազմում են տարեկան միջինը՝ 1000 խտ.մ<sup>3</sup>: Վերջին 10 տարիներին անտառտնտեսությունում խնամքի և սանիտարական հատումներից պատրաստվել է ընդհանուր 902 խտ.մ<sup>3</sup> անտառանյութ: Առաջիկա 10 տարիներին նշված ծավալը մոտովորապես կպահպանվի: Դաշտային գույքագրման ընթացքում հաշվարկվել է ինչպես անտառտնտեսության անտառներում բնական թափուկ, այնպես էլ ապօրինի հատումների հետևանքով անտառում մնացած հիմնականում մանր տրամագծերի (4-12սմ) բնափայտի պաշարները, որը գնահատվել է շուրջ 300 խտ.մ<sup>3</sup>: Յուրաքանչյուր տարի անտառտնտեսության անտառներում առաջացած բնական թափուկը կազմում է մոտ 500 մ<sup>3</sup> (անտառածածկի 1հա-ի հաշվով մոտ 0,25 մ<sup>3</sup>), որը գրեթե ամբողջությամբ իրացվում է ազգաբնակչության կողմից՝ ջեռուցման նպատակներով: Բնակչությունը վառելափայտը հիմնականում ձեռք է բերում հարևան անտառտնտեսություններից:

### **Գյուղատնտեսություն.**

Անտառտնտեսության հարակից համայնքներում գյուղատնտեսության վիճակը բավարար չէ՝ ոռոգվող հողատարածքների սակավություն, ֆիզիկապես և բարոյապես մաշված գյուղատնտեսական մեքենասարքավորումներ, հողագործության մեջ ներդրումներ անելու համար սկզբնական կապիտալի բացակայություն, գյուղմթերքի պահպանման ենթակառուցվածքների անբավարարություն և այլն: Բանջար-բոստանային կուլտուրաների արտադրությունը հիմնականում ուղղված է տնտեսությունների սեփական կարիքների բավարարմանը: Այն աճեցնում են ոռոգվող տնամերձ հողամասերում: Համայնքներն ունեն անասնապահության զարգացման պոտենցիալ, որն առաջին հերթին պայմանավորված է արոտավայրերի առկայությամբ: Սակայն կենդանական ծագման արտադրանքի ոչ կայուն շուկան, հեռագնա արոտավայրեր գնացող ճանապարհների վատ վիճակը, դրանց մեծ մասի ոչ ջրարբիացված լինելը, բնակավայրերին մոտ գտնվող արոտավայրերի գերարածեցումը, պարբերաբար կրկնվող համաճարակները և այլն մեծ խնդիրներ են առաջացնում անասնապահության զարգացման համար:

Ուսումնասիրված համայնքներում մեծ է աշխատանքային միգրացիայի խնդիրը: Վերջին տարիների ընթացքում արձանագրվել է աշխատուժի արտահոսքի շարունակական աճ, ընդ որում մեկնողների մեծ մասը երիտասարդ տարիքի արական սեռի ներկայացուցիչներն են: Միգրացիան առավել մտահոգիչ է սոցիալական տեսանկյունից: Ընտանիքի գլխավոր




աշխատուժի բացակայության պարագայում տնտեսության և կենցաղի կազմակերպման և երեխաների դաստիարակության ամբողջ հոգսն ընկնում է կանանց վրա:

Համայնքների մեծ մասում գործում են 12-ամյա դպրոցներ, սակայն բոլոր համայնքներում աշակերտների թիվը նվազման միտում ունի: Դա պայմանավորված է ինչպես ծնելիության անկմամբ, այնպես էլ դեպի քաղաքներ երիտասարդ ընտանիքների արտահոսքով: Սա շատ լուրջ խնդիր է համայնքների համար: Բնակավայրերում մշակութային իրադաձությունները հազվադեպ են: Երբեմն կազմակերպվում են համերգներ, հանդիսություններ տոների առիթով, ներկայացումներ և այլն: Մշակութային միջոցառումների անցկացումը կարևոր նշանակություն ունի համայնքների համար սոցիալական և տնտեսական առումով: Այդպիսի միջոցառումները կարող են տուրիստների և այցելուների լրացուցիչ հոսք և հետևաբար համայնքների համար լրացուցիչ եկամուտներ ապահովել:

### **11.12 Տրանսպորտ և ճանապարհներ**

Տրանսպորտը և ճանապարհները համայնքների համար կենսական նշանակություն ունեցող խնդիրներից է: Ճանապարհների վիճակը հիմնականում բավարար է: Հասարակական տրանսպորտով մարզկենտրոնի հետ կապի խնդիր կա՝ հատկապես ձմռան ամիսներին: Սիսիանի տարածաշրջանը, որտեղ տեղաբաշխված են նույնանուն անտառտնտեսության անտառները, հանրապետության գլխավոր կոմունիկացիոն ուղիներին միացված է Երևան-Արարատ-Կապան-Մեղրի Մ2 ավտոմայրուղով:

Սիսիանի անտառտնտեսության տարածքի ճանապարհային ցանցը



**12. Անտառկառավարման պլանով նախատեսվող գործողությունների ընդհանուր բնութագրերը, հեռանկարային լուծումները:**

Անտառներն, ունենալով տնտեսական, էկոլոգիական և հասարակական կարևորություն, հանդիսանում են կապիտալ և ունեն յուրօրինակ արժեք: Անտառային կոմիտեի «Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաձյուղի անտառների և անտառային հողերի անտառաշինական նախագծերի (անտառակառավարման պլանների) նախագծահետազոտական աշխատանքները կատարվել են «ԳԵՈՍԷՓ» ՍՊԸ-ի կողմից՝ համաձայն կնքված պայմանագրի և նախագծային փաստաթղթի պահանջներին համապատասխան:

Անտառկառավարման պլանով նախատեսվող ընդհանուր տարածքը կազմում է 5946 հա մակերես, Սիսիանի անտառապետությունը՝ 3129հա, Շաղատի անտառապետությունը՝ 2817հա: Կառավարման պլանը կազմվել է 10 տարվա կտրվածքով: Կառավարման պլանով վեր են հանվել անտառօգտագործման խնդիրները (հատումներ, վնասատուներից և հիվանդություններից վնասված, հրդեհված, դեգրադացված և էրոզացված տարածքներ), զարգացման առաջնահերթությունները (անտառների դինամիկան, տաքսացիոն բնութագրերը՝ ընդհանուր պաշարը, պաշարի ընթացիկ աճը, կազմը, կառուցվածքը, կենսազանգվածը, անտառածման պայմանների վերլուծությունը և այլ անհրաժեշտ անտառգնահատման ցուցանիշներ), անտառօգտագործման արդյունավետությունը, կողմնակի անտառօգտագործման և ոչ բնափայտային կողմնարդյունքի, ինչպես նաև համայնքային այլ կարիքների ծավալների վերլուծությունը և գնահատումը:

Հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման շրջանակներում սահմանվել են՝ «Անտառտնտեսության» «Սիսիանի անտառապետություն» մասնաճյուղի առաջնային և երկարաժամկետ նպատակները: Կատարվել են տարածքի անտառների և անտառային հողերի քարտեզագրում՝ ըստ անտառի կառավարման պլանի, բոնիտետի, լրիվության, գերակշռող ծառատեսակների, հասակային դասերի, տարիքային խմբերի, նպատակային նշանակության, հրդեհավտանգավորության դասերի և այլն: Կատարվելու է սահմանների ճշգրտում, անտառային հատվածների գույքագրում, սերմնային տարածքների վեր հանում և պրոտեկցիալ գնահատում: Նախատեսվում է նաև անտառսերմնային տեղամասերի և տնկադաշտերի առանձնացում, անտառապատման, անտառվերականգնման, անտառապահպանության և օգտագործման ծավալների, անտառային կողմնարդյունքի, անտառամերձ համայնքների բնափայտի և անտառի կողմնարդյունքի կարիքների գնահատում, անտառային պաշարների օգտագործում: Վեր է հանվում անտառանյութի օգտագործման սոցիալական և տնտեսական ազդեցությունը (բնափայտ, արոտավայրեր, կենսաարտադրանք, տեղական բնակչության զբաղվածություն, չքավորության աստիճան և եկամուտների ստացման հնարավորություններ, բնապատմական հուշարձանների դերը), ինչպես նաև դրանց նշանակությունը՝ տեղական կարիքների բավարարման տեսանկյունից: Սահմանում է տարեկան հատումների թույլատրելի քանակները, անտառապատմանը, անտառվերականգնմանը, անտառապահպանմանն ուղղված միջոցառումները:

Իրականացվել են նաև կենսաբազմազանության գույքագրման և գնահատման, բարձրարժեք բնապահպանական անտառների որոշման և քարտեզագրման, ինչպես նաև Էկոհամակարգային ծառայությունների գնահատման աշխատանքներ:

Ելնելով անտառի իրավիճակի վերլուծությունից, համաձայն որի կրճատվել են անտառային մշակույթների մակերեսները, կառավարման պլանով նախատեսվում է նոր անտառների հիմնման ծավալում նախատեսել բացառապես խառը կազմով մշակույթներ՝ օգտագործելով և՛ ասեղնատերևավոր և՛ լայնատերև ծառատեսակներ, ինչը կբարձրացնի կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարողականությունը, միաժամանակ կնպաստի անտառմշակույթների դիմադրողականության բարձրացմանը անտառային հրդեհների նկատմամբ:

**12.1 Բնափայտի մթերում.** անտառտնտեսությունում բնափայտը մթերվում է անտառի խնամքի և սանիտարական հատումներից և մասամբ այլ հատումներից: Անտառտնտեսությունում հատուկ անտառապատրաստման արտադրություն և

անտառհումբային բազաներ չկան: Ուստի անտառտնտեսությունում բնափայտի արտադրությունը կատարվում է հետևյալ սկզբունքով.

- հատման նշանակված կանգուն ծառերի հատում բենզասղոցով,
- անտառում շինափայտի, վերամշակման ենթակա փայտի և վառելափայտի առանձնացում և կուտակում,
- անտառից փայտի տեղափոխում մեքենայի բարձման հարթակ՝ տրակտորով կամ հատուկ տեխնիկայով,
- բարձում և բեռնաթափում՝ ձեռքով:

## Աղյուսակ 26.

### 2009-2019 թթ. հատումների ամփոփ տվյալներ

Սանիտարական հատում, մ <sup>3</sup>	444,13
որից շինափայտ, մ <sup>3</sup>	34,9
Խնամքի հատումներ, մ <sup>3</sup> , որից	457,61
անցումային հատում	435,07
Նոսրացման	22,54

Առաջիկա 10 տարիներին նշված ծավալը կպահպանվի: Յուրաքանչյուր տարի անտառտնտեսության անտառներում առաջանում է մոտ 500մ<sup>3</sup> (անտառածածկի 1հա-ի հաշվով մոտ 0,25մ<sup>3</sup>) բնական թափուկ, որը գրեթե ամբողջությամբ իրացվում է տեղի ազգաբնակչության կողմից՝ ջեռուցման նպատակներով:

Անտառտնտեսության անտառներում կատարվել է դաշտային գույքագրում, որի ընթացքում հաշվարկվել է ինչպես բնական թափուկը, այնպես էլ ապօրինի հատումների հետևանքով անտառում մնացած (հիմնականում մանր տրամագծերի՝ 4-12սմ) բնափայտի պաշարները՝ 300 խտ.մ<sup>3</sup> քանակով:

**12. 2 Կողմնակի (ոչ բնափայտային) անտառօգտագործում.** առանց անտառային Էկոհամակարգին վնաս հասցնելու՝ անտառներում բացի բնափայտի մթերումից կարող են իրականացվել նաև անտառօգտագործման հետևյալ տեսակները.

- երկրորդական անտառանյութի մթերում,
- կողմնակի անտառօգտագործում,
- կենդանական աշխարհի վերարտադրության կազմակերպման և օգտագործման, նպատակներով անտառօգտագործում,
- գիտահետազոտական նպատակներով անտառօգտագործում,
- մշակութային, առողջարարական, սպորտի, հանգստի և զբոսաշրջության նպատակներով անտառօգտագործում:

Սիսիանի անտառտնտեսության անտառներում պտուղ-հատապտուղները հիմնականում ստացվում են ենթանտառից՝ կազմավորված թփերի խառը տեսակներով, որի համար առանձնացվել են ԲԲԱԱ 4.2 ենթատիպը և ԲԲԱԱ 5 տիպը՝ համապատասխանաբար 1018,2 հա և 1860,9 հա:

ԲԲԱԱ՝ բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների 5 տիպը սահմանվում է ըստ Ազգային ուղեցույցի չափորոշիչներին համապատասխան և ներառում է տեղաբնակների համար մեծ կարևորություն ունեցող անտառային տեղամասեր, որոնք ծառայում են որպես մնդի, ջրի, վառելիքի, դեղամիջոցների, խոտհնձի և գոյության այլ կենսապահանջներն ապահովող անփոխարինելի տարածքներ: Անտառների կողմից տրամադրվող այդ բարիքները համարվում են բնակչության համար անփոխարինելի, եթե չկան դրանք ձեռք բերելու այլընտրանքային տարբերակները կամ դրանք հասանելի չեն գոնե տարվա որոշակի ժամանակահատվածում:

2021-2030թթ. անտառօգտագործման ծավալները ներկայացվում է հետևյալ աղյուսակով:

### Աղյուսակ 27.

#### Անտառօգտագործման նախատեսած ծավալներն ըստ հատման տեսակների 2021-2030թթ.

Անտառօգտագործման նախատեսած ծավալներն ըստ հատման տեսակների 2021-2030թթ							
ՀՀ	Հատման տեսակները	Անտառօգտագործման ծավալները					
		Մակերեսը հա	Հատվածներում ընդհանուր պաշարը	Հատման նախատեսած պաշարը, խտ.մ <sup>3</sup>			
				Ընդհանուր	Այդ թվում իրացման ենթակա	շինափայտ	վառելափայտ
1	Խնամքի հատումներ	15,0	2360	325	274	139	135
2	Սանիտարական հատումներ	5,9	810	95	77	22	55
3	<b>Ամբողջը</b>	<b>20,9</b>	<b>3170</b>	<b>420</b>	<b>351</b>	<b>161</b>	<b>190</b>

**12.3 Էկոհամակարգային ծառայությունները.** ներառում են Էկոհամակարգերի կենսագործունեության կյուբական և Էներգետիկ արդյունքների տրամադրման, կարգավորման, մշակութային և այլ նպաստող ծառայություններ:

Սիսիանի անտառտնտեսության համար կատարվել է կենսազանգվածի ուսումնասիրության ծառայություններ՝ վերգետնյա, ստորգետնյա կենսազանգվածի, չորացած և տապալված բնափայտի, անտառային թափուկի: Հաշվարկվել է Սիսիանի անտառտնտեսության անտառներում կուտակված ածխածնի քանակը: Անտառտնտեսության 2088,1 հեկտար անտառածածկ տարածքում ածխածնի կուտակումը կազմում է մոտ 181,41 հազար տոննա, կամ 1 հեկտարի հաշվով մոտ 87,0 տոննա:

#### Ածխաթթու գազի կլանման ծառայության գնահատում.

Անտառի կարևորագույն կարգավորող ծառայություններից մեկը դա ածխաթթու գազի կլանման (կլիմայի փոփոխության մեղմացման) ծառայությունն է: Անտառային Էկոհամակարգերում ածխածնի պարունակության հաշվարկի համար հիմք են ընդունվել հետևյալ կատեգորիաները և բնորոշումները.

- Վերգետնյա կենսազանգվածը, որը հողի մակերեսին գտնվող կենսազանգվածն է: Այն ներառում է բունը, կոճը, ճյուղերը, կեղևը, սերմերն ու տերևները:

- Ստորգետնյա կենսազանգված, որը հողի մակերեսից ներքև գտնվող կենդանի արմատների ամբողջ կենսազանգվածն է (չեն հաշվվում 2մ-ից պակաս տրամագծով



արմատները, քանի որ դրանք հնարավոր չէ փորձնական եղանակով տարբերել հողի օրգանական նյութից կամ անտառային թափվածքից):

- Չորացած և տապալված բնափայտի կենսազանգված, որն ամբողջ անկենդան բնափայտային կենսազանգվածն է առանց անտառային թափուկի, կամ այն հաշվվում է որպես չորացած կամ տապալված թափուկ՝ հողի վրա կամ ծածկված հողի շերտով: Չորացած կամ տապալված բնափայտը ներառում է հողի մակերեսին գտնվող բնափայտը, մեռած արմատները և 10սմ և ավելի տրամագծով կոճղերը:

- Անտառային թափուկ, որը 10սմ-ից պակաս տրամագծով բնափայտի անկենդան կենսազանգվածում, որը գտնվում է քայքայման տարբեր փուլերում, հանքային կամ օրգանական հողի մակարդակում: Այս կատեգորիայի մեջ են մտնում անտառային թափուկը, հումուսային և գոլորշառաջացնող շերտերը:

Կենսազանգվածի պաշարը և ածխածնի կուտակումը գնահատվել է կլիմայի փոփոխության խնդիրներով զբաղվող միջազգային խմբի կողմից մշակված ձեռնարկում առաջարկված մեթոդոլոգիական ցուցումների համաձայն ([www.fao.org/forestry](http://www.fao.org/forestry)): Բների, վերգետնյա և ստորգետնյա կենսազանգվածի հաշվարկման համար օգտագործվել են կենսազանգվածի հաստատուն նշանակությունները և արմատ/ընծյուղ հարաբերակցությունը:

Այս մեթոդաբանությամբ հաշվարկվել է Սիսիանի անտառտնտեսության անտառներում կուտակված ածխածնի քանակը:

## Աղյուսակ 28.

### Անտառներում կուտակված ածխածինը (2020թ)

Կատեգորիա	Ածխածնի պարունակությունը (հազ. տոննա)
Վերգետնյա կենսազանգվածում ածխածնի պարունակությունը	34,63
Ստորգետնյա կենսազանգվածում ածխածնի պարունակությունը	7,80
Ընդամենը՝ կենդանի կենսազանգվածում	42,43
Չորացած և տապալված բնափայտում ածխածնի պարունակությունը	0,46
Թափվածքում ածխածնի պարունակությունը	59,22
Ընդամենը անկենդան կենսազանգվածում	59,68
Հողում (30սմ խորության վրա) ածխածնի պարունակությունը	79,30
Ընդամենը ածխածնի կուտակում	<b>181,41</b>

Անտառտնտեսության 2088,1 հեկտար անտառածածկ տարածքում ածխածնի կուտակումը կազմում է մոտ 181,41 հազար տոննա, կամ 1 հեկտարի հաշվով մոտ 87,0 տոննա: Համաձայն անտառային ռեսուրսների գլոբալ գնահատման 2015 թվականի

հաշվետվության, Հայաստանի անտառներում նշված ցուցանիշը գնահատվել է 1 հեկտարի հաշվով մոտ 92,4 տոննա (FRA 2015 – Country Report, Armenia):

Ածխածնի կուտակումը պայմանավորված է կենդանի կենսազանգվածի աճով, իսկ կորուստը պայմանավորված է անտառանյութի հատումներով, հրդեհներով, վնասատուների և հիվանդությունների հետևանքով կենսազանգվածի կորուստներով, ինչից և ստորգետնյա կենդանի կենսազանգվածը վեր է ածվում անկենդան կենսազանգվածի:

Ածխաթթու գազի կլանումը հաշվարկելու նպատակով որոշվում է հիմնական անտառնկազմող և ուղեկցող ծառատեսակների միջին տարեկան աճը ( $m^3$ ), այնուհետև, հիմք ընդունելով անտառագիտական ուսումնասիրություններից նշված ծառատեսակների բնափայտի բազիսային խտության գործակիցները, զանգվածը (կենդանի կենսազանգվածը) վերածվում է չոր նյութի ( $P_0$ ): Տարբեր ծառատեսակների համար ստացված գործակիցները (բնափայտի բազիսային խտությունը) միջին կշռային մեթոդով վեր է ածվում միջին գործակցի, որոշվում է ածխածնի քանակը չոր նյութում ըստ տարբեր ծառատեսակների, որից հետո միջին կշռային մեթոդով դուրս է բերվում միջինը:

Սիսիանի անտառտնտեսության անտառներում տարեկան միջին աճը կազմում է մոտ 8100  $m^3$ : Արդյունքում ստացվում է տարեկան 181,41 տ ածխածնի կուտակում և 1501,1 տ ածխաթթու գազի կլանում:

## Աղյուսակ 29.

### Տարեկան միջին աճն ըստ ծառատեսակների

Տեսակը	Տարեկան միջին աճը (հմ)	Բազիսային խտությունը (տ/հմ)	Կենսազանգվածը	ԿՓՓՄԽ (IPCC) գործակիցը	Ածխածնի կլանումը, տոննա	CO <sub>2</sub> տ)
Կաղնի	1194,6	0,538	642,69	0,48		C(տ)*44/12
Բոխի	81,64	0,57	46,53			
Սոճի	176,0	0,64	112,64			
Հացենի	30,13	0,415	12,50			
Այլ տեսակներ	61,23	0,63	38,57			
<b>Ը ն դ ամ է ն ը</b>	<b>1543,6</b>		<b>852,93</b>		<b>409,4</b>	<b>1501,1</b>

**12.4 Սնդի տրամադրման ծառայություններ.** տեղի ազգաբնակչությունը հիմնականում անձնական և կենցաղային կարիքների համար հավաքում և օգտագործում է հատապտղային և այլ տեսակներ, հիմնականում՝ ընկույզ, հոն, տանձ, մոշ, մասուր և այլն: Կատարված դաշտային գույքագրման արդյունքներով անտառտնտեսության տարածքում պտուղ-

հատապտուղների գերակշռությամբ ծառուտների մակերեսը կազմում է 1460 հա է, որից ակնկալվող բերքը գնահատվել է մոտ 11985 կգ:

Բնակչության կողմից օգտագործվում է նաև Սիսիանի անտառտնտեսության տարածքում հանդիպող ուտելի խոտաբույսերը: Ուտելի և համեմունքային տեսակներին են պատկանում շուշան-բանջար, ավելուկ, մանդակ արևելյան, սիբեի սովորական և այլ խոտաբույսերը, ինչպես նաև ընկույզ, հոն, տանձ, մոշ, մասուր և այլ հատա-պտղային տեսակներ: Համաձայն ծրագրի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների՝ բնակչության կողմից սննդի համար առավել օգտագործվող խոտատեսակների մոտավոր պաշարները 2664,3հա ընդհանուր տարածքներում քարտեզագրվել և գնահատվել է, որը կազմել է 6870կգ մոտավոր բերք:

**12.5 Անտառվերականգնման աշխատանքներ.** անտառվերականգնման աշխատանքների համար հաշվի է առնվել տարբեր բոնիտետներում և հողային կատեգորիաներում բնական վերածի ընթացքը և անտառաճման պայմանները, հիմք ընդունելով հողային բերրիության և անտառաճեցման պիտանելիության դասակարգումն՝ ըստ խմբերի:

- Անտառաճեցման պիտանելիության առաջին խմբի մեջ են մտնում մինչև 20° թեքության լանջերը՝ հողերի հզորությամբ կամ միջին հզորությամբ, մայրական ապարների մինչև 20% ելքով: Այս պայմաններում կարող են աճել արժեքավոր, արագաճ, երկարակյաց անտառային, ինչպես նաև պտղատու տեսակներ:

-Երկրորդ խմբի մեջ են ներառվում ավելի փոքր հզորություն ունեցող հողերը, համեմատաբար վատ անտառաճեցման պայմաններով՝ միջին աստիճանի քարքարոտ, մայրական ապարների 20-40% ելքով, միջին հզորության՝ մինչև 35° թեքության լանջերի վրա գտնվող տարածքները: Նշված պայմաններում բարձրարժեք տեսակների աճի և արտադրողականության տեսանկյունից զիջում են առաջին խմբին:

- Երրորդ խմբի մեջ մտնող հողերի պայմանները սահմանափակ են անտառաճեցման հնարավորությունների համար: Այստեղ աճում են սահմանափակ տեսակների ծառաթփատեսակներ, որոնք պահանջկոտ չեն հողակլիմայական պայմանների նկատմամբ:

-Չորրորդ խմբի մեջ են մտնում հողային պայմանների այն տարբերակները, որոնք բավարար չեն անտառաճեցման համար՝ շատ ուժեղ քարքարոտ են, մայր ապարի 60% և ավելի ելքով:

Անտառմշակույթների հիմնման համար ծառերի և թփերի տեսակաշարը որոշվում է, հաշվի առնելով տարածաշրջանի հողակլիմայական առանձնահատկությունները, տեղանքի ռելիեֆը և վերականգնողականությունը, նախատեսված առանձին հատվածների լանջերի դիրքադրությունը և ծովի մակերևույթից բարձրությունը:

Նախատեսվող անտառտնկման եղանակը՝ սերմերի ցանքի կամ տունկի, կախված է անտառհիմնվող տարածքի տեղադրությունից, վիճակից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, անտառապատման նպատակից:

Դաշտային ուսումնասիրության արդյունքներով, հաշվի առնելով անտառաճման պայմանները և ծառատեսակի կենսաբանական առանձնահատկությունները, ընտրվել են համապատասխան անտառվերականգնման եղանակները, հիմնման սխեմաները և հաշվարկվել են տնկանյութի ու սերմերի պահանջարկը:

Անտառտնտեսությունում նոր անտառների հիմնման համար հաշվի է առնվել Սիսիանի անտառտնտեսության ոչ բարենպաստ պայմանները: Տնկման եղանակով առաջարկվում է օգտագործել հիմնականում փակ արմատային համակարգով աճեցված տնկանյութը:

Անտառապատման աշխատանքները կատարվելու են այն տարածքներում, որպեսզի չխոչնդոտեն համայնքի բնակիչների կողմից նշված տարածքներում գյուղատնտեսական նպատակներով հողերի օգտագործումը:

### **Անտառվերականգնման աշխատանքները կատարվելու են հետևյալ եղանակներով.**

**Անտառհիմնման խրամատային եղանակ.** անտառհիմնումը հիմնականում նախատեսվում է հատկապես խրամատային՝ կիրառելով սերմնաբուսակների տնկման և սերմերով ցանքսի եղանակը: Իսկ խոշոր տնկանյութով համեմատաբար հարթ տարածքներում հիմնելու դեպքում՝ փոսային եղանակով: Խրամատների երկարությունը՝ 1500-3000 գծմ/հա՝ կախված հողատեսքից և մայր ապարների ելքի աստիճանից:

**Անտառտնկման՝ սերմերի ցանքի կամ տունկի եղանակ:** Այս դեպքում ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ տնկիներն առաջին տարիներին ավելի արագ են աճում և ավելի քիչ են տուժում մոլախոտերի հետ պայքարում, ինչպես նաև քիչ են վնասվում կրծողների և թռչունների կողմից:

**Բնական վերականգնման օժանդակման եղանակ.** ծրագրի շրջանակներում իրականացվելու է բնական վերականգնման օժանդակում՝ ցածր լրիվության ծառուտներում ցանկապատման և հանքայնացման միջոցով: Նախատեսվում է նաև հարթակներով (1x1մ) լրացուցիչ սերմերի ցանքս, որոնց քանակությունը կախված է ծառուտի լրիվությունից, մայր ապարների ելքից և առկա բնական վերածի քանակությունից՝ 500-1000 հատ 1 հեկտարում:

**Անտառմշակույթների հիմնման ժամանակ նախատեսվող սխեմաները.** անտառմշակույթների հիմնման համար նախատեսվում է հետևյալ գործողությունները.

**ա) Կաղնի խոշորառեջ.** կատարվելու է կաղնու (հիմնական տեսակ) սերմերի ցանքսով՝ հացենի, թխկի, կեչի, թեղի (ուղեկցող տեսակներ) խառը հիմնամբ: Հողի նախապատրաստումը կատարվելու է 15°-ից բարձր թեքությունների վրա՝ խրամատներով (0.5x0.35 մետր), երկարությունը՝ 10 մետր, հորիզոնական ուղղությամբ 2 մետր ընդհատումով: Խրամատների ընդհանուր երկարությունը 1 հեկտարում՝ կախված մայր ապարների ելքի տոկոսից, նախատեսվել է 1500-3000 գծմ: Մեկ ցանքսատեղում առաջարկվում է 3-5 սերմ:

**բ) Սոճու անտառմշակույթների հիմնում.** հիմնվելու է սոճու 2 և ոչ ավել 3 տարեկան՝ փակ արմատային սերմնաբուսակներ, որի դեպքում հողի նախապատրաստման, տնկման և խնամքի ագրոտեխնիկական պահանջների բավարարման դեպքում ապահովվելու է բարձր կաչողունակություն և ընթացիկ աճ: Հաշվի առնելով սոճուտներում, հատկապես սաղարթային հրդեհների առաջացման դեպքերը, հրդեհաշիջման աշխատանքների մեծ դժվարությունները և հնարավոր կորուստները, հրդեհների տարածումը կանխելու նպատակով նախատեսվում է խրամատային եղանակով հիմնել 2 շարք սոճի, յուրաքանչյուր 3-րդը լայնատերևավոր ծառատեսակներով՝ բուսակ-տնկիներով:

**գ) Փոսերով հողի նախապատրաստումը** (0,5x0,5x0,5 մետր). նախատեսվում է լանջերի մինչև 15° թեքություններում, համեմատաբար խոշոր տնկանյութով հիմնադրման համար 3x3 մետր սխեմայով՝ անտառային տանձենու և խնձորենու համար:

**դ) Անտառվերականգնում հանքայնացման եղանակով.** կատարվելու են 0,3-0,4 լրիվության անտառներում մայր սաղարթի տակ բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ՝ ցածր լրիվության ծառուտների լրիվության և արդյունավետության բարձրացման նպատակով: Այս դեպքում պատրաստվելու են հարթակներ (1x1 մետր), կատարվելու է խաշամի փխրեցում և հարթակների 4 անկյուններում սերմերի ցանում:

Խրամատների ընդհանուր երկարությունը և հարթակների քանակությունը որոշվում է հաշվի առնելով ծառուտի լրիվությունը, առկա բնական վերածի քանակությունը և մայր ապարների ելքի տոկոսը: Այս տեսանկյունից նախատեսվող հարթակների թիվը կազմում է 500-1000 հատ, որն ապահովում է համապատասխանաբար 2000-4000 ցանքատեղ: Անմիջական մայր սաղարթի տակ սերմերի ցանքս չի կատարվում, այլ կատարվում է սերմերի տարածման գոտուց դուրս:

Անտառագիտական հասկացողությամբ անտառմշակույթները բավարար կայջողականություն, աճ և պահպանվածություն ապահովում են հիմնման տարում և հաջորդող 4-5 տարիներին 15 անգամ կատարված խնամքի դեպքում, ընդ որում հիմնան տարում (գարուն) կատարվում է քաղհան փխրեցում՝ 5, 2-րդ տարում՝ 4 անգամ, 3-րդ տարում՝ 3, 4-րդ տարում՝ 2 և 5-րդ տարում՝ 1 անգամ:

Անտառապատման աշխատանքների կատարման ժամանակ անտառմշակույթների հիմնման տարածքներում նախատեսվում է ցանկապատի կառուցում՝ նշված տարածքներում անասունների մուտքը կանխելու նպատակով: Ցանկապատը լինելու է մետաղյա փշալարով, ամրացման սյունները փայտից:

**Անտառկառավարման պլանով 2021-2030 թվականների** համար նախատեսվում են անտառհիմնման և վերականգնման միջոցառումներ՝ ընդհանուր 449,6 հեկտարի վրա: Նույն թվում անտառային բացատներում և ազատ տարածքներում (պարապուտ)՝ 350,6 հա, հրդեհված, մահացած և չվերականգնված տարածքներում, ինչպես նաև անթրոպոգեն նոսրուտներում՝ ընդհանուր 80,2 հա: Ցածր լրիվության ծառուտների լրիվության և արտադրողականության բարձրացման միջոցառումներ նախատեսվում է բնական վերականգնման միջոցառումներ՝ ընդամենը 18,8 հեկտարի վրա, հարթակների պատրաստման եղանակով՝ լրացուցիչ սերմերի ցանքով: Նոր հիմնած անտառտնկարկների պահպանման և բնական վերականգնման օժանդակման նպատակով նախատեսվում է 24000զծմ ցանկապատում, որի արդյունքում շուրջ 560 հեկտար անտառային հողերում կկանխվի անասունների մուտքը, ինչն էլ կնպաստի բնական վերականգնմանը:

Համաձայն կառավարման պլանի նախագծի նախատեսվում է 2021-30թթ. շրջանում իրականացնել անտառապահպանման և անտառվերականգնման միջոցառումներ՝ հետևյալ ծավալներով:

## 2021-30թթ ընթացքում նախատեսված միջոցառումներ

2021-30թթ ընթացքում նախատեսված միջոցառումներ			
ՀՀ	Միջոցառման անվանումը	Չափի միավորը	Մակերեսը, հա
1	Անտառային մշակույթների հիմնում ոչ անտառածածկ տարածքներում	հա	430,8
1.1	Բացատներում և պարապուտ տարածքներում	հա	350,6
1.2	Մահացած տնկարկներում և անթրոպոգեն նոսրուտներում	հա	80,2
2	Բնական վերաճին օժանդակող միջոցառումներ ցածր լրիվության ծառուտներում հանքայնացում, սերմերի ցանքս	հա	18,8
3	Ցանկապատում 24000 գծմ		560
4	Տնկարանի հիմնում	հա	0,3

2021-30թթ ընթացքում Սիսիանի անտառտնտեսության անտառպատման և անտառվերականգնման աշխատանքների ծավալներն ամբողջությամբ ներկայացված է միջոցառումների ամփոփ աղյուսակով՝ Հավելված 2:

**Անտառվերականգնման նախատեսվող տարածքների սերմերի և սերմնաբուսակ-տնկիների պահանջը ըստ անտառապետությունների**

Գ/Գ	Անտառապետություն	Վերականգնման նախատեսվող մակերեսը, հա		Սերմերի և տնկիների պահանջը		
				Տեսակը	Մե քմ,կգ	Սերմնաբուսակ,տնկի, հատ
1	Սիսիանի	203,9	Բացառ և պարապուտ-132,6 հա Մահացած տնկակ - 63,7 հա Ցածր լրիվության ծառուտ-7,6 հա	Կաղնի	2609	
				Սոճի		181840
				Հացի,թխկի,լեչի,թեղի		291305
				Ակացիա սպիտակ		17400
				Խնձորենի,տանձենի		25300
			Ընդամենը	2609	515845	
2	Շաղատի	245,7	Բացառ և պարապուտ-218 հա Նոսրուտ -10,4 հա Մահացած տնկակ- 6,1 հա Ցածր լրիվության ծառուտ- 11,2հա	Կաղնի	3606	
				Սոճի		343230
				Հացի,թխկի,թեղի,լեչի		383075
				Ակացիա սպիտակ		11310
				Խնձորենի,տանձենի		4700
			Ընդամենը	3606	742315	
Ամբողջը անտառտնտեսությունում		449,6	Բացառ և պարապուտ-350,6 հա Նոսրուտ-10,4հա Մահացած տնկակ- 69,8 հա Ցածր լրիվության ծառուտ-18,8 հա	Կաղնի	6215	
				Սոճի		525070
				Հացի,թխկի,թեղի,լեչի		674380
				Ակացիա սպիտակ		28710
				Խնձորենի,տանձենի		30000
			Ընդամենը		1258160	

**Տնկանյութի աճեցում.** 2021-30թթ. ժամանակաշրջանում նախատեսվում է անտառի հիմնում ոչ անտառաձածկ 430,8 հեկտար մակերեսի վրա՝ տարեկան մոտ 43 հեկտար: Տնկանյութի տեսականու ընտրությունը կատարվել է ելնելով կոնկրետ անտառաճման պայմաններից, հարմարվածության և արժեքավոր տեսակների վերականգնման և կենսաբազմազանության պահպանման հանգամանքներից:

2021-30թթ. համար ահրաժեշտ բուսակ-տնկանյութը (ներառյալ նաև բուսակները և լրացման անհրաժեշտ 20%-ը) կազմում է 1509792 հատ, իսկ միայն վերականգնման համար խոշորառեջ կաղնու սերմերի պահանջը գնահատվել է 6215կգ:

Անտառային բացատներում և բուսականությունից ազատ (պարապուտ) տարածքներում նախատեսվում են անտառվերականգնում՝ հիմնականում արևելյան կաղնու սերմերի ցանքով, ինչպես նաև՝ սոճի, հացի, թխկի, թեղի և կեչի ծառատեսակների տնկիների հետ խառը անտառաձակույթների հիմնում:

Անթրոպոգեն նոսրուտներում, ինչպես նաև ցածր լրիվության սոճուտներում հիմնականում նախատեսվում է բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ՝ հանքայնացման և կաղնու սերմերի ցանքով:

Տարբեր տարիներին անտառաճման համեմատաբար ոչ բարենպաստ հողային պայմաններում սոճու կամ կաղնու բուսակներով հիմնված և ներկայումս մահացած հատվածներում նախատեսվել է սպիտակ ակացիա տեսակի տնկում:

Անտառպատման և վերականգնման նախատեսվող ծավալների տնկանյութի տարեկան պահանջարկը բավարարելու համար պահանջվում է տարեկան ցանքսի համար 0,3 հեկտար մակերեսով տնկարան: Առաջարկվող տնկարանը գտնվում է անտառտնտեսության գրասենյակի հարակից տարածքում, ապահովված է ոռոգման ջրով: Տնկարանը կառուցվելու է հիմք ընդունելով 2012թ. դեկտեմբերի 17-ի N224-Ն հրամանով հաստատված անտառսերմային և տնկարանային տնտեսության վարման կանոնների 7-րդ բաժնի դրույթների պահանջները:

**Աղյուսակ 32.**

**Անհրաժեշտ տնկանյութի աճեցման հաշվարկ**

Աճեցվող տեսակը	Տարեկան պահանջվող տնկանյութը, հատ	1 հա-ից բուսակների ստացման նորման, հազ. հատ	Տարեկան ցանքսի մակերեսը, հա	Ցանքաշրջանառության դաշտերի թիվը	Տնկարանի ընդհանուր մակերեսը, հա		Սերմերի ցանքսի նորման կգ/հա	Ցանքսի համար տարեկան անհրաժեշտ սերմերի քանակը, կգ
Սոճի սովորական կամ կովկասյան	63000	900	0.070	4	0.280		60	4.200
Սպիտակ ակացիա	3445	450	0.008	4	0.031		60	0.459
Հացենի սովորական	29000	400	0.073	4	0.290		230	16.675
Թխկի	20000	350	0.057	4	0.229		290	16.571



սրատերև/սոսիատերև							
Կեչի լիտվինովի կամ ելունդավոր	18030	400	0.045	4	0.180	3	0.135
Թեղի լեռնային	13905	400	0.035	4	0.139	120	4.172
Տանձենի կովկասյան	1800	350	0.005	4	0.021	50	0.257
Խնձորենի արևելյան	1800	300	0.006	4	0.024	50	0.300
<b>Ընդամենը</b>	<b>150980</b>		<b>0.3</b>		<b>1.193</b>		<b>42.77</b>

Առաջարկվող տնկարանը գտնվելու է անտառտնտեսության գրասենյակի հարակից տարածքում, որն ապահովված է ոռոգման ջրով: Տնկարանում ծառերի աճն ապահովելու համար անհրաժեշտ է անցկացնել ոռոգման համակարգ:

Տնկարանի ցանքսի, անտառապատման ու անտառվերականգնման համար դաշտային գուքագրման արդյունքներով առանձնացվել է մշտական անտառներմային տեղամասեր.

- ա) սոճի – 19,2 հա
- բ) հացենի – 6,2 հա
- գ) խնձորենի, տանձենի – 0,9 հա
- դ) ակացիա սպիտակ – 2,4 հա:

Տնկարանում ցանքսի համար անհրաժեշտ մնացած տեսակների և բնական վերականգնման համար անհրաժեշտ խոշորառեջ կաղնու սերմերը նախատեսվում է ձեռք բերել Սյունիքի և Կապանի անտառտնտեսություններից:

2020թ. համեմատությամբ անտառածածկ մակերեսի ավելացում ստուգիչ ժամանակաշրջանի վերջում (2030թ.) կանխատեսվում է 131,2 հա-ով, իսկ 2035թ. ևս 302,6 հա-ով՝ գրեթե ամբողջությամբ ոչ անտառածածկ տարածքներում հիմնադրվող անտառմշակույթների իրականացման հաշվին: Իսկ անտառածածկ մակերեսի բնական վերականգնմամբ ավելացումը լինելու է 2030թ. 2,0հա, 2035թ. ևս 1,0հա հեկտարով՝ անթրոպոգեն նոսրուտներում բոխու բնական վերականգնմամբ: Անտառվերականգնման ծավալները իրականացվելու են 10 տարվա մոտավոր հավասար բաշխվածությամբ: Առաջին երեք տարիների հիմնված չմիակցված սաղարթով անտառմշակույթների մոտ 30%-ը՝ բավարար խնամքի և պահպանության արդյունքում կփոխադրվեն անտառածածկ մակերես, իսկ մնացածը կփոխադրվի հաջորդ 5 տարիներին:

Ըստ փոփոխությունների՝ 2030 թվականին 433,8 հա-ով նվազելու են ոչ անտառածածկ տարածքի մակերեսները, որը պայմանավորված է բացատների ու պարապուտների (բաց տարածք) անտառապատման, ինչպես նաև հրդեհված, մահացած անտառտնկարկների տարածքներում և նոսրուտներում իրականացված անտառամշակույթների հիմնման՝ 2հա-ով նախատեսվող բնական վերականգնման միջոցառումների իրականացմամբ:

Նախատեսվող միջոցառումների արդյունքում էական փոփոխություն է ակնկալվում նաև ծառուտների տեսակային կազմում:

Նախատեսվելու է բարձրաբուն կաղնու ծառուտների մակերեսների ավելացում 2020թ. համեմատությամբ՝ 2030թ. 49,1 հա, իսկ 2035թ. ևս 176,0 հեկտարով, սոճուտների տարածքներինը՝ 2030թ. 54 հեկտարով, իսկ 2035 թ. ևս 126,9հա-ով:

Ավելանալու են հացի, թխկի, կեչի և թեղի գերակշռությամբ ծառուտների մակերեսները, որը պայմանավորված է անտառային բացատներում գլխավոր տեսակներ՝ կաղնու և սոճու հետ, որպես ուղեկցող տեսակներ նշված ծառատեսակների հիմնման և առանձին տարածքներում կազմավորվող երիտասարդ ծառուտների կազմերի հնարավոր փոփոխություններով:

Ոչ անտառածածկ տարածքներում համապատասխան տնկիներով տնկմամբ նախատեսվում է անտառային տանձենու և ինձորենու ծառուտների մակերեսների ավելացում՝ 2030թ. 5-ական և 2035թ. ևս 12,7 հա-ով:

**12.6 Հողային ռեսուրսներ.** անտառկառավարման սխեմաների բացակայության, անբավար աստառապահպանության պատճառով անտառային հողերը շարունակաբար ենթարկվել են էրոզիայի և դեգրադացիայի, ինչին նպաստել է նաև անտառտնտեսության հարակից համայնքների բնակչության կողմից անտառային տարածքները, որպես անասունների արածեցման արոտավայրերի և խոտհարքերի, մշտապես օգտագործումը:

**Անտառային հողերի արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում են նաև:**

- Սելեկցիոն հիմքի վրա անտառուերմային բազաների հիմնում՝ բարձր ցանքսային հատկություններով և արժեքավոր ժառանգական հատկանիշներով օժտված սերմերի ստացման համար:

- Բարձրարժեք և բարձր արտադրողական անտառային տեսակների հիմնում, որի միջոցով ընդլայնվելու է անտառածածկ մակերեսը, վերականգվելու են քայքայված անտառները, ձևավորվելու են ծառուտները, նպաստելով կենսաբազմազանության հաստատմանը և պահպանմանը:

- Խնամքի հատումների կատարում՝ օժանդակում են ծառուտների նպատակային ձևավորմանը, մասնավորապես տեսակային կազմի բարելավմանը, որակական և տարածքային տեղաբաշխմանը, անտառի հողապաշտպան, ջրապաշտպան, սանիտարա-հիգիենիկ, էսթետիկական հատկությունների բարելավմանը և անտառների արդյունավետության բարձրացմանը:

- Ընտրողական սանիտարական հատումներ՝ հնարավորություն են ընձեռում բարելավելու անտառի սանիտարական վիճակը, պահպանելու ստուգիչ շրջանում անտառածածկ մակերեսը, բարելավելու տեսակային կազմը և ստանալու ծառուտների լրացուցիչ աճ:

Հիմնադրության փաստաթղթով և կառավարման պլանով նախատեսվող համալիր միջոցառումների արդյունքում, անտառտնտեսության անտառային հողերում տեղի կունենա անտառածածկ տարածքի տեսակարար կշռի ավելացում և ծառուտի կազմի բարելավում: Անտառածածկ մակերեսի ավելացումը նախատեսվում է անտառային բացատներում և անթրոպոգեն նոսրուտներում անտառմշակույթների հիմնման, ինչպես նաև բնական վերածին օժանդակող միջոցառումների հաշվին:

**12.7 Անտառի պահպանություն.** անտառների պահպանության ուժեղացման, բնականոն վիճակի պահպանման, վիճակի բարելավման և կայուն կառավարման իրականացման նպատակով ամբողջ տարածքը բաժանվել է 11 պահաբաժինների՝ Շաղառի

անտառտնտեսությունը՝ 2817հա, Սիսիանի անտառտնտեսությունը՝ 3129հա, ընդհանուր՝ 5946 հա մակերեսով: Պահաբաժինների չափերը սահմանվել է հաշվի առնելով բնական պայմանները, բնակավայրերից հեռավորությունը և նորմալ հսկողության իրականացման հնարավորությունները: Ամենամեծ պահաբաժնի մակերեսը 1325հա է (Սիսիանի անտառպետություն՝ 3-րդ պահաբաժին), ամենափոքրինը՝ 35հա (Շաղատի անտառպետություն՝ 3-րդ պահաբաժին): Պահաբաժինների միջին մակերեսը կազմում է 540,3հա:

**Անտառպահպանության և անտառվերականգնման համար կարևոր նշանակություն ունեն սանիտարական հատումները**, որոնք կատարվում են անտառի վնասատուների և հիվանդությունների կանխարգելման նպատակով: Սանիտարական հատումների անհրաժեշտությունը և ծավալները հիմնավորվում են անտառապաթուղոգիական ուսումնասիրությունների կամ մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալների հիման վրա: Գույքագրման արդյունքներով սանիտարական հատումները կատարվելու են ընդհանուր 5,9 հեկտարի վրա, բացառապես ցցաչոր և հիվանդ ծառերը՝ 95 խտմ<sup>3</sup>: Նույն ժամանակաշրջանում իրացման ենթակա պաշարը կկազմի 77 խտմ<sup>3</sup>, որից շինափայտը՝ 22 մ<sup>3</sup>:

**Խնամքի հատումներ.** 2021-2030 թվականների համար նախատեսվել են խնամքի հատումներ՝ ընդհանուր 15,0հա հատվածներում, որոնցում ընդհանուր պաշարը կազմում է 2360մ<sup>3</sup>: Հատման համար նախատեսած ընդհանուր պաշարը կազմում է 325խտ.մ<sup>3</sup>, այդ թվում իրացման ենթակա բնափայտը 274խտմ<sup>3</sup>, որից շինափայտի պաշարը՝ 139մ<sup>3</sup>, վառելափայտը՝ 135խտ.մ<sup>3</sup>:

#### **Նախատեսվել են.**

1. Նոսրացման հատումներ ընդհանուր 9,7 հեկտարի վրա՝ ամբողջությամբ սոճուտներում: Այս հատվածների ընդհանուր պաշարը կազմում է 1690մ<sup>3</sup>, հատման նախատեսած պաշարը՝ 258խտ.մ<sup>3</sup>, այդ թվում իրացման ենթակա պաշարը՝ 216խտմ<sup>3</sup>, որից շինափայտի պաշարը՝ 110 մ<sup>3</sup>, իսկ վառելափայտը՝ 106խտմ<sup>3</sup>:

2. Անցումային հատումներ՝ 5,3հեկտարի վրա: Հատվածների ընդհանուր պաշարը կազմում է 670մ<sup>3</sup>, հատման նախատեսած պաշարը՝ 67խտ.մ<sup>3</sup>, այդ թվում իրացման ենթակա պաշարը՝ 58խտմ<sup>3</sup>, որից շինափայտի պաշարը՝ 29 մ<sup>3</sup>, իսկ վառելափայտը՝ 29խտմ<sup>3</sup>:

Խնամքի հատումների կրկնելությունը կատարվում է 10 տարի կրկնման հաճախականությամբ: Խնամքի հատումներն օժանդակում են ծառուտների նպատակային ձևավորմանը, մասնավորապես տեսակային կազմի բարելավմանը, որակական և տարածքային տեղաբաշխմանը, անտառի հողապաշտպան, ջրապաշտպան, սանիտարա-հիգիենիկ, էսթետիկական հատկությունների բարելավմանը և անտառների արդյունավետության բարձրացմանը:

**Ընտրողական սանիտարական հատումներ.** ընտրողական սանիտարական հատումները հնարավորություն են ընձեռում բարելավելու անտառի սանիտարական վիճակը, ստուգիչ շրջանում պահպանելու անտառածածկ մակերեսը, բարելավելու տեսակային կազմը և ապահովելու ծառուտների լրացուցիչ աճ:

## **12.8 Անտառօգտագործման նախագծված ծավալներն ըստ հատման տեսակների.**

Սիսիանի անտառտնտեսությունում նախատեսված բոլոր հատումների ընդհանուր ծավալը 20,9 հա-ի վրա կազմում է 420,0 խտ.մ<sup>3</sup>, այդ թվում իրացման ենթակա անտառանյութի պաշարը 351,0 խտմ<sup>3</sup> է, որից շինափայտ` 161,0մ<sup>3</sup>, վառելափայտ` 190 մ<sup>3</sup>:

Ըստ հատման տեսակների` ինամքի հատումները կազմում են հատումներ նախատեսած մակերեսի 71,8%-ը և հատման նախատեսած պաշարի 77,4%-ը, իսկ սանիտարական հատումները համապատասխանաբար` 28,2% և 22,6%-ը:

Ընդհանուր անտառօգտագործման մակերեսների 62,7%-ը (13,1 հա) և հատման ենթակա պաշարների 75,7%-ը (332 խտմ<sup>3</sup>) նախատեսվում է Սիսիանի անտառապետությունում, իսկ Շաղատի անտառապետությունում համապատասխանաբար` 37,3% (7,8 հա) և 24,3%-ը (102 խտմ<sup>3</sup>):

**12.9 Կենսաբազմազանություն.** անտառածածկ տարածքների կրճատումը, անտառային էկոհամակարգերի դեգրադացիան հանգեցրել է նաև անտառային կենսաբազմազանության աղքատացմանը: Բնական աճելավայրերի վնասման առկայությունը առաջացել է բազմաթիվ հազվագյուտ տեսակների, հատկապես «Կարմիր գրքում» գրանցված բազմաթիվ տեսակների, էկոլոգիապես զգայուն էնդեմիկ և ռելիկտային տեսակների անհետացման վտանգ:

Անտառի տարածքի կենսաբազմազանության պահպանման համար շարունակական վտանգ են ներկայացնում ապօրինի անտառահատումները, որոնք հանգեցնում են անտառային տարածքների մասնատմանը և դեգրադացիային, ինչպես նաև վնասատուների դեմ քիմիական նյութերով պայքարի միջոցները` հատկապես ավիացիոն միջոցներով: Մասնավորապես, բացասական ազդեցություն ունի փչակավոր ծառերի ոչնչացումը, որոնք բնադրատեղի են հանդիսանում մի շարք փչակաբնակ տեսակների համար:

Մարդու տնտեսական գործունեության արդյունքում կենսամիջավայրի քայքայումը (ՅԵԿ-երի կարուցում, ջրամբարների ափամերձ բուսականության այրում կամ մաքրում չկանոնակարգված ձկնորսություն և այլն) և ջրերի աղտոտվածությունը: Կարևոր վտանգ է ներկայացնում անտառի կենսամիջավայրի աղտոտումն օրգանական և անօրգանական թափոններով, ինչպես նաև որսագողերի գործունեությունը (կաթնասունների, թռչունների, ձկնատեսակների համար)` թակարդների և ծուղակների տեղադրումը:

Տարածքի գիշատիչ և խոշոր թռչունների համար մեծ վտանգ է ներկայացնում որսագողությունը: Անկանոն որսը բացասական ազդեցություն ունի կաքավների և լորի պոպուլյացիաների վրա: Արտավայրերի կառավարման բացակայությունը և դրանց ապօրինի, բայց կանոնավոր այրումը հովիվների կողմից մեծ վտանգ է ներկայացնում վայրի կենդանիների և անտառտնտեսության համար:

Անտառկառավարման պլանով նախատեսվում են կենսաբազմազանության պահպանման համար վտանգների կանխարգելմանն ուղղված մի շարք միջոցառումներ:

**12.10 Օդային ավազան և կլիմա.** ճիշտ անտառկառավարումը կարող է նպաստել օդային ավազանի բարելավմանը, դրական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա և նպաստելու է.

- Էկոլոգիական հավասարակշռության պահպանությանը,

- օդի որակի բարելավմանը:

**12.11 Ջրային ռեսուրսներ.** մարդու տնտեսական գործունեության, ինչպես նաև բնակչության կողմից անտառտնտեսության տարածքում գետերի, լճերի օգտագործման արդյունքում մեծացել է ջրային ռեսուրսների աղտոտվածությունը կենցաղային ջրերով, հանգեցնելով ջրերի էկոհամակարգի փոփոխություններին: Ճանապարհային ցանցի կառուցման շրջանակներում նախատեսվում են ջրատար առվակների (կյուվետներ) կառուցում, տեղադրվելու են ջրահեռացման խողովակներ ճանապարհի երկու կողմից և լայնությամբ՝ մակերեսային և գրունտային ջրերի հեռացման համար:

Անտառկառավարման պլանով նախատեսվում է անտառի ոռոգում, ըստ անհրաժեշտության՝ չոր(երաշտ) եղանակներին: Ոռոգման նպատակով գետերի և այլ մակերևութային ջրային ռեսուրսներ չեն օգտագործվելու, խողովակաշարեր չեն անցկացվելու: Ուստի տեղանքի ռելիեֆի կտրտվածության պատճառով սողանքավտանգ տեղամասեր չեն առաջանալու: Ձուրն ըստ անհրաժեշտության բերվելու է ավտոցիստեռնով, իսկ ոռոգումը կատարվելու է վերգետնյա ռետինե խողովակներով:

Ջրային ռեսուրսներ օգտագործվելու են անտառի հրդեհամարման աշխատանքների կատարման և նախատեսվող տնկարանում սերմնաբուսակների ոռոգման համար: Առաջարկվող տնկարանը գտնվում է անտառտնտեսության գրասենյակի հարակից տարածքում և ապահովված է ոռոգման ջրով: Նախատեսվում է տնկարանում անցկացնել ոռոգման համակարգ՝ հնարավոր միջոցների առկայության դեպքում կաթիլային: Լուծումները Օրենքով սահմանված կարգով կդիտարկվեն նախատեսվող գործունեության համապատասխան փաստաթղթերում:

Հրդեհամարման համար նախատեսվում է 2 ջրավազների կառուցում: Նախատեսվող հակահրդեհային ջրավազաններն իրենցից ներկայացնում են պարզ, բնական փոքր կառույցներ, որոնցում հնարավոր կլինի տարվա չորային ժամանակահատվածի համար ժամանակավորապես ամբարել ձևահալոցքային կամ անձրևաջրերը:

**12.12 Հրդեհավտանգություն և ճանապարհային ցանց.** Համաձայն անտառի կառավարման պլանի՝ կատարված անտառի գույքագրման ընթացքում, անտառի յուրաքանչյուր քառակուսու համար որոշվել է հրդեհավտանգության դասն՝ ըստ բուսականության տեսակային կազմի, հատվածների: Այն մշակվել է համակարգչային ծրագրով և քարտեզագրվել է: Անտառտնտեսությունում ըստ հրդեհավտանգավորության 1-ին դասի տարածքները կազմում են ամբողջ տարածքի 4%-ը (237հա), 4-րդ դասը 31,5% (1633հա), իսկ 2-րդ և 3-րդ հրդեհավտանգության դասերը համապատասխանաբար՝ 52,7% (3133հա) և 15,8% (940հա):

Միսիանի անտառտնտեսության տարածքներում առկա են հանրապետական, համայնքային, անտառտնտեսական և հակահրդեհային, անտառտնտեսային ճանապարհներ: Ճանապարհային ցանցի ընդհանուր երկարությունը կազմում է 406կմ:

Անտառտնտեսությունում անտառային ճանապարհները (406կմ) ծառայում են ինչպես անտառտնտեսական, այնպես էլ հակահրդեհային նպատակների համար: Անտառմիջյան ճանապարհները հիմնականում բնահողային՝ գրունտային են: Ջրհեռացման կյուվետների, խողովակների և խճաճածկի բացակայության հետևանքով ճանապարհների վիճակն

անմխիթար է: Անտառկառավարման 10 տարիների համար նախատեսվում է՝ ընդհանուր 25 կմ երկարության անտառտնտեսական և հակահրդեհային նշանակության ճանապարհների վերանորոգում:

Անտառային տարածքների հսկողության տեսանկյունից առավել վտանգավոր բանուկ ճանապարհներին նախատեսվում է տեղադրել մշտական և շարժական ուղեփակոցներ: Նախատեսվում է տեղադրել 2 հատ մշտական և 4 հատ շարժական ուղեփակոցներ:

**12.13 Էկոզբոսաշրջություն.** տարածաշրջանի հարուստ բնությունը, մաքուր օդն ու ջուրը, բազմաթիվ պատմամշակույթային կառույցների առկայությունը, օրգանական սնունդը հրաշալի նախադրյալներ են ստեղծում այս տարածքում Էկոտուրիզմի զարգացման համար: Սիսիանի տարածաշրջանում հայտնաբերված են տարբեր ժամանակաշրջանների կիկլոպյան ամրոցներ, միջնադարյան քարանձավային բնակավայրեր, վաղ, միջին և ուշ միջնադարյան վանական համալիրներ և փոքրիկ մատուռներ, որոնք Էապես կնպաստեն տուրիզմի զարգացմանը:

Ծրագրային փաստաթղթով Էկոտուրիզմի զարգացման նպատակով առաջարկվում է 5 երթուղիներ, որոնցից 4-ը սկսվում են անտառտնտեսության գրասենյակից: Այստեղ նպատահարմար է ստեղծել Էկոտուրիզմի տեղեկատվական կենտրոն (այցելուների կենտրոն): Բացառություն է կազմում Սբ.Ստեփանոս եկեղեցի - Տաթև վանական համալիր երթուղին, որը սկսվում է Լծեն գյուղի տարածքում գտնվող Սբ.Ստեփանոս եկեղեցուց և շարունակվում է դեպի հարավ-արևելք՝ Տաթև վանական համալիր:

Տուրիստական ծառայությունների զարգացումը (ուղիներ, ձիարշավներ, քայլարշավներ, տեսարժան վայրեր, հյուրանոցային և հյուրատնային ծառայություններ և այլն) լրացուցիչ լուրջ ներդրում կարող է ունենալ համայնքային բյուջեի ձևավորման և համայնքի զարգացման մեջ: Ներկայումս նման ծառայությունները հիմնականում հասանելի չեն:

**12.14 Սոցիալական ծառայություններ և խնդիրներ.** Համաձայն հիմնադրույթային փաստաթղթի՝ գույքագրման և անտառտնտեսության հարակից համայնքների վարչական սահմաններում անտառային հողերի կադաստրային քարտեզագրական նյութերի համադրման արդյունքում ի հայտ է եկել անտառային հողերի սահմանների և մակերեսների անհամապատասխանություններ, որոնք ճշտվել են, իսկ քարտեզները համաձայնեցվել են համայնքների և անտառտնտեսության հետ:

Սիսիանի տարածաշրջանի 20 բնակավայրեր դեռևս գազաֆիկացված չեն, իսկ որոշ գյուղեր ոչ ամբողջությամբ են գազաֆիկացված: Բնակչության ջեռուցման հիմնական աղբյուրը դեռևս մնում է փայտը և կենսավառելիքը: Բնակչությունը վառելափայտը հիմնականում ձեռք է բերում հարևան անտառտնտեսություններից:

Ջեռուցման նպատակով անտառտնտեսության հաշվարկային հատատեղային տարեկան միջին ծավալները կազմում են 1000խտ.մ<sup>3</sup>: Վերջին 10 տարիներին անտառտնտեսությունում խնամքի և սանիտարական հատումներից հավաքվել է ընդհանուր 902 խտ.մ<sup>3</sup> կամ տարեկան մոտ 90 խտ.մ<sup>3</sup> անտառանյութ, այդ թվում շինափայտը՝ 34,9մ<sup>3</sup>: Համայնքներում առկա տուրիստական գրավչության վայրերի առկայությունը կնպաստի բնակչության կենսապայմանների բարելավմանը: Վերջինիս զարգացման միտումներն ապահովելու են.

- տեղական բնակչության ապրուստի բարելավումը և կյանքի որակի բարձրացումը,

- կայուն տուրիզմի գովազդումը՝ որպես այլընտրանք մասսայական տուրիզմին,
- պահպանվող տարածքներ այցելելու և բավականություն ստանալու հնարավորության ընձեռնումը՝ հասարակության լայն շերտերի համար,
- տարածքների պահպանության համար աճող եկամուտների ապահովումը:

### **13. Զիմնադրության փաստաթղթի դրույթների հնարավոր ազդեցությունը և ռիսկերը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա:**

Զիմնադրության փաստաթղթով նախատեսված գործողությունները ընդգրկում են Սիսիանի անտառապետության տարածքը, որը ներառում է բնական լանդշաֆտները, մակերևութային և ստորերկրյա ջրային ռեսուրսները, բուսական ու կենդանական աշխարհը, պատմամշակութային և բնության հուշարձանները, կանաչ տարածքները:

Տարածքի անտառտնտեսության՝ բուսական և կենդանական աշխարհի համար հիմնական վտանգ են հանդիսանում ապօրինի անտառահատումները, որոնք հանգեցնում են տարածքների մասնատմանը և դեգրադացիային: Կենսաբազմազանության համար վտանգավոր է նաև քիմիական նյութերի միջոցով վնասատուների դեմ պայքարը, հատկապես՝ ավիացիոն միջոցներով:

Անտառտնտեսության զարգացման համար հիմնական վտանգ է ներկայացնում նաև մարդու տնտեսական գործունեությունը՝ գետերի հունների վրա փոքր ՀԷԿ-երի կառուցումը և հիդրոէներգիայի ստացման նպատակներով ջրամբարներում ամբարված ջրի օգտագործումը, գետերի և ջրամբարների ափամերձ հատվածներում բուսականության այրումը կամ մաքրումը, կենցաղային և արտադրական կեղտաջրերով գետերի և ջրամբարների ջրերի աղտոտվածությունը, որսագողությունը, արոտավայրերի կառավարման բացակայությունը, դրանց կանոնավոր այրումը, օրգանական և անօրգանական թափոններով կենսամիջավայրի աղտոտումը: Այս ամենի արդյունքում տեղի է ունենում բնական կենսամիջավայրի խախտում և քայքայում:

Անտառի կայուն կառավարումը՝ նպատակաուղղված է դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնմանը, անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական, օգտակար հատկությունների պահպանմանը, անտառների կայուն օգտագործմանը: Այն կնպաստի անտառային ոլորտի զարգացմանը, շրջակա միջավայրի, գյուղատնտեսության, անտառային արդյունաբերության համայնքային զարգացման հնարավորությունների համապատասխանեցմանը:

Զիմնադրության փաստաթղթով նախատեսված գործունեությունների իրականացումը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություններ և ռիսկեր չի պարունակում: Զիմնական ազդեցությունները դրական են:

**13.1 Կենսաբազմազանություն.** անտառների կենսաբազմազանության պահպանությունն ուղղված է լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովմանը, լեռնային անտառային էկոհամակարգերի և դրանց

ընտրող հազվագյուտ և արժեքավոր բույսերի ու կենդանիների պահպանությանն ու վերարտադրությանը, մասնավորապես.

- տարածքի Էկոլոգիական հավասարակշռության, կենսաբազմազանության, ինչպես նաև կենսամիջավայրի բնական պայմանների հնարավորինս պահպանում:

- Խախտված անտառային լանդշաֆտների և դեգրադացված անտառների վերականգնում, դրանց պահպանության ապահովում, որը կնպաստի վտանգված տեսակների, պոպուլյացիաների և Էկոհամակարգերի վիճակի բարելավմանը:

- Կենսաբազմազանության տվյալների բազայի ստեղծում, վարում, արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմում՝ վերջիններիս պահպանման ու հարստացման նպատակով: Արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմում:

- Հազվագյուտ և վտանգված տեսակներից կազմված Էկոհամակարգերի (ծառուտների), դրանց ինքնավերականգնման ու ինքնակարգավորման հնարավորությունների բարձրացմանն ուղղված ուսումնասիրություններ, ինչպես նաև դրանց վիճակի բարելավմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների իրականացում:

- Ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրությունների և բնական Էկոհամակարգերի վրա դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների կատարում:

- Անտառային Էկոհամակարգերի կողմից տրամադրվող Էկոհամակարգային ծառայությունների, ներառյալ օգտակար բուսատեսակների պաշարների, ածխածնի կուտակման և այլ ուսումնասիրություններ իրականացում:

- Որսագողության դեմ պայքարի իրականացում՝ ՀՀ Կարմիր գրքում վտանգված կենդանատեսակների պահպանության նպատակով:

- Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների դաշտային ուսումնասիրությունների իրականացում (գույքագրում, թվաքանակի հաշվառում և պոպուլյացիաների գնահատման աշխատանքներ)՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել վտանգված տեսակների հայտնաբերմանը:

- Սանիտարական(ինսամբ) հատումներ իրականացվող տարածքներում անողնաշարավոր կենդանիների ապրելավայր հանդիսացող առանձին կիսաչոր փչակավոր ծառերի պահպանում:

- Վնասատուների դեմ պայքարի դեպքում՝ հնարավորինս ավիացիոն պայքարի ձևերից խուսափում և կենսաբանական պայքարի տեսակի կիրառում: Իսկ ավիացիոն պայքարի անխուսափելիության պարագայում վերջինիս տեղայնացնում՝ թույլ չտալով բռնկումից դուրս տարածքներում գործողությունների ընդլայնումը:

- Թունաքիմիկատների օգտագործման դեպքում՝ ցանկը համաձայնեցվելու է մասնագետների հետ, բացառելով այդ միջավայրերում ապրող ոչ թիրախային և պահպանվող կենդանատեսակներին վնաս հասցնելու հնարավորությունը:

- Բացառվելու են վնասատուների դեմ պայքարի նպատակով թունանյութերի և այլ քիմիական նյութերի օգտագործումը, որոնք ամրագրված են Կառավարության 2005թ.-ի մարտի 17-ին կայացրած N-293 որոշման մեջ: Բուսականության բարձր աճն ապահովելու համար կատարվելու է մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում



վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից:

Անտառային տարածքներում իրականացվող գործողությունները միտված են բուսական և կենդանական աշխարհի պահպանմանը և կենսաբազմազանության վրա ունեն բացառապես դրական ազդեցություն:

**13.2 Օդային ավազան և կլիմա.** ծրագրի իրականացման շրջանակներում օդային ավազանի պահպանման նպատակով նախատեսվում է.

- կլիմայի փոփոխության նկատմամբ անտառների խոցելիության և հարմարողականության բարձրացմանն ուղղված ուսումնասիրությունների և կոնկրետ միջոցառումների իրականացում:

- Սոճու անտառմշակույթների հիմնման ժամանակ սոճու հետ լայնատերևավոր տեսակներով խառը կազմով մշակույթների հիմնում՝ կլիմայի փոփոխության նկատմամբ դիմադրողականության և հարմարվողականության բարձրացման նպատակով, ինչպես նաև հնարավոր հրդեհների մարման աշխատանքներին նպաստելու նպատակով:

- Անտառային էկոհամակարգերի կողմից տրամադրվող էկոհամակարգային ծառայությունների, ներառյալ օգտակար բուսատեսակների պաշարների, ածխածնի կուտակման և այլ ուսումնասիրությունների իրականացում:

**13.3 Հողային ռեսուրսներ.** հողային ռեսուրսները պահպանելու և անտառային հողերի արտադրողականության բարձրացման նպատակով նախատեսված են.

- անտառներումային բազաների հիմնում սելեկցիոն հիմքի վրա:
- Անտառային մշակույթների հիմնում:
- Ցածր լրիվության ծառուտների արտադրողականության բարձրացում:
- Բնական վերածին օժանդակող համալիր միջոցառումներ:
- Խնամքի հատումների իրականացում:
- Անտառպահպանական և անտառպաշտպանական աշխատանքների բարելավում, ընտրովի սանիտարական հատումներ:
- Հողերի պահպանություն՝ հակաեռոզիոն, ագրոտեխնիկական:
- Համայնքների կողմից օգտագործվող արոտավայրերի և խոտհարքերի կայուն կառավարման սխեմաների մշակում՝ բացառելով անտառվերականգնման ենթակա անտառներում անասունների մուտքը:
  - Խոտհարքերում (որոնք շատ դեպքերում անտառային բացատներն են) կատարվող գործողությունների վերահսկում՝ բացառելով վերջիններիս բացասական անդրադարձը սերմնային ինքնավերականգնման վրա:
  - Համեմատաբար բարձր թեքությունների վրա գտնվող արոտավայրերի օգտագործման բացառում, որոնք կհանգեցնեն էրոզիոն պրոցեսների ակտիվացմանը
- Նախատեսված բոլոր գործունեությունները միտված են հողային ռեսուրսների պահպանությանը, բացասական ազդեցություններ կամ ռիսկեր չկան:

**13.4 Ջրային ռեսուրսներ.** ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և անտառտնտեսության հրդեհանվտանգության ապահովման համար նախատեսվում է.

- ջրատար առվակների (կյուվետների), ջրահեռացման խողովակների կառուցում՝ մակերևութային և գրունտային ջրերի հեռացման նպատակով:

- Ջրհավաք ավազանների նախատեսում(2հատ) հրդեհամարման աշխատանքների համար:

- Ռոռգման ցանցի կառուցում տնկարանում՝ սերմնաբուսակների աճն ապահովելու նպատակով:

Գետավազանում առկա բնակավայրերի, ավանդական ջրօգտագործողների և ՋԹ ունեցող փաստացի ջրօգտագործողների, ինչպես նաև անտառային գոտու կամ դրա հարակից անցնող խմելու-կենցաղային և ոռոգման համակարգերի գործունեությունների խոչընդոտումների բացառումը՝ կապահովվի գործունեության իրականացման ժամանակ՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալիս:

**13.5 Սոցիալական ոլորտ.** անտառնախառնվարման ճիշտ կազմակերպումը նպաստելու է տարածաշրջանի բնակչության սոցիալական գործոնների ակտիվացմանը և պայմանների բարելավմանը: Այդ նպատակով նախատեսվելու է.

- տարածքում էկոտուրիզմի զարգացման հետ կապված գործողությունների մշակում, հանրային իրազեկման քարոզարշավների իրականացում:

- Բնապահպանական բրոշյուրների կազմում և հրատարակում, վերջիններիս համայնքներում տարածում՝ բնության մեջ գոյություն ունեցող կենսաբազմազանության տեսակների կարևորությունը և նշանակությունը ներկայացնելու նպատակով:

- Հարակից համայնքների բնակչության համար, մասնավորապես դպրոցականների, տեղի կենդանական աշխարհի և վտանգված կենդանատեսակների մասին իրազեկմանն ուղղված միջոցառումների կազմակերպում:

- Տեղական բնակչության ապրուստի բարելավում, վերջինիս ապրելու որակի և բարեկեցության բարձրացում:

- Կայուն տուրիզմի զարգացմանն ուղղված գովազդում:

- Տեղական բնակչության և այցելուների մոտ շրջակա միջավայրի վերաբերյալ գիտելիքների մակարդակի և իրազեկման բարձրացում:

- Հասարակության լայն շերտերի համար՝ պահպանվող տարածքներ այցելելու և բավականություն ստանալու հնարավորությունների ընձեռնում:

- Անտառային ոլորտը բնակչության համար կայուն եկամուտի աղբյուրի վերածում:

- Եկամուտների աճի ապահովում՝ ուղղված տարածքների պահպանությանը:

**13.6 Մարդու առողջություն և անվտանգություն.** Անտառտնտեսության կառավարման ռիսկերից է հրդեհների բռնկումը և դա կանխարգելելու նպատակով նախատեսվում են հրդեհանվտանգության ապահովման մի շարք միջոցառումներ.

- սոճու հետ լայնատերևավոր տեսակներով խառը կազմով մշակույթների հիմնում՝ հնարավոր հրդեհների մարման աշխատանքներին նպաստելու նպատակով,

- Անտառմիջյան ճանապարհների նախատեսում և վերանորոգում՝ հրդեհամարման աշխատանքների կատարման նպատակով:

- Անտառտնտեսության տարածքում անցումային գոտիների կառուցում՝ երթևեկությունը և մարդկանց տեղաշարժն ապահովելու համար:

- Ճանապարհներին, մարդկանց հնարավոր կուտակման վայրերում հրդեհային պահպանության կանոնների վերաբերյալ նախազգուշացնող ցուցատախտակների տեղադրում:

- Հակահրդեհային ճեղքվածքների և հանքայնացված շերտերի կառուցում:

- Հանգստի և ծխելու տեղերի առանձնացում, կրակմարիչների ձեռք բերում:

- Ջրավազանների կառուցում:

- Հակահրդեհային տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում (մեքենա, մոտոցիկլետ, օժանդակ սարքավորումներ):

- Հարակից համայնքներում հանդիպումների կազմակերպում՝ հակահրդեհային իրազեկության բարձրացման և հակահրդեհային միջոցառումների իրականացման թեմաներով:

- Կրակմարող կամավոր խմբերի կազմավորում:

**13.7 Հիմնադրության փաստաթղթի ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա (գնահատման -, +, ++ ցուցանիշներով) ամփոփ աղյուսակ:**

**Աղյուսակ 33.**

Հիմնադրության փաստաթղթով նախատեսված գործունեությունները	Օդայի և ավազան	Ջրային ռեսուրսներ	Կենսաբազմազանություն	Հողայի և ռեսուրսներ	Սոցիալական ոլոր	Մարդու առողջություն և անվտանգություն
Անտառսերմնային և բազաների հիմնում սելեկցիոն հիմքի վրա:	+	0	++	+	+	++
•Անտառային մշակույթների հիմնում	+	0	++	+	+	++
•Ցածր լրիվության ծառուտների արտադրողականության բարձրացում:	+	+	+	+	+	++

•Բնական վերաճին օժանդակող համալիր միջոցառումներ:	+	+	+	+	+	++
Խնամքի հատումների իրականացում:	+	+	+	0	0	+
Անտառպահպան ական և անտառպաշտպանական աշխատանքների բարելավում, ընտրովի սանիտարական հատումներ:	+	+	+	0	0	+

• - բացասական ազդեցություն

0-ազդեցության բացակայություն

+ դրական ազդեցություն

++ առավել դրական ազդեցություն

Ամփոփելով ռիսկերը և ազդեցությունները կարելի է եզրահանգել, որ անտառկառավարման պլանով նախատեսված բոլոր գործունեությունների իրականացումը կունենա բացառապես դրական ազդեցություն:

Կառավարման պլանով նախատեսված բոլոր միջոցառումները ուղղված են և նպաստելու են մարդու առողջության և անվտանգության պահպանմանը և որևէ ռիսկ կամ բացասական ազդեցություն չեն կարող առաջացնել:

## **14. Հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման դեպքում շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր**

Անտառի կայուն կառավարումը՝ նպատակաուղղված է դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնմանը, անտառների բնապահպանական, սոցիալական և տնտեսական, օգտակար հատկությունների պահպանմանը, անտառների կայուն օգտագործմանը: Այն կնպաստի անտառային ոլորտի զարգացմանը, շրջակա միջավայրի, գյուղատնտեսության, անտառային արդյունաբերության համայնքային զարգացման հնարավորությունների համապատասխանեցմանը:

Անտառների վերականգնման, անտառների օգտակար հատկությունների զարգացման և կայուն անտառօգտագործման ռազմավարական, կայուն անտառօգտագործման ինստիտուցիոնալ հզորությունների ամրապնդման և կատարելագործման, հիմնական ռազմավարական ուղիների ապահովման, այդ թվում՝ «Հայաստան»-ի կարողությունների հզորացման, ինչպես նաև անտառի պահպանական և պաշտպանական ծառայությունների՝ սերմնային, տնկարանային, որսորդական տնտեսությունների, մարդկային ռեսուրսների ուսուցողական և կրթական կենտրոնների և տեղեկատվական ցանցի հիմնադրման, կողմնակի անտառօգտագործման զարգացման, կայուն անտառակառավարմանը նպաստող օրենսդրական հենքի բարելավմանն (ներառյալ՝ գիտականորեն հիմնավորված մեխանիզմների և միջազգային փորձի ներդրումը) ուղղված միջոցառումները կնպաստեն անտառի կենսամիջավայրի բարելավմանը և կայուն զարգացմանը:

Հիմնադրութային փաստաթղթով նախատեսվում է կայուն անտառակառավարման՝ անտառապաշտպանական, անտառապահպանման, անտառի բնառեսուրսների օգտագործման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների իրականացում: Նախատեսվող միջոցառումների ծրագրի համար հիմք են հադիսացել ՀՀ անտառային օրենսգիրքը (2005թ), սանիտարական հատումների իրականացման կարգը և անտառակառավարման պլանների մշակման հրահանգը, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության Անտառային կոմիտեի «ՀԱՅԱՆՏԱՌ» ՊՈԱԿ «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի 2021-2030թթ. կառավարման պլանը, անտառտնտեսության ոլորտը կարգավորող մի շարք ՀՀ օրենքներ, կառավարարության որոշումներ և միջազգային փաստաթղթեր:

**14.1 Անտառտնտեսության կառավարում.** անտառակառավարման ոլորտի կայուն կառավարման նպատակով նախատեսվելու է.

- Անտառտնտեսությունում տեխնիկական զինվածության ապահովում՝ ժամանակակից, անվտանգ և արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման միջոցով:
- Կանոնակարգված անտառօգտագործում՝ ժամանակակից մեթոդների, սարքավորումների և անվտանգ աշխատանքային տեխնոլոգիաների կիրառմամբ:

- Անտառի ռեկրեացիոն ներուժի ավելացում, Էկոտուրիզի և մեդվաբուժության զարգացում:

- Անտառավերականգնման աշխատանքներում կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման և անտառի հարմարվողականության ուժեղացում:

- Որսորդության զարգացում՝ ձկնագողության և որսագողության դեմ պայքարի ուժեղացում:

Անտառտնտեսության կառավարման բարելավման նպատակով նախատեսվում է նաև մարդկային ռեսուրսների կատարելագործում՝ մասնագետներով համալրում և մասնագիտական որակի բարձրացում.

- «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղում անձնակազմի կարճաժամկետ և երկարաժամկետ վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում՝ անտառների և կենսաբազմազանության պահպանության և մոնիթորինգի, անտառի պաշտպանության, Էկոգբոսաշրջության զարգացման, ֆինանսական միջոցների համալրման և այլ ուղղություններով:

- Մոնիթորինգի(1) և Էկոգբոսաշրջության(1)՝ հատուկ մասնագիտական վերապատրաստում ունեցող մասնագետների ներգրավում,
- հասարակայնության հետ կապերի պատասխանատու՝ անտառտնտեսության իրազեկության և Էկոկրթության աշխատանքները համակարգելու համար,
- ֆինանսական միջոցների համալրման պատասխանատու՝ ֆինանսավորման նոր աղբյուրների հայթհայթման գործառույթի իրականացման համար և այլն:

#### **14.2 Անտառաճեցում և անտառվերականգնում.**

Անտառաճածկ մակերեսի ավելացումը նախատեսվում է անտառային բացատներում և անթրոպոգեն նոսրուտներում անտառմշակույթների հիմնման, ինչպես նաև բնական վերածին օժանդակող միջոցառումների հաշվին:

Անտառվերականգնման միջոցառումների նախագծման ժամանակ հաշվի է առնվել տարբեր բոնիտետային դասերում և հողային կատեգորիաներում բնական վերածի ընթացքը և անտառաճման պայմանները: Անտառհիմնման, ինչպես նաև ագրոտեխնիկական միջոցառումների նախագծման համար հիմք են ընդունվում հողի բերրիության և անտառաճեցման պիտանելիության դասակարգումը:

Կախված անտառհիմնվող տարածքի տեղադրությունից, վիճակից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, անտառապատման նպատակից՝ նախատեսվելու են.

- անտառվերականգնման եղանակների ընտրություն, հաշվի առնելով հիմնման սխեմաները և տնկանյութի ու սերմերի պահանջի հաշվարկը:
- Սերմերի ցանքի կամ տունկի եղանակով իրականացում:
- Անտառհիմնում խրամատային եղանակով, կիրառելով սերմնաբուսական տնկման և սերմերով ցանքսի եղանակը:
- Համեմատաբար հարթ տարածքներում խոշոր տնկանյութերով տնկում փոսային եղանակով:

- Բնական վերականգնման օժանդակում՝ ցածր լրիվության ծառուտներում ցանկապատման և հանքայնացման եղանակով:

**14.3 Անտառմշակույթների հիմնում.** անտառմշակույթի հիմնման համար նախատեսվելու է.

- Կաղնու սերմերի ցանքով (հիմնական տեսակ) և հացենի, թխկի, կեչի, թեղի (ուղեկցող տեսակներ) խառը հիմնմամբ:

- Սոճու անտառմշակույթներով՝ սոճու 2 և ոչ ավել 3 տարեկան փակ արմատային սերմնաբուսակներով:

- 1 հա մակերեսից ավելի բացատներում I-IV բուսիտետային դասերում, իսկ 1հա-ից պակաս տարածքները, որոնք լանդշաֆտային փոքր բացատներ են թողնվելու են ինքնավերականգնման:

- Անթրոպոգեն նոսրուտներում 1հա-ից պակասը թողնվելու են ինքնավերականգնման:

- Խրամատային եղանակով՝ 2 շարք սոճու, յուրաքանչյուր 3-րդը լայնատերևավոր ծառատեսակների բուսակ-տնկիներով տնկում՝ հրդեհների տարածումը կանխելու նպատակով:

- Լանջերի մինչև 15° թեքություններում հողի փոսերով նախապատրաստում համեմատաբար խոշոր տնկանյութով՝ անտառային տանձենու և խնձորենու հիմնադրման համար:

- Սերմնային և տնկարանային տնտեսությունների ստեղծում:

- Բնական վերածին օժանդակող միջոցառումների իրականացում՝ հանքայնացման եղանակով (հարթակների պատրաստում և կաղնու սերմերի ցանք):

- Հանքայնացման եղանակով 0,3-0,4 լրիվության և ցածր լրիվության անտառներում մայր սաղարթի տակ բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ՝ ծառուտների լրիվության և արդյունավետության բարձրացման նպատակով:

**14.4 Անտառպաշտպանություն.** ներառում են վնասակար օրգանիզմների (վնասատուների և հիվանդությունների) կողմից անտառների ոչնչացման, չորացման, օգտակար հատկությունների կորստի կանխարգելմանը և սանիտարական վիճակի բարելավմանն ուղղված համալիր միջոցառումները, ելնելով անտառային տնտեսության կառավարման պլանների հրահանգի (ՀՀ գյուղատնտեսության նախարարի 10.08.2005թ. N 130-Ն հրամանագրով 8, կետ 2-ի): Անտառի գույքագրման ժամանակ գնահատման քարտում նշվում է վնասատուներով և հիվանդություններով ծառուտների կամ առանձին ծառերի վարակվածության աստիճանը, վնասված ծառերի պաշարը և տնտեսական միջոցառումները:

Անտառպաշտպանական աշխատանքների շրջանակներում նախատեսվում է.

- անտառպաթուլոգիական ուսումնասիրություններ (վնասատուներով և հիվանդություններով ծառուտների կամ առանձին ծառերի վարակվածության աստիճան, վնասված ծառերի պաշար) իրականացում անտառի վնասատուների և հիվանդությունների կանխարգելման համար:

- Սանիտարական հատումների իրականացում անտառների սանիտարական վիճակի բարելավման, ինչպես նաև վնասատուների և հիվանդությունների բացասական ազդեցության հետևանքով կենսունակությունը կորցրած կամ ցցաչոր և չորացող ծառերի

հեռացման նպատակով՝ չխախտելով անտառի կենսունակությունը, կառուցվածքը, արտադրողականությունը և նպատակային նշանակությունը:

- Սանիտարական հատումների անհրաժեշտության և ծավալների հիմնավորում անտառապաթողոզիական ուսումնասիրությունների կամ մոնիթորինգի արդյունքում ստացված տվյալների հիման վրա (ՀՀ անտառային օրենսգիրք, հոդված 25):

**14.5 Անտառապահպանություն.** անտառապահպանության միջոցառումների նպատակն է նվազագույնի հասցնել անտառային և այլ էկոհամակարգերի ու պաշարների չհամակարգված օգտագործումը, ինքնակամ զավթումները, ապօրինի հատումները, արածեցումները, աղտոտումը, կենսաբազմազանության վնասումը, ապահովել հրդեհանվտանգությունը:

Նախատեսվում է .

- Դեգրադացված անտառային էկոհամակարգերի վերականգնում՝ վտանգված տեսակների վիճակի բարելավման, ինչպես նաև անտառային հատվածների միասնականության և ամբողջականության ապահովման (ֆրագմենտացիայի նվազեցման) համար:

- Բարձր բնապահպանական արժեք ունեցող անտառների առանձնացում և համապատասխան կառավարում՝ ուղղված հայտնաբերված արժեքների պահպանմանը և վերականգնմանը:

- Համալիր ծրագրի մշակում և իրականացում՝ ինքնակամ հատումների ծավալների կրճատման նպատակով:

- «Ճանապարհներին, մարդկանց հնարավոր կուտակման վայրերում հրդեհային պահպանության կանոնների վերաբերյալ ցուցանակների տեղադրում»:

- Համայքների կողմից օգտագործվող արոտավայրերի և խոտհարքերի կայուն կառավարման սխեմաների մշակում և իրականացում:

- Համալիր ծրագրի մշակում և իրականացում՝ ինքնակամ հատումների ծավալների կրճատման նպատակով:

- Անտառավերականգնման ենթակա անտառներում անասունների մուտքը, իսկ խոտհարքերում (որոնք շատ դեպքերում անտառային բացատներն են) սերմնային ինքնավերականգնմանը բացասաբար անդրադարձող գործողությունների, ինչպես նաև համեմատաբար բարձր թեքությունների վրա գտնվող արոտավայրերի օգտագործման (Էրոզիոն պրոցեսների ակտիվացմանը հանգեցնող) բացառում:

- Անտառտնկման նախատեսած, ինչպես նաև բնակավայրերից շատ մոտ գտնվող անտառավերականգնման ենթակա տարածքների ցանկապատում(մետաղյա փշալարի անցկացում)՝ ընտանի կենդանիների անասունների մուտքը կանխելու նպատակով:

**14.6 Անտառի կենսաբազմազանության պահպանություն.** անտառների կենսաբազմազանության պահպանությունն ուղղված է լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության բնականոն զարգացման ապահովմանը, լեռնային անտառային էկոհամակարգերի և դրանց բնորոշ հազվագյուտ և արժեքավոր բույսերի ու կենդանիների պահպանությանն ու վերարտադրությանը:

Անտառային տարածքներում բուսական և կենդանական աշխարհի պահպանման նպատակով նախատեսվում է.



- տարածքի Էկոլոգիական հավասարակշռության, կենսաբազմազանության, ինչպես նաև կենսամիջավայրի բնական պայմանների հնարավորինս պահպանում:
- Խախտված անտառային լանդշաֆտների և դեգրադացված անտառների վերականգնում, դրանց պահպանության ապահովում, որը կնպաստի վտանգված տեսակների, պոպուլյացիաների և Էկոհամակարգերի վիճակի բարելավմանը:
- Կենսաբազմազանության տվյալների բազայի ստեղծում, վարում, արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմում՝ վերջիններիս պահպանման ու հարստացման նպատակով: Արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմում:
- Հազվագյուտ և վտանգված տեսակներից կազմված Էկոհամակարգերի (ծառուտների), դրանց ինքնավերականգնման ու ինքնակարգավորման հնարավորությունների բարձրացմանն ուղղված ուսումնասիրություններ, ինչպես նաև դրանց վիճակի բարելավմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների իրականացում:
- Ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրությունների և բնական Էկոհամակարգերի վրա դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների կատարում:
- Անտառային Էկոհամակարգերի կողմից տրամադրվող Էկոհամակարգային ծառայությունների, ներառյալ օգտակար բուսատեսակների պաշարների, ածխածնի կուտակման և այլ ուսումնասիրություններ իրականացում:
- Որսագողության դեմ պայքարի իրականացում՝ ՀՀ Կարմիր գրքում վտանգված կենդանատեսակների պահպանության նպատակով:
- Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների դաշտային ուսումնասիրությունների իրականացում (գույքագրում, թվաքանակի հաշվառում և պոպուլյացիաների գնահատման աշխատանքներ)՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել վտանգված տեսակների հայտնաբերմանը:
- Սանիտարական(խնամք) հատումներ իրականացվող տարածքներում անողնաշարավոր կենդանիների ապրելավայր հանդիսացող առանձին կիսաչոր փչակավոր ծառերի պահպանում:
- Վնասատուների դեմ պայքարի դեպքում՝ հնարավորիս ավիացիոն պայքարի ձևերից խուսափում և կենսաբանական պայքարի տեսակի կիրառում: Իսկ ավիացիոն պայքարի անխուսափելիության պարագայում վերջինիս տեղայնացնում՝ թույլ չտալով բռնկումից դուրս տարածքներում գործողությունների ընդլայնումը:
- Թունաքիմիկատների օգտագործման դեպքում՝ ցանկը համաձայնեցվելու է մասնագետների հետ, բացառելով այդ միջավայրերում ապրող ոչ թիրախային և պահպանվող կենդանատեսակներին վնաս հասցնելու հնարավորությունը:
- Բացառվելու են վնասատուների դեմ պայքարի նպատակով թունանյութերի և այն քիմիական նյութերի օգտագործումը, որոնք ամրագրված են Կառավարության 2005թ.-ի մարտի 17-ին կայացրած N-293 որոշման մեջ: Բուսականության բարձր աճն ապահովելու համար կատարվելու է մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից:

**14.7 Օդային ավազան և կլիմա.** ծրագրի իրականացման շրջանակներում օդային ավազանի պահպանման նպատակով նախատեսվում է.

- կլիմայի փոփոխության նկատմամբ անտառների խոցելիության և հարմարողականության բարձրացմանն ուղղված ուսումնասիրությունների և կոնկրետ միջոցառումների իրականացում:

- Սոճու անտառմշակույթների հիմնման ժամանակ սոճու հետ լայնատերևավոր տեսակներով խառը կազմով մշակույթների հիմնում՝ կլիմայի փոփոխության նկատմամբ դիմադրողականության և հարմարվողականության բարձրացման նպատակով, ինչպես նաև հնարավոր հրդեհների մարման աշխատանքներին կնպաստելու նպատակով:

- Անտառային էկոհամակարգերի կողմից տրամադրվող էկոհամակարգային ծառայությունների, ներառյալ օգտակար բուսատեսակների պաշարների, ածխածնի կուտակման և այլ ուսումնասիրությունների իրականացում:

- Անտառնտեսության անտառներում կուտակված ածխածնի քանակի հաշվառում և վերահսկողություն:

**14.8 Հողային ռեսուրսներ.** հողային ռեսուրսները պահպանելու և անտառային հողերի արտադրողականության բարձրացման նպատակով նախատեսվում է.

- անտառներմային բազաների հիմնում սելեկցիոն հիմքի վրա:

- Անտառային մշակույթների հիմնում:

- Ցածր լրիվության ծառուտների արտադրողականության բարձրացում:

- Բնական վերածին օժանդակող համալիր միջոցառումներ:

- Խնամքի հատումների իրականացում:

- Անտառպահպանական և անտառպաշտպանական աշխատանքների բարելավում, ընտրովի սանիտարական հատումներ:

- Հողերի պահպանություն՝ հակաէռոզիոն, ագրոտեխնիկական:

- Համայնքների կողմից օգտագործվող արոտավայրերի և խոտհարքերի կայուն կառավարման սխեմաների մշակում՝ բացառելով անտառվերականգնման ենթակա անտառներում անասունների մուտքը:

- Խոտհարքերում (որոնք շատ դեպքերում անտառային բացատներն են) կատարվող գործողությունների վերահսկում՝ բացառելով վերջիններիս բացասական անդրադարձը սերմնային ինքնավերականգնման վրա:

- Համեմատաբար բարձր թեքությունների վրա գտնվող արոտավայրերի օգտագործման բացառում, որոնք կհանգեցնեն էրոզիոն պրոցեսների ակտիվացմանը:

**14.9 Ջրային ռեսուրսներ.** ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և անտառնտեսության հրդեհանվտանգության ապահովման համար նախատեսվում է.

- ջրատար առվակների (կյուվետների), ջրահեռացման խողովակների կառուցում՝ մակերևութային և գրունտային ջրերի հեռացման նպատակով:

- Ջրհավաք ավազանների նախատեսում(2հատ) հրդեհամարման աշխատանքների համար:

- Ոռոգման ցանցի կառուցում տնկարանում՝ սերմնաբուսակների աճն ապահովելու նպատակով:

Գետավազանում առկա բնակավայրերի, ավանդական ջրօգտագործողների և ՋԹ ունեցող փաստացի ջրօգտագործողների, ինչպես նաև անտառային գոտու կամ դրա հարակից անցնող խմելու-կենցաղային և ոռոգման համակարգերի գործունեությունների խոչընդոտումների բացառումը կապահովվի գործունեության իրականացման ժամանակ՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալիս:

**14.10 Էկոզբոսաշրջություն.** Էկոզբոսաշրջության զարգացման հարցում կարևոր է Էկոզբոսաշրջության այնպիսի կառավարումը, որը կկանխարգելի այցելությունների հնարավոր բացասական ազդեցությունները բնական Էկոհամակարգերի և կենսաբազմազանության տեսակների վրա: Էկոզբոսաշրջության ճիշտ կազմակերպումը կնպաստի անտառների կայուն կառավարմանը: Այդ նպատակով նախատեսվում է.

- բնական և մշակութային ժառանգության պահպանություն:
- Բնապահպանական կրթության ներդրում:
- Տեղական՝ բնական և մշակութային ժառանգության գնահատում:
- Չբոսաշրջության տեղեկատվական բազայի ստեղծում:
- Անտառի ռեկրեացիոն հնարավորությունների արդյունավետ օգտագործում՝

Էկոտուրիզմի զարգացում:

- Կայուն տուրիզմի զարգացման միջոցով Էկոտուրիզմը դարձնել տեղական և ազգային մշակույթի մի մաս:

- Բնակչության շրջանում բնապահպանական բրոշյուրների տարածման, հանրային իրազեկման քարոզարշավների իրականացում՝ հրդեհային անվտանգության կանոնների պահպանման, բնության և կենսաբազմազանության պահպանության կարևորության, կենսամիջավայրի աղտոտումը օրգանական և անօրգանական թափոններով կանխարգելելու նպատակով:

**14.11 Մարդու առողջություն և անվտանգություն.** անտառտնտեսության ճիշտ կառավարման նախատեսում, մասնավորապես.

- անտառմիջյան ճանապարհների, անցումային գոտիների և ճանապարհների նախատեսում՝ հրդեհամարման մարդկանց տեղաշարժն ապահովելու նպատակով,
- ճանապարհներին, մարդկանց հնարավոր կուտակման վայրերում հրդեհային պահպանության կանոնների վերաբերյալ նախազգուշացնող ցուցատախտակների տեղադրում,
- հակահրդեհային տեխնիկայով և սարքավորումներով ապահովում (մեքենա, մոտոցիկլետ, օժանդակ սարքավորումներ),
- անտառտնտեսության վտանգավոր տարածքներում (սողանքներ, կենդանիների բնադրավայրեր և այլն) իրազեկման վահանակների տեղադրում՝ բնակչությանը և զբոսաշրջիկներին հնարավոր վտանգներից պահպանելու նպատակով:

**14.12 Սոցիալական.** անտառկառավարման ճիշտ կազմակերպումը նպաստելու է տարածաշրջանի բնակչության սոցիալական գործոնների ակտիվացմանը և պայմանների բարելավմանը: Այդ նպատակով նախատեսվելու է.

- տարածքում Էկոտուրիզմի զարգացման հետ կապված գործողությունների մշակում, հանրային իրազեկման քարոզարշավների իրականացում:
- Բնապահպանական բրոշյուրների կազմում և հրատարակում, վերջիններիս համայնքներում տարածում՝ բնության մեջ գոյություն ունեցող կենսաբազմազանության տեսակների կարևորությունը և նշանակությունը ներկայացնելու նպատակով:
- Հարակից համայնքների բնակչության համար, մասնավորապես դպրոցականների, տեղի կենդանական աշխարհի և վտանգված կենդանատեսակների մասին իրազեկմանն ուղղված միջոցառումների կազմակերպում:
- Տեղական բնակչության ապրուստի բարելավում, վերջինիս ապրելու որակի և բարեկեցության բարձրացում:
- Կայուն տուրիզմի զարգացմանն ուղղված գովազդում:
- Տեղական բնակչության և այցելուների մոտ շրջակա միջավայրի վերաբերյալ գիտելիքների մակարդակի և իրազեկման բարձրացում:
- Հասարակության լայն շերտերի համար՝ պահպանվող տարածքներ այցելելու և բավականություն ստանալու հնարավորությունների ընձեռնում:
- Անտառային ոլորտը բնակչության համար կայուն եկամուտի աղբյուրի վերածում:
- Եկամուտների աճի ապահովում՝ ուղղված տարածքների պահպանությանը:

**14.13 Հրդեհանվտանգություն և ճանապարհային ցանց.** Անտառտնտեսության հրդեհանվտանգության ապահովման համար նախատեսվել է.

- սոճու հետ լայնատերևավոր տեսակներով խառը կազմով մշակույթների հիմնում՝ հնարավոր հրդեհների մարման աշխատանքներին նպաստելու նպատակով,
- Անտառմիջյան ճանապարհների նախատեսում և վերանորոգում՝ հրդեհամարման աշխատանքների կատարման նպատակով:
- Անտառտնտեսության տարածքում անցումային գոտիների կառուցում՝ երթևեկությունը և մարդկանց տեղաշարժն ապահովելու համար:
- Ճանապարհներին, մարդկանց հնարավոր կուտակման վայրերում հրդեհային պահպանության կանոնների վերաբերյալ նախազգուշացնող ցուցատախտակների տեղադրում:
- Հակահրդեհային ճեղքվածքների և հանքայնացված շերտերի կառուցում:
- Հանգստի և ծխելու տեղերի առանձնացում, կրակմարիչների ձեռք բերում:
- Ջրավազանների կառուցում:
- Հակահրդեհային տեխնիկայի և սարքավորումների ձեռքբերում (մեքենա, մոտոցիկլետ, օժանդակ սարքավորումներ):
- Հարակից համայնքներում հանդիպումների կազմակերպում՝ հակահրդեհային իրազեկության բարձրացման և հակահրդեհային միջոցառումների իրականացման թեմաներով:
- Կրակմարող կամավոր խմբերի կազմավորում:

## 15. Գիտական ուսումնասիրություններ և Մոնիթորինգ .

Գիտական ուսումնասիրությունները նպատակաուղղված են հիմնական գործառնությունների՝ կենսաբանական, լանդշաֆտային բազմազանության, պատմամշակութային և բնության ժառանգության պահպանության արդյունավետ իրականացմանը:

Գիտահետազոտական աշխատանքների արդյունքում ստացված տեղեկատվությունը կիրառվելու է բնապահպանական միջոցառումների պլանավորման, այդ թվում՝ Էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանության ու վերականգնման, դրանց արդյունավետության գնահատման, կանխատեսման և մոնիթորինգի համար: Անտառտնտեսության գործառնությունների ճիշտ կազմակերպման և պատշաճ իրականացման համար անհրաժեշտ են համապատասխան մարդկային և տեխնիկական հզորություններ:

2021-2030թթ-ի կառավարման պլանում ներառված գիտական ուսումնասիրությունների ծրագրում նախատեսվում է.

- անտառտնտեսության տարածքում մոնիթորինգի և գիտական ուսումնասիրությունների իրականացում:

- Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների դաշտային ուսումնասիրություններ (գույքագրման իրականացում, թվաքանակի հաշվառման և պոպուլյացիաների գնահատման աշխատանքներ)՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել վտանգված տեսակների հայտնաբերմանը:

- Կենսաբազմազանության տվյալների բազայի ստեղծում/վարում և պահպանման ու հարստացման նպատակով արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմում:

- Հազվագյուտ և վտանգված տեսակներից կազմված Էկոհամակարգերի (ծառուտների) և դրանց ինքնավերականգնման ու ինքնակարգավորման հնարավորությունների բարձրացման ուսումնասիրություններ և դրանց վիճակի բարելավման լրացուցիչ միջոցառումների նախատեսում:

- Կլիմայի փոփոխության նկատմամբ անտառների խոցելիության և հարմարողականության բարձրացման ուսումնասիրություններ և կոնկրետ միջոցառումների նախատեսում:

- Ինվազիվ և էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրություններ և բնական Էկոհամակարգերի վրա դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների նախատեսում:

- Անտառային Էկոհամակարգերի կողմից տրամադրվող Էկոհամակարգային ծառայությունների ուսումնասիրություններ, ներառյալ օգտակար բուսատեսակների պաշարների, ածխածնի կուտակման և այլ ուսումնասիրությունները:

Անտառտնտեսության տարածքի բնականոն զարգացման, Էկոհամակարգերի, բնական միջավայրի, որոշակի ծառատեսակների, դրանց պահպանության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, ինչպես նաև մարդածին ազդեցությունների հետևանքով

առաջ եկած գործընթացների զարգացումը և դրանց հետագա ընթացքի վերաբերյալ կանխատեսումներ կատարելու համար նախատեսվում է.

- Մոնիթորինգի և գիտական ուսումնասիրությունների իրականացում՝ «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղի տնօրենի ենթակայությամբ ստեղծված մոնիթորինգի և գիտության համապատասխան մասնագետների կողմից, թիրախային ուսումնասիրությունների իրականացում Անտառային կոմիտեի և «Հայաստան» ՊՈԱԿ-ի գլխամասի համապատասխան պատասխանատուների հետ համատեղ, սերտորեն համագործակցելով գիտական և ուսումնական հաստատությունների (ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա, համալսարաններ) և ՀԿ-ների հետ:

- Անտառտնտեսության անձնակազմը պետք է աջակցի գիտնականներին, հետազոտողներին, կամավորներին՝ մոնիթորինգի և գիտական ուսումնասիրությունների դաշտային աշխատանքների իրականացման ընթացքում:

- Անտառի աճի և աճի ընթացքի ուսումնասիրության իրականացում:

- Յուրաքանչյուր Էկոհամակարգի և դրա բաղադրիչների վրա մարդածին գործոնների ազդեցության բացահայտում:

- Էկոհամակարգերի բաղադրիչների՝ կենսաբազմազանության և բնական ռեսուրսների քանակական և որակական փոփոխությունների ընթացքի գնահատում և կանխատեսում:

- Մոնիթորինգի ծրագրի մշակում, որը կներառի ինդիկատորային տեսակների ընտրությունը՝ Էկոհամակարգերի վիճակի միտումները, կենսաբանական բազմազանության տեսակային կազմը, տարածվածությունը, քանակական ցուցանիշները, բնակության վայրերը, կենդանիների միգրացիոն ուղիների առկա վիճակը և զարգացման միտումները բացահայտելու, ինչպես նաև յուրաքանչյուր Էկոհամակարգի և դրա բաղադրիչների վրա մարդածին գործոնների ազդեցությունը գնահատելու համար:

- Մոնիթորինգային արձանագրությունների մշակում, դիտակետերի և փորձահրապարակների որոշում և այլն:

- Մոնիթորինգի տվյալների բազայի և համակարգչային ծրագրի ներդրում և վարում:

- Զբոսաշրջիկների այցելության արդյունքում արգելավայրի տարածքների բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում և ճիշտ կառավարում, ինչպես նաև մատուցվող ծառայության որակի գնահատում:

- Համապատասխան մասնագետների հետ համագործակցելով, գիտական և հետազոտական աշխատանքների կատարում՝ անտառների կառավարման համար կարևոր ոլորտների բացահայտում և առաջնայնությունների սահմանում:

- Մոնիթորինգ և գիտական ուսումնասիրություններն իրականացնող անձնակազմի և տեխնիկական հզորությունների շարունակական վերապատրաստում, վերազինում՝ կազմակերպության համապատասխան մասնագետների միջոցով:

**16. Հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման համար շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ամփոփ աղյուսակ (Բնապահպանական կառավարման պլան)**

№	Հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման շրջանակներում ազդեցության ենթակա շրջակա միջավայրի բաղադրիչները և ազդող գործոնները	Մեղմող միջոցառման անվանումը	Միջոցառման իրականացման պատասխանատու	Վերահսկող
1	Օդային ավազան և կլիմա.	<p>Ծրագրի իրականացման շրջանակներում օդային ավազանի պահպանման նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>• կլիմայի փոփոխության նկատմամբ անտառների խոցելիության և հարմարողականության բարձրացմանն ուղղված ուսումնասիրությունների և կոնկրետ միջոցառումների իրականացում:</li> <li>• Սոճու անտառմշակույթների հիմնման ժամանակ սոճու հետ լայնատերևավոր տեսակներով խառը կազմով մշակույթների հիմնում՝ կլիմայի փոփոխության նկատմամբ դիմադրողականության և հարմարվողականության բարձրացման նպատակով, ինչպես նաև հնարավոր հրդեհների մարման աշխատանքներին</li> </ul>	«Հայանտառ»ՊՈԱԿ	Անտառային կոմիտե «Հայանտառ»ՊՈԱԿ

		<p>կնպաստելու նպատակով:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Անտառային Էկոհամակարգերի կողմից տրամադրվող Էկոհամակարգային ծառայությունների, ներառյալ օգտակար բուսատեսակների պաշարների, ածխածնի կուտակման և այլ ուսումնասիրությունների իրականացում:</li> </ul>		
2	<b>Հողային ռեսուրսներ</b>	<p>Հողային ռեսուրսները պահպանելու և անտառային հողերի արտադրողականության բարձրացման նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>• անտառսերմնային բազաների հիմնում սելեկցիոն հիմքի վրա:</li> <li>• Անտառային մշակույթների հիմնում:</li> <li>• Ցածր լրիվության ծառուտների արտադրողականության բարձրացում:</li> <li>• Բնական վերածին օժանդակող համալիր միջոցառումներ:</li> <li>• Խնամքի հատումների իրականացում:</li> <li>• Անտառպահպանական և անտառպաշտպանական աշխատանքների բարելավում, ընտրովի սանիտարական հատումներ:</li> <li>• Հողերի պահպանություն՝ հակաեռոզիոն, ագրոտեխնիկական:</li> <li>• Համայնքների կողմից օգտագործվող արոտավայրերի և խոտհարքերի կայուն կառավարման սխեմաների մշակում՝ բացառելով անտառվերականգնման</li> </ul>	<b>«Հայանտառ»ՊՈԱԿ</b>	<b>Անտառային կոմիտե «Հայանտառ»ՊՈԱԿ</b>



		<p>ենթակա անտառներում անասունների մուտքը:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Խոտհարքերում (որոնք շատ դեպքերում անտառային բացատներն են) կատարվող գործողությունների վերահսկում՝ բացառելով վերջիններիս բացասական անդրադարձը սերմնային ինքնավերականգնման վրա:</li> <li>• Համեմատաբար բարձր թեքությունների վրա գտնվող արոտավայրերի օգտագործման բացառում, որոնք կհանգեցնեն էրոզիոն պրոցեսների ակտիվացմանը:</li> </ul>		
3	<b>Ջրային ռեսուրսներ</b>	<p>Ջրային ռեսուրսների օգտագործման և անտառտնտեսության հրդեհանվտանգության ապահովման համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>• ջրատար առվակների (կյուվետներ), ջրահեռացման խողովակների կառուցում՝ մակերևութային և գրունտային ջրերի հեռացման նպատակով:</li> <li>• Ջրհավաք ավազանների նախատեսում հրդեհամարման աշխատանքների համար:</li> <li>• Ոռոգման ցանցի կառուցում տնկարանում՝ սերմնաբուսակների աճն ապահովելու նպատակով:</li> </ul>	<b>«Հայանտառ» ՊՈԱԿ</b>	<b>Անտառային կոմիտե «Հայանտառ» ՊՈԱԿ</b>

4	<p><b>Անտառի կենսաբազմազանությա ն պահպանություն</b></p>	<p>Անտառային տարածքներում բուսական և կենդանական աշխարհի պահպանման նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> <li>• տարածքի էկոլոգիական հավասարակշռության, կենսաբազմազանության, ինչպես նաև կենսամիջավայրի բնական պայմանների հնարավորինս պահպանում:</li> <li>• Խախտված անտառային լանդշաֆտների և դեգրադացված անտառների վերականգնում, դրանց պահպանության ապահովում, որը կնպաստի վտանգված տեսակների, պոպուլյացիաների և էկոհամակարգերի վիճակի բարելավմանը:</li> <li>• Կենսաբազմազանության տվյալների բազայի ստեղծում, վարում, արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմում՝ վերջիններիս պահպանման ու հարստացման նպատակով: Արժեքավոր և հազվագյուտ տեսակների հավաքածուների կազմում:</li> <li>• Հազվագյուտ և վտանգված տեսակներից կազմված էկոհամակարգերի (ծառուտների), դրանց ինքնավերականգնման ու ինքնակարգավորման հնարավորությունների բարձրացմանն ուղղված ուսումնասիրություններ, ինչպես նաև դրանց վիճակի բարելավմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների</li> </ul>	<p><b>«Հայանտառ»ՊՈԱԿ</b></p>	<p><b>Անտառային կոմիտե «Հայանտառ»ՊՈԱԿ</b></p>
---	---	--	------------------------------	---

		<p>իրականացում:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ինվագիվ և Էքսպանսիվ բուսատեսակների ուսումնասիրությունների և բնական Էկոհամակարգերի վրա դրանց ազդեցության նվազեցմանն ուղղված գործողությունների կատարում:</li> <li>• Անտառային Էկոհամակարգերի կողմից տրամադրվող Էկոհամակարգային ծառայությունների, ներառյալ օգտակար բուսատեսակների պաշարների, ածխածնի կուտակման և այլ ուսումնասիրություններ իրականացում:</li> <li>• Որսագողության դեմ պայքարի իրականացում՝ ՀՀ Կարմիր գրքում վտանգված կենդանատեսակների պահպանության նպատակով:</li> <li>• Հայաստանի բույսերի և կենդանիների Կարմիր գրքում ընդգրկված բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների դաշտային ուսումնասիրությունների իրականացում (գույքագրում, թվաքանակի հաշվառում և պոպուլյացիաների գնահատման աշխատանքներ)՝ հատուկ ուշադրություն դարձնելով առավել վտանգված տեսակների հայտնաբերմանը:</li> <li>• Սանիտարական(խնամք) հատումներ իրականացվող տարածքներում անողնաշարավոր կենդանիների</li> </ul>		
--	--	--	--	--

		<p>ապրելավայր հանդիսացող առանձին կիսաչոր փչակավոր ծառերի պահպանում:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Վնասատուների դեմ պայքարի դեպքում հնարավորիս ավիացիոն պայքարի ձևերից խուսափում և կենսաբանական պայքարի տեսակի կիրառում: Իսկ ավիացիոն պայքարի անխուսափելիության պարագայում վերջինիս տեղայնացնում՝ թույլ չտալով բռնկումից դուրս տարածքներում գործողությունների ընդլայնումը:</li> <li>• Թունաքիմիկատների օգտագործման դեպքում ցանկը համաձայնեցվելու է մասնագետների հետ, բացառելով այդ միջավայրերում ապրող ոչ թիրախային և պահպանվող կենդանատեսակներին վնաս հասցնելու հնարավորությունը:</li> <li>• Բացառվելու են վնասատուների դեմ պայքարի նպատակով թունանյութերի և այն քիմիական նյութերի օգտագործումը, որոնք ամրագրված են Կառավարության 2005թ.-ի մարտի 17-ին կայացրած N-293 որոշման մեջ: Բուսականության բարձր աճն ապահովելու համար կատարվելու է մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության եվ բնական պայմաններում վերարտադրության</li> </ul>		
--	--	---	--	--

		<p>նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներից:</p>		
5	<p><b>Անտառտնտեսության կառավարում</b></p>	<p>Անտառկառավարման ոլորտի կայուն կառավարման նպատակով նախատեսվելու է.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Անտառտնտեսությունում տեխնիկական զինվածության ապահովում՝ ժամանակակից, անվտանգ և արդյունավետ տեխնոլոգիաների ներդրման միջոցով:</li> <li>• Կանոնակարգված անտառօգտագործում՝ ժամանակակից մեթոդների, սարքավորումների և անվտանգ աշխատանքային տեխնոլոգիաների կիրառմամբ:</li> <li>• Անտառի ռեկրեացիոն ներուժի ավելացում, Էկոտուրիզի և մեղվաբուծության զարգացում:</li> <li>• Անտառվերականգնման աշխատանքներում կլիմայի փոփոխության հետևանքների մեղմացման և անտառի հարմարվողականության ուժեղացում:</li> <li>• Որսորդության զարգացում՝ ձկնագողության և որսագողության դեմ պայքարի ուժեղացում:</li> </ul> <p>Անտառտնտեսության կառավարման բարելավման նպատակով նախատեսվում է</p>	<p><b>«Հայանտառ»ՊՈԱԿ</b></p>	<p><b>Անտառային կոմիտե «Հայանտառ»ՊՈԱԿ</b></p>

		<p>նաև մարդկային ռեսուրսների կատարելագործում՝ մասնագետներով համալրում և մասնագիտական որակի բարձրացում.</p> <ul style="list-style-type: none"> <li>• «Սիսիանի անտառտնտեսություն» մասնաճյուղում անձնակազմի կարճաժամկետ և երկարաժամկետ վերապատրաստման ծրագրերի մշակում և իրականացում՝ անտառների և կենսաբազմազանության պահպանության և մոնիթորինգի, անտառի պաշտպանության, էկոգրոսաշրջության զարգացման, ֆինանսական միջոցների համալրման և այլ ուղղություններով:</li> <li>• Մոնիթորինգի(1) և էկոգրոսաշրջության(1)՝ հատուկ մասնագիտական վերապատրաստում ունեցող մասնագետների ներգրավում,</li> <li>• հասարակայնության հետ կապերի պատասխանատու՝ անտառտնտեսության իրազեկության և էկոկրթության աշխատանքները համակարգելու համար,</li> <li>• ֆինանսական միջոցների համալրման պատասխանատու՝ ֆինանսավորման նոր աղբյուրների հայթայթման գործառույթի իրականացման համար և այլն:</li> </ul>		
--	--	---	--	--

6	<p><b>Անտառաճեցում և անտառվերականգնում</b></p>	<p>Կախված անտառհիմնվող տարածքի տեղադրությունից, վիճակից, աճեցվող ծառատեսակների կենսաբանական առանձնահատկություններից, անտառապատման նպատակից՝ նախատեսվելու են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• անտառվերականգնման եղանակների ընտրություն, հաշվի առնելով հիմնման սխեմաները և տնկանյութի ու սերմերի պահանջի հաշվարկը:</li> <li>• Սերմերի ցանքի կամ տունկի եղանակով իրականացում:</li> <li>• Անտառհիմնում խրամատային եղանակով, կիրառելով սերմնաբուսակների տնկման և սերմերով ցանքսի եղանակը:</li> <li>• Համեմատաբար հարթ տարածքներում խոշոր տնկանյութերով տնկում փոսային եղանակով:</li> <li>• Բնական վերականգնման օժանդակում ցածր լրիվության ծառուտներում ցանկապատման և հանքայնացման եղանակով:</li> </ul>	«Հայանտառ»ՊՈԱԿ	<p>Անտառային կոմիտե «Հայանտառ»ՊՈԱԿ</p>
---	--	--	----------------	--

7	<p><b>Անտառմշակույթների հիմնում.</b></p>	<p>Անտառմշակույթի հիմնման համար նախատեսվելու է.</p> <ul style="list-style-type: none"> <li>• Կաղնու սերմերի ցանքսով (հիմնական տեսակ) և հացենի, թխկի, կեչի, թեղի (ուղեկցող տեսակներ) խառը հիմնմամբ:</li> <li>• Սոճու անտառմշակույթներով՝ սոճու 2 և ոչ ավել 3 տարեկան փակ արմատային սերմնաբուսակներով:</li> <li>• 1 հա մակերեսից ավելի բացատներում I-IV բուսիտետներում, իսկ 1հա-ից պակաս տարածքները, որոնք լանդշաֆտային փոքր բացատներ են թողնվելու են ինքնավերականգնման:</li> <li>• Անթրոպոգեն նոսրուտներում 1հա-ից պակասը թողնվելու են ինքնավերականգնման:</li> <li>• Խրամատային եղանակով՝ 2 շարք սոճու, յուրաքանչյուր 3-րդը լայնատերևավոր ծառատեսակների բուսակ-տնկիներով տնկում՝ հրդեհների տարածումը կանխելու նպատակով:</li> <li>• Լանջերի մինչև 15° թեքություններում հողի փոսերով նախապատրաստում համեմատաբար խոշոր տնկանյութով՝ անտառային տանձենու և ինձորենու հիմնադրման համար:</li> <li>• Սերմնային և տնկարանային տնտեսությունների ստեղծում:</li> <li>• Բնական վերաճին օժանդակող միջոցառումների իրականացում</li> </ul>	<p><b>«Հայանտառ»ՊՈԱԿ</b></p>	<p><b>Անտառային կոմիտե «Հայանտառ»ՊՈԱԿ</b></p>
---	--	--	------------------------------	---



		<p>հանքայնացման եղանակով (հարթակների պատրաստում և կաղնու սերմերի ցանք):</p> <ul style="list-style-type: none"> <li>• Հանքայնացման եղանակով 0,3-0,4 լրիվության և ցածր լրիվության անտառներում մայր սաղարթի տակ բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ՝ ծառուտների լրիվության և արդյունավետության բարձրացման նպատակով:</li> </ul>		
8	<b>Անտառապաշտպանություն</b>	<p>Անտառապաշտպանական շրջանակներում նախատեսվելու են.</p> <ul style="list-style-type: none"> <li>• անտառաթուղթիական ուսումնասիրություններ (վնասատուներով և հիվանդություններով ծառուտների կամ առանձին ծառերի վարակվածության աստիճան, վնասված ծառերի պաշար) իրականացում՝ անտառի վնասատուների և հիվանդությունների կանխարգելման համար: <ul style="list-style-type: none"> <li>• Ագրոտեխնիկական խնամքի աշխատանքներ՝ անտառի վնասատուների և հիվանդությունների կանխարգելման նպատակով:</li> <li>• Սանիտարական հատումների իրականացում՝ անտառների սանիտարական վիճակի բարելավման, ինչպես նաև վնասատուների և հիվանդությունների բացասական ազդեցության հետևանքով</li> </ul> </li> </ul>	<b>«Հայանտառ»ՊՈԱԿ</b>	<b>Անտառային կոմիտե «Հայանտառ»ՊՈԱԿ</b>

